

Թիկունիք 5 սեպտեմբեր, 2005թ.

Nthus ԱՐԱՐՈՒՄ

Անկախ հայրենիք ունենալը
իրավունք լինելուց զատ և պար-
տականություն է:


Գ. Նժդեհ

«Վան» գործողության մասին նյութերը կարդացեք էջ 3-7-ում



Անշուշտ, դատավարությունը մեծ արձագանք էր ունենալու, որովհետև մենք ընկրկելու տեղ չունեինք, նույնիսկ, եթե ցահի բանտարկություն տային: Եվ որոշեցինք մեկ անգամ և հայտարարությամբ հանդես գալ և ստանձնել այդ գործողությունը՝ «Եղիա Քեշիշյան» անձնասպանական խմբակի անունով: Որոշեցինք ընդհանրապես չվիճել, թե ով ում է կրակել, ինչ է արվել... եղել է, մենք ենք արել, ճիշտ ենք արել, եկեք խոսենք պատճառի մասին: Միայն մեկ օր դեպքի մասին խոսվեց, մնացած օրերը տրվեցին մեր պաշտպանությամբ: Որոշված էր տարրեր սերունդներից մարդիկ ներկայանային դատարան, խոսեին քաղաքական տարրեր ուղղվածություն ունեցող մարդիկ և աշխարհին ապացուցեին, որ երբ խոսքը Յայկական հարցի մասին է, հայերը համախմբված են:

Վազգեն Սիսյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պետականություն՝ ազգերի լիարժեք կենսագործունեության գլխավոր նախապայման	էջ 1	
Ազատագրական պայքարի ոգին շարունակում է թևածել	էջ 2	
Վեհության և առաքելության խորհուրդը	էջ 3	Նանե Սևան
Գերազույն երազանքի առագաստին	էջ 4-5	Զեմմա Բաղդայյան
Հաստուման հավատը	էջ 6-7	Գրիգոր Զամելյան
Հարցերի հարցը	էջ 8	Տարեկ Յարությունյան
Գարեգին Նժդեհ	էջ 10	
Անկախության սերունդը	էջ 11	Սուրեն Մանուկյան
Աղրբեջանական ընտրություններ-2005	էջ 12	Յայկ Ղեմոյան
Ինչպես է Թուրքիան նախապատրաստվում հոկտեմբերի 3-ին	էջ 13	Արտակ Շաքարյան
Սփյուռք. քուլության աղբյուրից՝ զորության աղբյուր ժողովրդավարություն	էջ 14-15	Խաչատուր Ղադայյան
Ո՞ւմ, որտե՞ղ, ինչպե՞ս..	էջ 16-17	Սիմոն Կամսարական
Յայց հին և նոր հավատքը	էջ 18-19	Աննա Պետրոսյան
Սեսրոպ Մաշտոց	էջ 20-21	Գոհար Վարդումյան
Սուրբ Շուշի	էջ 22	Աշխեն Գրիգորյան
Սուրբ Շուշակար Եկեղեցի	էջ 23	Գայանե Յովսեփյան
Մատենադարանի ծեռագրական հավաքածուները	էջ 24	Արշակ Գարբիելյան
«Մշակ»	էջ 25	Լիլիթ Յարությունյան
Նուռ. մոգական ճիգ	էջ 26	Լիլիթ Եղիազարյան
Նոնենի	էջ 27	
Իմ երջանկությունը կյանքն է	էջ 28	Լիլիթ Մանուկյան
Իմ սիրու լեռներում է	էջ 29	Կարինե Մխիթարյան
«Յեռացող հիշատակներ»-ը՝ որպես ճակատագիր	էջ 30-31	Արթուր Անդրանիկյան
Պարը	էջ 32	Գագիկ Գինոսյան
Անամուռ	էջ 33	
Սկրի հաշտության պայմանագիրը	էջ 34	
Մուսա լեռան հերոսամարտի 95-ամյակը	էջ 35	Տակոր Մանջյան
Ուխտագնացություն Ամի	էջ 36	Տովիկ Մկրտչյան

ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ
«Ուխտ Արարատի»
կազմակերպության
պարբերական

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՌՈԴ
Համարի թողարկման
պատասխանատու՝
Տիգրան Փաշարեզյան

Տպագրված է «ՍՎՍԱՐԿ»
տպարանուն
Ստորագրվել է
տպագրության՝
03. 09. 2005

Խնճագործյան հասցեն՝
375023, Երևան,
Սաշտոցի 8
Հեռ. 56-71-50

OUKHT ARARATI
Official periodical of
“Oukht Ararati”
organisation

EDITORIAL BOARD
Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375023,
Yerevan, Mashtots 8
Tel. 56-71-50
E-mail:
oukhtararadi@yahoo.com

«Ուխտ Արարատի»
ամսագրից նյութեր
արտատպելիս՝ խմբում
ենք հղում կատարել:

Յարգելով հեղինակային
իրավունքը՝ ստացված
հոդվածները չենք
խնճագրում:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ

ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՑՄԱՆ

Ազգերը կարող են լիարժեքորեն զարգանալ ու գոյատևել ինքնորոշման ու անկախ պետականության գոյության պայմաններում միայն: Քաղաքակրթական նվաճումներ արձանագրած ազգերը հենց նրանք են, որոնք կարողացել են ստեղծել, պահպանել ու զարգացնել իրենց անկախ պետականությունը:

Դա ազգի պատմությունը, ըստ էության, հանուն անկախ պետականության պահպանման, վերականգնման, վերակերտման պայքարի պատմություն է: Անգամ Ավարայրի ճակատամարտը ճակատամարտ է համուն ազգային ազատ զարգացման իրավունքի:

Ստեղծագործող ազգերը ազատ պետականության մեխանիզմների ստեղծման, պահպանման, զարգացման առավել մեծ պահանջ ու ավելի մեծ խնդիր ունեն: Դժբախտաբար, մենք բավականին երկար ժամանակահատված կորցրել ենք պետականությունը, որի հետևանքով դանդաղել է մեր զարգացման բնականոն ընթացքը: Եվ, բարեբախտաբար, այդ ժամանակահատվածում Դայոց Եկեղեցին կարողացել է կատարել ազգային պետական մեխանիզմի դերը և կազմակերպել՝ մեր ազգային-ստեղծագործական կյանքն ու ընթացքը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ը մեր ազգային նոր պետականության հռչակման պատմական տարեթիվն է: Դժվար է անգամ պատկերացնել թե քանի-քանի սերունդ, քանի-քանի դար մաքարեցին իրականացնելու համար մեր նոր անկախ պետականության սրբազն երազը:

14 տարի է այդ նոր իրականության մեջ ենք ապրում: Այդ նոր իրականությունն է, սակայն, ստիպում է վերագնահատել ճշմարիտ արժեքները և այդպես առաջ ընթանալ:

Դողը, լեզուն, մշակույթը, ազգային պատկանելիությունը բավարար պայմաններ չեն իրական առաջընթացի համար, եթե չեն անրագրված ազգային մտածողությամբ, ազգային պետականությամբ:

Մեր նորաստեղծ պետականությունը, լինելով «Երիտասարդ», ունի լուրջ թերություններ, որոնց հետևանքներն են կաշառակերությունը, հովանավորչությունը, երկրի տնտեսության մենաշնորհային վիճակը, օրենսդրական ու հարկային անկատար դաշտը, իրավական ու տնտեսական անպաշտպանվածությունը, բարոյահոգեբանական ծանր վիճակը, արտա-

գաղթը, ներդրումների բացակայությունը (հատկապես՝ սփյուռքահայ կապիտալի տեսքով), անկատար ընտրություններն ու Սահմանադրությունը և այլն:

Ի՞նչ անել և ինչպես անել:

Կարծում ենք, առաջին հերթին հարկավոր է ապավինել ազգային պետական մտածողությանը, որը ուղիներ ու հնարավորություններ կրացի սրբազնությունը համար: Հարկավոր է հրաժարվել մակերեսային կարծրատիպերից, թե՝ «անկախ ենք, դրա համար էլ կախված չենք ոչ մի բանից», և կամ՝ «անկախ ենք, դրա համար էլ կախված ենք ամեն ինչից»:

Պետականակերտումը ենթադրում է պետական մտածողություն և նոտեցում: Բոլորին համար: Այստեղ ենք ապրում, այստեղ են ապրելու մեր երեխաները,

մեր սերունդները: Պատմության բառուղիներում մերը ընդ մերը բարգավաճող ու անկում ապրող հայկական գաղթավայրերը վկաչկա՝ չկելի կարևոր հանգրվան, քան հայրենիքը: Բայց այդ հայրենիքը պետք է դարձնել լավը, չասելու համար լավագույնը:

Այդ բանն անելու համար պետք է ամենուրեք ապավինել ազգայինին, հրաժարվել օտարամոլությունից, հաստատել օրենքի իշխանություն, արդարացի և գործող օրենքներ ու օրենսդրություն, մշակել ազգային Սահմանադրություն, հաստատել օրինակելի իրավական դաշտ, տնտեսական մրցակցության հավասար պայմաններ և այլն... այն պարզ նղումով ու համոզումով, որ հայր կարողանա

ինքնավստահ և ազատ ապրել ու ստեղծագործել իր հայրենիքում:

Մենք հայտնագործություններ չենք անում: Պարզապես ուղիշ ճանապարհ չկա: Պարզապես մի օր դանակը կարող է հասնել ոսկորին, այն պարզ պատճեռով, որ ինչ-որ մեկի որկորը անհագ ու անտակ է:

Մենք ծեռնարկեցինք «Ուխտ Արարատի»՝ ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալների ու ազատամարտիկների միության կազմավորումը, որպեսզի շարունակենք ծառայել մեր ժողովրդին ու հայրենիքին նոյն նվիրումով, ինչպես մի օր ճանապարհ էինք ընկել: Եվ այսօր համոզված ենք, որ պետականակերտ մտածողության ծառավորումը կարող է հրաշք գործել: Մենք պատրաստ ենք նպաստելու այդ հրաշքի կայացմանը:





ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԳԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԹԵՎԱԾԵԼ

Նորագույն զինյալ ազատագրական պայքարի նահատակների հիշատակի օրը «Մոսկվա» կինոթատրոնում

Օգոստոսի 7-ին՝ Նորագույն զինյալ ազատագրական պայքարի նահատակների օրվա կապակցությամբ, «Ուխտ Արարատի» կազմակերպության անդամներն ու համակիրները այցելեցին Եռարլուր, ծաղկների դրեցին ազատագրական պայքարի նահատակների, Արցախյան ազատամարտի հերոսների, Չորավար Անդրանիկի և Վազգեն Սարգսյանի շիրիմներին:

Նույն օրը՝ երեկոյան, «Մոսկվա» կինոթատրոնում, «Ուխտ Արարատի»՝ ԱՍԱԼՍ-ի նախկին քաղբանտարկյալների և ազատամարտիկների միությունը կազմակերպել էր «Արամ» ֆիլմի ցուցադրությունը՝ նշելու Նորագույն զինյալ ազատագրական պայքարի նահատակների հիշատակի օրը: «Արամը» նկարահանված է ազատագրական պայքարի իրադարձությունների հիմնավորական պայքարի դեմքերի ու դեպքերի:

Եփ-լեցուն դահլիճում միջոցառումը բացեց ՀՀ Վաստակավոր արտիստ Ազատ Գասպարյանը. «Մենք նշուն ենք Նորագույն զինյալ ազատագրական պայքարի 30 - ամյակը: ճիշտ է, ազատամարտիկնե-



րից շատերը այսօր չկան, բայց նրանց հիշատակը մեզ հետ է: Խևկ ապրողներից մեզ հետ են Վարուժան Կարապետյանը և իր զինակից ընկերները, որոնց էլ հրավիրում եմ բեմ»: Բեմ բարձրացան «Արամ» ֆիլմի գլխավոր դերակատար Սիմոն Արգարյանը և ԱՍԱԼՍ-ի նախկին քաղբանտարկյալներ Արա Ալեքսանդր Ենիկոնյանը, Վազգեն Սիսյանը, Յակոբ Չուլֆայանը, Վարուժան Կարապետյանը, Սիմոն Նաիրյանը: Բացակա էր Մարտիրոս Ժամկոչյանը:

Սիմոն Արգարյանն ասաց. «Ես կերտել եմ այն հավաքական կերպարը, որի ներկայացուցիչներն այսօր ինձ հետ են: Յատուկ իրադարձություն է, որի համար անչափ ուրախ եմ: Ահա թե ինչ կասեմ. իրենք են իրա-



կան Արամ-ները, իրական հերոսները: Ես ո ի հ ն հարգանք իրենց ու իրենց գործին:»

Խոսք վերցրեց Արա Ալեքսանդր Վահագինը: «Մենք ուրախ ենք, որ այսօր այստեղ ենք՝ այս բեմում, և ականատեսն՝ այս հարգանքին ու մեծարմանը, սակայն թող այն կարծիքը չկազմվի, թե միայն մենք ենք եղել պայքարի հորձանուտուում: Ես այսօր մեր պայքարի նահատակների անուններին գուշակե՛ռ ուզում եմ հիշել բոլոր այն հայտնի և անհայտ անուններն ու անձանց, ովքեր մեծ նվիրումով կրեցին ազատագրական պայքարի դրոշը, դժվարությունն ու ծանրությունը...»:

Եզրափակիչ խոսքը Վարուժան Կարապետյանին էր. «Մենք պայքարեցինք մի ժամանակահատվածում, երբ աշխարհի կողմից մոռացված էին հայն ու իր արդար դատը: Կարողացանք վերարժարծել Յայկական հարցը և հաղթանակներ ապահովել: Այսօր, սակայն, ժամանակները փոփոխվել են, և մենք կազմել ենք միություն՝ «Ուխտ Արարատի» անունով՝ շարունակելու մեր պայքարը նոր պայմաններում և

նոր միջոցներով՝ բացահայտ միջոցներով՝ գերակա համարելով մեր պետականության հաստատման, պահպանման ու հզորացման նպատակը»:

Դանիել Վարուժանի «Զոն» բանաստեղծությունը մեծ ներշնչումով արտասանեց Զիվան Սարգսյանը: Ապա ներկաների չմարդող ծափողջունների ներքո նախկին քաղբանտարկյալները իջան թեմից, և սկսվեց ֆիլմի ցուցադրությունը, որը նույնակա ընդմիջովում էր ծափահարություններով:

Ֆիլմի ավարտից հետո մեր համակիր հանդիսականները երկար ժամանակ չեն հեռանում. խնբվել են սպասարկահում և գրուցում էին, տպավորություններ կիսում, ստորագրություններ վերցնում, հիշատակի համար լուսանկարվում Սիմոն Արգարյանի և ԱՍԱԼՍ-ի նախկին քաղբանտարկյալների հետ:



Խոսք վերցրեց Արա Ալեքսանդր Վահագինը. «Մենք ուրախ ենք, որ այսօր այստեղ ենք՝ այս բեմում, և ականատեսն՝ այս հարգանքին ու մեծարմանը, սակայն թող այն կարծիքը չկազմվի, թե միայն մենք ենք եղել պայքարի հորձանուտուում: Ես այսօր մեր պայքարի նահատակների անուններին գուշակե՛ռ ուզում եմ հիշել բոլոր այն հայտնի և անհայտ անուններն ու անձանց, ովքեր մեծ նվիրումով կրեցին ազատագրական պայքարի դրոշը, դժվարությունն ու ծանրությունը...»:



Խոսք վերցրեց Արա Ալեքսանդր Վահագինը. «Մենք ուրախ ենք, որ այսօր այստեղ ենք՝ այս բեմում, և ականատեսն՝ այս հարգանքին ու մեծարմանը, սակայն թող այն կարծիքը չկազմվի, թե միայն մենք ենք եղել պայքարի հորձանուտուում: Ես այսօր մեր պայքարի նահատակների անուններին գուշակե՛ռ ուզում եմ հիշել բոլոր այն հայտնի և անհայտ անուններն ու անձանց, ովքեր մեծ նվիրումով կրեցին ազատագրական պայքարի դրոշը, դժվարությունն ու ծանրությունը...»:

Դանիել Վարուժանի «Զոն» բանաստեղծությունը մեծ ներշնչումով արտասանեց Զիվան Սարգսյանը: Ապա ներկաների չմարդող ծափողջունների ներքո նախկին քաղբանտարկյալները իջան թեմից, և սկսվեց ֆիլմի ցուցադրությունը, որը նույնակա ընդմիջովում էր ծափահարություններով:

Ֆիլմի ավարտից հետո մեր համակիր հանդիսականները երկար ժամանակ չեն հեռանում. խնբվել են սպասարկահում և գրուցում էին, տպավորություններ կիսում, ստորագրություններ վերցնում, հիշատակի համար լուսանկարվում Սիմոն Արգարյանի և ԱՍԱԼՍ-ի նախկին քաղբանտարկյալների հետ:

ՎԵՇՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ՀԱԿՈԲ ԶՈՒԼՖԱՅԻՆ

- Պարո՞ն Զուլֆայան, կիսնդրեի, որ հիշեք Ձեր վաղ երիտասարդության տարիները:

- Ծնվել եմ Բուլվարում, 1960թ. ապրիլի 24-ին: Հաճախել եմ Այնարի հայ ավետարանչական երկրորդական գիշերօրիկ-վարժարանը: Այնտեղ մնացել եմ մինչև 1977թ., որից հետո վերադարձել եմ Բեյրութ: Կարծ ժամանակ անց՝ 1980-ին մեկ տարի ապրել և աշխատել եմ Ֆրանսիայում, հետո նորից վերադարձել Բեյրութ և անդամագրվել ԱՍԱԼՍ-ին:

- Ո՞ր էր այն միջի ուժը, որ առաջնորդեց Ձեզ՝ համալրելու գաղտնի բանակի շարքերը:

- Դժվար է ասել, բայց, մինչ բանակի շարքերը համարելու, արդեն գիտեի նրա մասին: 1975-ին, երբ ստեղծվեց ԱՍԱԼՍ-ն, մենք՝ որպես Բուրջ Համուրի բնակիչներ, տեղյակ էինք գաղութի ներսում ձևավորված բանակի ու նրա գործունեության մասին: Մարդիկ անչափ գորչությամբ էին խոսում բանակի մասին, և հազվադեպ էր լինում, որը մենք մյուսին ասեր. «Արի քեզ տանեն, ծանոթացնեմ գաղտնի բանակի հետ»: ԱՍԱԼՍ-ն գործում էր ծայրագույն գաղտնիության պայմաններում: Երբ 1977-ին Այնարից եկա Բեյրութ, երկիրն արդեն քաղաքացիական պատերազմի մեջ էր և մոտավոր բաժանումներն արդեն եղել էին՝ քրիստոնեական և մուսուլմանական:

- Ինչպես ընդունեցիք Ձեր մասնակցության առաջարկությունը «Կան» գործողությանը, նախատեսված էր արդյոք փոխհյուպատուսին վիրավորելը:

- Գործողության մասնակցությունը ընդունեցիք շատ հեշտ ու պարզ: Դա այնպիսի բան էր, որ ամեն երիտասարդ անհատ, անդամագրվելով գաղտնի բանակին, մեծ առաքելություն ու վեհություն



էր գործ, որ ինքն ինքնակամ է գալիս՝ անդամագրվելու և մասնակցելու հետագա գործողություններին ու գինավարժություններին: Պատերազմի տարիներին հայկական թաղամասերում գիշերային պահակություն է անում, երբ ինձ առաջարկեցին այս գործողությունը, սիրահոժար ընդունեցի՝ առանց ճնշումի, ինչպես իմ նահատակ ու բանտարկյալ կանավոր ընկերները: Մեր գործողության խմբապետը Վազգեն Սիսյանն էր: Նախօրոք այլ ծրագիր ունենալու, որի տարբեր ծներն էինք մշակել: Փոխհյուպատուսին վիրավորելը՝ ծրագրից շեղում էր: Երբ գնացի այն սենյակը, որտեղ նա էր, թուրքերն ազդարարեցի, որ դուրս գա: Ինձ վրա կրակ քացեցին, ես էլ նույն արեցի՝ ինքնապաշտպանության համար և փոխհյուպատուսին վիրավորվեցի:

- Բանտից դուրս գալուց հետո ինչո՞ւ մեկնեցիք կանադա և ինչպես դասավորվեց Ձեր կյանքն այնտեղ:

- Յոթ տարվա կալանքից հետո, երբ ազատ արձակվեցի, Ֆրանսիան մեզ չընդունեց և, որպես ամբաստանյալի, իրավունք չուվեց իր երկիր տարածքում ապրել: Փորձեց մեզ արտաքսել. այլ եթք չունեինք: Սակայն առաջին անգամ (գաղտնի ուղղությամբ, չգիտեինք՝ ուր են ուղարկում), ինչ-որ օդանավի խնդրի պատճառով, մեզ չուղար-

կցին. օդանավակայանից հետ բերեցին: Յետ եկանք զինվորական մի տեղ, որտեղ մեզ 10-15 օր պահեցին, անհամածայնություն եղավ մեր և նրանց միջև, քանի որ մենք Լիբանանի քաղաքացի էինք, պահանջեցինք, որ մեզ այնտեղ ուղարկեն: Մեկնեցինք Լիբանան, ուր ես մնացի մոտ մեկ տարի և այդ ընթացքում անձնագրիս և երկրից դուրս գալու իրավունքի (վիզա) հարցերով էր զբաղված:

Ինչո՞ւ կանադա. Երկի ճակատագիրն էր այդպես կամենում: Եթե ոչ կանադա, ապա Խորհրդային Միություն դիմելու դեպքում չեր բացավում, որ ձերբակալվեի:

- Ի՞նչը Ձեզ բերեց հայենիք:

- 1987-ի ամռանը մեկնեցի կանադա, ուր ապրեցի ուր տարի: Այլ երկրների համեմատ, այնտեղ հեշտ էր քաղաքացիություն ստանալու, սակայն իմ պարագայում, այդպես չեղավ. Կարծ ժամանակ անց՝ իմանալով անցյալիս մասին, սկսեցին նեղություն տալ, ընդհուպ՝ մինչև հետապնդում: Անտեսելով այդ դժվարությունները՝ ամռանացացաց, տիկինս 1976-ից կանադայում հաստատված լիբանանցի հայ է: Աստծո կամոք, երկու որդի ունեցա, առաջնեկիս անունը՝ ի պատիվ մեր գործողության՝ Վան դրեցի, մյուս զավակինս է՝ Արշակ: Օվիդի հետ խնդիրներ ունենալով՝ հարցերս կարգավորելու համար շատ դժուր թակեցի: Ինձ արտաքսեցին, նորից եկա Լիբանան: Այստեղ անձնագրիս նորոգեցի: Անցել էին տարիներ, շատ բան էր փոխվել: Ինձանալով, որ ընկերներմ Վազգեն Սիսյանը, գևորգ Գյուզելյանը Հայաստանում են, եկա հայրենիք:

- Որպես «Ուխտ Արարատ» կազմակերպության նախաձեռնող խմբի անդամ՝ ի՞նչ ծրագրեր ունեք առաջիկայում:

- Մենք ամեն ինչ միասին ենք արել և, որպես Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի նախկին քաղաքանտարկյաներ, որոշեցինք մի միություն ստեղծել՝ «Ուխտ Արարատ», որի պարերականի առաջին համարը հրատարակվեց ապրիլին՝ Նվիրված Եղեռնի 90-ամյա տարելիցին և ԱՍԱԼՍ-ի հիմնադրման 30-ամյակին: Յիմա ծեռք-ծեռքի տված անելու ենք հնարավորը՝ մեր օգնությունն ու աջակցությունը տրամադրելու մեր ժողովորդին ու երկրին:

Սաղթում եմ, որ Աստված մեզ հեռու պահի պատերազմներից: Որքան երկիրը հեռու լինի պատերազմից, այնքան կայալունանա նրա վիճակը: Հայաստանին ժամանակ է պետք: Կարևոր է նաև, որ հայ երիտասարդը միշտ գտն լինի: Արցախը ազատագրված է, և հայ զինվորը պետք է հպարտ լինի, պետք է բարձր պահի հերոսների հիշատակը, քանի որ մենք մեր պատմական հողերն ենք ազատագրել: Բարենադրանք է, որ մեր ազգը ֆիզիկապես և գաղափարապես առողջ և ամուր լինի:

ՆԱՆԵ ՄԵՎԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՐԱԶՄՆՔԻ ԱՌԱՋԱՍՏԻՆ.

ՎԱԶԳԵՆ ՄԻՍԼՅԱՆ



Վերևում՝ ձախից աջ, Գևորգ Գյուղելյան, Յակոբ Զուլֆայան, ներքևում՝ Վազգեն Միսլյան:

- Պարո՞ն Միսլյան, ուզում ենք, որ Երկայացնեք Ձեր կյանքի առաջին շրջանը:

- Ծնվել եմ Լիբանանում Բեյրութ քաղաքում, այնտեղ եմ մեծացել և հաճախել՝ «Սահակյան» վարժարանը, որտեղ ել ստացել եմ նախնական կրթություն։ Վատառողջ լինելու պատճառով 1969-ից դադարել եմ վարժարան հաճախել, իսկ 2-3 տարի բուժվելուց հետո աշխատանքի մեջ մտածել:

1975-ին սկսվեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը։ Նախքան կուսակցությունների համախմբվելն ու ինքնապաշտպանություն կազմակերպելը, որոշ թաղամասերում տղաները իրենց որսորդական հրացաններով սկսել էին պաշտպանություն կազմակերպել։ Յայկական թաղամասերի ինքնապաշտպանության առաջին հոգ օրերից սկսեցի ծանրանալ գենք օգտագործելու հնարավոր ձևերին ու տեխնիկային։ 1978-ին Լիբանանի հայկական թաղամասերը ահեղ ոմբակոծության ենթարկեցին։ Բոլոր Յամուղի ռմբակոծության հենց առաջին օրը ոտքից վիրավորվեցի և տեղափոխվեցի հիվանդանոց։ Երկու ամիս հետո վերականգնվեցի ու վերադարձա դիրքեր։

1975-ից գործում էր Յայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը, շատերին նրա գոյությունը թվում էր առեղջվածային։ Սակայն որոշ կուսակցություններ ասում էին, թե նրա դեկավարներն ու նարտիկները քրդեր են կամ՝ բուրքեր (հայեր չեն)։ Անգամ կասկածում էին, որ հայերը դիմել են պայքարի՝ իրենց նպատակին հասնելու համար։

- Ինչպես եղավ, որ հայտնվեցիք ԱՍԱԼՍ-ի շարքերում։

- Յայ ազգի գինվոր լինելու պատգամը ես պապից ու հրիցու ժառանգություն եմ ստացել։ Եվ հետամուտ լինելով՝ միշտ ձգտում էի ինչ-որ բան անել այն իրագործելու համար։

Աստիճանաբար գաղտնի բանակի նկատմանը հետաքրքրությունս մեծացավ և անցա նրա շարքերը՝ որպես համակիր։

Երբ «Յայաստան» պաշտոնաթերթը սկսեց հրատարակվել ու տարածվել, հետաքրքրությունս էլ ավելի մեծացավ։ Այդ ժամանակ էլ որոշվեց, որ ես մեկ անսով պետք է մեկնեմ ռազմակայան։ Չնայած բավականին ռազմական գիտելիքներու ուժում էր բայց ռազմակայանի հոգեբանությունն ուրիշ էր։

Մեկուկես ամիս անց վերադարձա տուն՝ նոր պատճառ գտնելու, որպեսզի ընդմիշտ մտնեմ նրա շարքերը։ Այդպես էլ եղավ...

Օրերից մի օր տղաները կապվեցին ինձ հետ ու ասացին, որ շտապ պետք եմ։ Յավարվեցինք մեր կենտրոնում և, տարբեր խնդերի բաժանված, ամենքը մի կողմ զնաց։ Մեր խունքը ամենավտանգավոր դիրքերը ուղարկվեց (Լիբանանի հարավային դիրքեր)։

Այդ ժամանակ իմացա, որ արդեն կազմակերպության լիարժեք անդամ եմ։

- «Կան» գործողությունը Ձեր կյանքում։

- Ինձ դեկավարության կողմից հանձնարարվեց, որ գործողություն այտի կատարվի և ես էլ պիտի մասնակցեմ, կամ դեկավար լինեմ։ Ես մեկ շաբաթ ժամանակ խնդրեցի՝ մտածելու, արդյո՞ք կկարողանամ իրականացնել այրախի բան, թէ ոչ։ Սակայն 2-3 օր անց որոշեցի, ինչո՞ւ ոչ. առիթ է, կարելի է անել։ Եվ սկսեցինք կազմակերպել «Կան» գործողությունը։

«Կան»-ի կարևորությունն ինձ համար շատ մեծ էր, դա նույն էր, ինչ մարդ իր գերագույն երազանքը իրականացնի։ Ես և իմ ընկերները հոգեբանորեն պատրաստվեցինք և իրականացրեցինք այդ գործողությունը։

- Գաղտնի բանակում, «Կան»-ից բացի, այլ գործողությունների մասնակցել եք։


- Զգիտեն... ընդհանրապես, այս հարցադրման ժամանակ մեր բոլոր տղաների հիշողությունը դավաճանում է։

- Քիշեք Ձեր բանտարյան կյանքից։

- Յյուպատոսարանի գրավման ժամանակ վիրավորվեցի, ինձ տարան հիվանդանոց, որտեղից էլ՝ բան։ Բացի կինոնկարներում դիտելուց, առաջին անգամ էի բանտ տեսնում։ Արդեն ֆիզիկապես թույլ էի և հյուծված։ Կյանքումս առաջին անգամ անստեղ արտասվեցի։ արդեն՝ որպես գաղտնի բանակի հայտնի անդամ, Յայաստանը՝ իմ հայրենիքը, էլ չէ տեսնելու։ Առաջին ծանր հիշողությունը բանտից դա էր։ Արտասվեցի, ոչ այն բանի համար, որ 20 տարի կամ ավելի պիտի մնայի բանտում, այլ, որ հայրենիքս չպիտի տեսնեի, չպիտի ունենայի հայ տուն հայ օջախ։

Հետաքրքիր դեպքեր շատ են եղել. ծննդյանս օրն էր, երբ ֆրանսիացի բանտապահը եկավ ու տեղեկացրեց, որ պիտի հավաքվենք։ Գնացի։ Անյակում Արամ Բասմաջյանն էր։ Գրկախառնվեցինք. գործողությունից հետո առաջին անգամ էինք հանդիպում։ Սի երկու րոպե անց ներս մտավ Յակոբ Զուլֆայանը. ավելի լավ նվեր՝ ես չէի պատկերացնում։ Մտածում էի, որտե՞ղ է իհնա Գևորգ Գյուղելյանը...., մեզ շղթայակապ տարան մեկ ուրիշ բանտ, որը, մյուսի հետ համեմատած, կարծես թե հյուրանոց լիներ (գոնե մեզ համար)։ Այնտեղ անակնկալի եկանք, երբ պատահաբար միջանցքում տեսանք Գևորգին։ Այդ օրվանցից արդեն միասին էինք և մեզ մնում էր ֆրանսերեն սովորել ու պատրաստվել դատավարությանը։

Մեկուկես տարի էր անցել, երբ բանտում մեծ ծեծկոտուք եղավ, որը դիտավորյալ էր կազմակերպված՝ մեզ՝



Վազգեն Սիսյանը դստեր՝ Էլենի հետ:

հայերիս, ճնշելու համար: Թեև դատավարությունը չէր եղել, սակայն մտածում էինք, որ ցմահ ենք դատապարտվելու, ուստի, կորցնելու ոչինչ չունեինք: Չորսով մի քառասուն հոգու այնպիսի ջարդ տվեցինք, որ մեզ՝ որպես պատիժ, ուրիշ բանտ տեղափոխեցին: Երբ հետ վերադարձանք մեր նախկին կալանավայրը, մեկն ասաց, որ մեր բացակայության ընթացքում կալանավորները մեզ «ոճրագործ հայեր» են անվանել: Անմիջապես բակ իջնելով՝ հարցրեցինք, թե ովքե՞ր են եղել, սակայն ոչ ոք ձայն չհանեց: Այդ դեպքից հետո, որևէ բանտարկյալ, երբ բանտ էր մտնում, առաջին հարցն այն էր լինում, թե՝ հայ կա՞ շենքում:

- Անդրադառնանք դատավարությանը...

- Գործողությունը շատ մեծ ազդեցություն ունեցավ ֆրանսահայ համայնքի վրա: Արանց կուսակցական խտրականության հայերը հավաքվել էին մեր շուրջ. ինչո՞ւ այդ համախմբումը չծառայեցնել, որպես լավ օրինակ, երբ կարելի է մի քանի հոգով համախմբվել՝ հաղթանակի հասնելու համար:

Արձագանքներից ենթադրում էինք, որ մեծ դատավարություն է լինելու (միտինգներ, սարմասիրտ ֆրանսիացիների խիստ դրական արձագանքներ և այլն):

Անշուշտ, դատավարությունը մեծ արձագանք էր ունենալու, որովհետև մենք ընկրկելու տեղ չունեինք, նույնիսկ, եթե ցմահ բանտարկություն տային: Եվ որոշ-



Դատավճիռը նրանք այսպես ընդունեցին:

Եցինք մեկ անգամ ևս հայտարարությամբ հանդես գալ և ստանձնել այդ գործողությունը՝ «Եղիա Քեշշյան» անձնասպանական խմբակի անունով: Որոշեցինք ընդհանրապես չվիճել, թե ով ուն է կրակել, ինչ է արվել..., եղել է, մենք ենք արել, ճիշտ ենք արել, եկե՛ք խոսենք պատճառի մասին: Միայն մեկ օր դեպքի մասին խոսվեց, մնացած օրերը տրվեցին մեր պաշտպանությամբ: Որոշված էր տարբեր սերունդներից մարդիկ ներկայանային դատարան, խոսեին քաղաքական տարբեր ուղղվածություն ունեցող մարդիկ և աշխարհին ապացուցեին, որ երբ խոսքը Հայկական հարցի մասին է, հայերը համախմբված են:

Դատավարության ժամանակ շատ դեպքեր են եղել, որ հիշարժան են (նոյնիսկ դրա վերաբերյալ կարելի է գիրք գրել): Օրինակ՝ Մելինե Մանուշյանի խոսքը. «Այս նոյնը բանը ես ու անուսինս էինք անում, գերմանացիները մեզ «ահարեկիչ» համարեցին, բայց ֆրանսիական պետությունը մեզ «Ազգային հերոսի» կոչում տվեց: Այս տղաները հայ ժողովորդի համար նոյնն են, ինչ մենք՝ ֆրանսիացիների»:

Կարելի է հիշել նաև այն դեպքերը, երբ դատարանում նիստի նախագահը հայտարարեց. «Մեղադրյալ-

նե՛ր, ոտքի՛», ողջ դատարանը ոտքի կանգնեց և շփորչած ն խ ա գ ա հ ը կարծեց, թե սիսալ արտահայտություն է արել, շտկեց, որ խոսքը վերաբերում է մեղադրյալներին: Ժ ո դ ո վ ո ւ ր դ ն ա դ ա կ ե ց . «Եթե նրանք մեղավոր են, ապա մենք ել ենք մեղավոր»:

Վ ճ ի ո ր կ ա յ ա ց -վեց. Արան Բասմաճյանը դատապարտվեց 5, ես ու Յակոբը՝ 7, Գևորգը՝ 10 տարով: Վ ճ ի ո ր բ ո ղ ո ք ա ր կ ե ց ի ն ք, որի արդյունքում չորսս էլ դատապարտվեցինք 7 տարի ազատազրկման: Դատարանը մեզանից վնասի փոխառուցում պահանջեց: Մենք ել խոստացանք հատուցել, եթե բոլորը միլիոն ու կես հայերի արյան գինը հատուցեն: Եվ դահլիճից, սիմվոլիկ ժեստերով, մետաղադրամներ նետվեցին դատարանում միակ թուրքի՝ մեղադրող փոխհյուպատոսի վրա:

- Ինչպես եղավ, որ հայրենիք վերադարձաք:

- 1986-ին ազատ արձակվելուց հետո, վերադարձաք յուրութեալ և իմ առաջին փորձը եղավ թույլտվություն վերցնել՝ Հայաստան գալու համար, մի քանի անգամ մերժվեցի, վերջապես, 1990-ի ապրիլի 10-ին եկա Հայաստան՝ երեք ամսով:

Սկսվել էր Արցախի ազատագրական պայքարը, Երախում թե՛ք մարտեր էին, նահատակվել էր Մովսես Գորգիսյանը: Գրիշի անցա... սկսեցի անփորձ տղաներին սվորեցնել զենք գործածել: Յոգեպես ամուր կապվեցի հայրենիքին: Գրեթե ամեն օր, ամեն առավոտ պիտի Մասիսին նայեի, օրս նրանով սկսեի: Մնացի հայրենիքում: Ծանոթանալով հայուհու հետ՝ 1991-ին ամուսնացա, ունեմ դուստը՝ Ելեն անունով: Վերջնականապես որոշեցի ապրել հայրենիքում, որովհետև հայի համար ավելի հանգիստ տեղ, դժվար թե գտնվի:

- Խոսենք «Ուխտ Արարատի» կազմակերպության մասին:

Հատերի համար սա նոր միություն է և միաժամանակ բոլորին հայտնի է, որ այստեղ են համախմբվել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՐԳԲ-անգլերեն՝ ԱՍԱԼԱ) տղաների՝ նախկին քաղանտարկյալների ու ազատանարտիկների մեծ մասը:

Ուխտել ենք, որ Արարատին պիտի հասնենք: Որպես «Ուխտ Արարատի» կազմակերպության նախաձեռնող խմբի անդամ՝ ուզում եմ այնպիս և այնքան աշխատել, որ մեր բոլորի ազգային երազանքը՝ ուխտը, իրականացնեն. մենք մեր աչքերով տեսնենք Մասիս ազատագրված:

Սա՛ է մեր բոլորի երազանքը:

ԶԵՄՍԱ ԲԱՂԴԱԴՅԱՆ

ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՎԱՏԸ

«ՔԱՆԻ ՈՐ ՀԱՅ ԵՆՔ, ԶԵՆՔ ԿԱՐՈՂ ԶՀՊԱՐՏԱՆԱԼ»

Ֆրանսիացի կարդինալը, Օռլեանի առաջնորդ Յայր Թուշեն 1917-ին Փարիզի Մաղլեն եկեղեցում՝ քարոզի ժամանակ, ասում է. «Եթե այս պատերազմից հետո դաշնակից երկրները Յայստանին անկախություն չշնորհեն, և հայերը ուումբով պայթեցնեն Կոնստանդնուպոլիսը, ես՝ եկեղեցու սպասավորս, նրանց թողություն կտամ»:

Կարդինալը մարգարեացավ...

1981 թվական: Մեպտեմբերի 24: Փարիզ: Քսանից քսաներեք տարեկան չորս հայ երիտասարդներ գրավում են Յայստան պողոտայում գտնվող թուրքական հյուպատոսարանն ու, մոտ 60 հոգու պատանդ վերցնելով, քաղաքական պահանջներ են երկայացնում: Սկսվում է Յայստանի ազատագրության հայ գաղտնի բանակի՝ ԱՍՍԼԱ-ի «Եղիա Թեշիշյան» մարտախմբի «Կան» գործողությունը: Փոխիրաձգության ժամանակ հյուպատոսարանի թուրք հսկչ-պահակը սպանվում է: Վազգեն Սիսյանն ու Յակոր Զուլֆայանը՝ Վիրավորվում, հիվանդանոց են տեղափոխվում: Սակայն նրանց զինունկերը՝ Գևորգ Գյուղավանը, Արամ Բասմաջյանը շարունակում են մարտական գործողությունները և երկար բանակուներից հետո համաձայնվում են պատանդներին ազատ արձակել, այն պայմանով, որ իրենց հրապարակայնութեն, դրնբաց դատեն:

Փաստորեն, Սոլոյնոն Թեհելերյանի դատավարությունից 60 տարի անց Եվրոպայի խոշորագույն ճայրաքաղաքում քաղաքական դատ սկսվեց, որի ընթացքում վերարձարձվեց 1915 թվականի ցեղասպանությունը, բացահայտվեց թուրքական իշխանությունների անժամկետանց ոճիրը, և նույնիսկ հատուցման հարց հարուցվեց: Փարիզի երդվալների ատյանում (որի նիստերը մեկ շաբաթից ավելի տևեցին) ելույթ էին ունենում ոչ միայն չորս արձակագենները, նրանց մայրերը, այլև՝ հայ և թուրք պատմաբաններ, քաղաքագետներ, իրավաբաններ, ցեղասպանության վերապրողներ: Մեղադրյալները՝ Վազգեն Սիսյանը, Գևորգ Գյուղավանը, Արամ Բասմաջյանն ու Յակոր Զուլֆայանը, ըստ Էռլեյան, մեղադրողներ էին դարձել, բացատրում էին, որ իրենք ահարեկիչներ չեն, այլ արդարության մարտիկներ, քանի որ աշխարհին ցանկացել են իշեցնել դարասկզբի մեծագույն հանցագործությունը և այն, որ պատասխանատունները մինչև իհմա չեն դատապարտվել, զոհերը հատուցում չեն ստացել:

Փարիզ, 24-ը հունվարի, 1984 թ., երեքշաբթի

Արաջին նիստ

ՆԱԽԱԳԱՅ - Հիշեցնեմ, որ գործողությունը սկսվել է 1981 թվականի սեպտեմբերի 24-ին՝ իհնօշաբթի օրը՝ առավոտյան ժամը 11-ից թիւ անց և ավարտվել՝ սեպտեմբերի 25-ին՝ ուրբար օրը՝ գիշերվա մոտ ժամը 2-ին: Ամեն ինչ տեղի է ունեցել Թուրքիայի ընդհանուր հյուպատոսարանի տարածքում:

Մեղադրյալներ, ուժիք: Գյուղեյան Գևորգ, դուք ծնվել եք 1960 թվականի հունիսի 6-ին, դեպքի ժամանակ եղել եք 21 տարեկան, այժմ՝ 23 եք:

Մեղադրյալը համաձա՞յն է պատմել իր քաղաքական գործունեության, ընդհուալ ԱՍՍԼԱ-ի մարտիկ դառնալու՝ այն ամենի մասին, որ կատարել է այդ կազմակերպության շարքերում: Ես լավ եմ հասկանում, որ դժվար կիշենի խոսելը, որ ներքին գաղտնիքներ գոյություն ունեն, բայց խոսքը ԱՍՍԼԱ-ի ռազմավարությունն ու մարտավա-

րությունը բացահայտելու մասին չէ: Ի վերջո, դա մեր ատյանի խնդիրն էլ չէ: Ուղղակի ծեզ ավելի լավ հասկանալու, ճանաչելու համար (անկախ ամեն ինչից), մեզ հետաքրքրում է, մենք կցանկանայինք, որ փոքր-ինչ ծանոթացնեիք ձեր նկարագրի ձևավորմանը:

Գ. ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Ես սկսել եմ հյուպատոսարանի աշխատավորությունը՝ 1975-ից հետո, երբ դեռ պատանի էի: ԱՍՍԼԱ-ի շարքերում հյանալի քաղաքական, ռազմական դաստիարակություն եմ ստացել...

ՆԱԽԱԳԱՅ - ԱՍՍԼԱ-ի մասին ոչինչ ավելի չե՞ք կարող ասել:

Գ. ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Ոչ:

ՆԱԽԱԳԱՅ - ԱՍՍԼԱ-ն, եթե չեմ սխալվում, Յայոց ցեղասպանության ընդունումն է, ԱՍՍԼԱ-ն, միաժամանակ, տարածքային պահանջ է՝ հյուպատոսարանի վերացում: Պարուն Գյուղեյանը մոտավորապես դա է ասում:

ԻՆՍԵՐՈՐԴ ԵՐՂՎՅԱՆ - Ուրեմն, ԱՍՍԼԱ-ն իր ծրագրերն իրագործում է միմիայն ահարեկչակա՞ն միջոցներով:

ՆԱԽԱԳԱՅ - Մի փոքրիկ դիտողություն. Երևի նկատեցիք, որ ես խուսափել եմ և պետք է խուսափել «ահարեկիչ» բարն օգտագործելուց, որը չեմ սիրում: Ամեն ոք էլ մեկ ուրիշի նկատմամբ որոշակի պահի, այս կամ այն չափով, ահարեկիչ է: Այժմ կան պետության եկալվարներ, որոնք իրենց գործունեության որևէ փուլում «ահարեկիչ» են կոչվել:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵԶՅԱՆ - Շնորհակալություն:

ՆԱԽԱԳԱՅ - Սահմանափակվենք, ուրեմն «բրնարարք» անվանելով:

Գ. ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Նախ և առաջ, մենք ահարեկիչներ չենք: Աշխարհի ցանկացած ժողովուրդ իր տարածքում իրավունք ունի ազատ ապրելու: Մենք՝ հայերս, կարծում ենք, որ վայելում ենք այդ տարրական իրավունքը: Այդ համոգունով ենք մենք մարտնչում:

ՆԱԽԱԳԱՅ - Լավ, մյուս երեք նստեք: Պարուն Գյուղելյան, եթե ես ծիշտ հասկացա, դուք ցանկանում եք Ձեր և ձեր ընկերների անունից հայտարարությամբ հանդես գալ: Կարող եք սկսել:

Գ. ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - «Սկսյն հայտարարությամբ ուղղում ենք մի անգամ ևս լիովին ստանձնել 1981 թվականի սեպտեմբերի 24-ին թուրքական հյուպատոսարանը պատանդ վերցնելու պատասխանատվությունը և բացատրել պատճառները, որոնք, Դուք, պարուն նախագահ, հենց նոր ցանկացաք ինանալ: Մենք համաձայնել ենք կատարել այդ գործողությունը, քանի որ համընկնում է Յայստանի ազատագրության, Յայկական հարցի լուծնան մեր հայեցակարգին, մանավանդ ու տասնյակ տարիների խաղաղ, անարդյունք զանքերը մեզ համոզել են, որ գինված պայքարը, լուրջրան պատճեցը խորտակելու, մեր նպատակն իրագործելու միակ միջոցն է: Մենք ուշ ենք ծնվել, բայց մեզ նույնական ցեղասպանության գոր ենք համարում: Ամբողջ հայ ժողովուրդն է ցեղասպանության գոր, քանի որ Յայկական հարցը, նախ և առաջ, տարածքային հարց է: Քանի դեռ պատճառական Յայստան ազատագրված չէ, մենք մեր պայքարն ավարտված չենք համարում: Մենք՝ հայ մարտիկներս, ամբողջ մարդկության առջև երդվել ենք զինվորագրվել համազգային դատին, արդարության վերականգնանը, այժմ, այս սրահում, հավաստում ենք երդմանը հավատարիմ մնալու վճռականությունը...»:





ՆԱԽՎԳԱՅ - Ծնորհակալություն:

Նստեք: Պարոն Կազգեն Սիսյանը ծնվել է 1956 թվականի հոկտեմբերի 20-ին, Սարգիս և Մարի Սիսյանների ընտանիքում: Սիսյան, ոտքի: Կարո՞ղ եք ընդհանուր գժերով ներկայացնել ձեր ընտանիքի կյանքը՝ հայտնի դեպքերից առաջ և հետո: Այդ դեպքերի ժամանակ ի՞նչ կորուստներ եք ունեցել, ինչպես եք Լիբանանում հայտնվել:

Վ. ՍԻՍԼՅԱՆ - Ես միայն մի բան գիտեմ՝ ին ճախմիները միշտ Հայաստանում են ապրել, 1915-ի դեպքերից հետո աշխարհով մեկ ցիրուցան են եղել: Այժմ մենք ազգականներ ունենք Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Անդրկայում, ամեն տեղ: Գիտեմ նաև, որ ին մեջ հայրը ֆիդայի (եթե կարելի է այդպես թարգմանել)՝ ազատամարտիկ է եղել, հայտնի իրադարձությունների ժամանակ կրվել է հայրենակիցների կյանքը փրկելու համար: Դեռ ծնողներս հասատվել են Լիբանանում: Նրանք մինչև հինգ ամառնում են մեր պատմությունը: Ես մեծացել են Բուրջ Ջամուղում՝ հայկական թաղանասում, ընկերներիս հետ միշտ խոսում էինք ազգային հարցերի մասին:

ՆԱԽՎԳԱՅ - Բեյրութի հայ համայնքը անցյալի նշանակալի իրադարձություններին հաջա՞ն էր անդրադարձում:

Վ. ՍԻՍԼՅԱՆ - Մենք ամեն տարի ապրիլի 24-ը նշում ենք ցույցերով, հանրահավաքներով, բայց ոչ թե միայն ցեղասպանությունը ոգեկոչելու, այլ նաև թուրքերի բռնազաված հողերը պահանջելու համար: Մենք հենց այդ տարածքներն ազատագրելու համար ենք զենք վեցցուել:

ՆԱԽՎԳԱՅ - Ծնորհակալություն:

Հակոբ Զուլֆայան, ծնվել է 1960 թվականի ապրիլի 24-ին, Քուվեյթում: Երեք եղբայր ունի՝ մեկը՝ Բեյրութում, երկուսը՝ Փարիզում:

Յ. ԶՈՒԼՖԱՅԱՆ -- Այո՛, ես ծնվել եմ Քուվեյթում և երեք տարեկան եմ եղել, ավտովքարից մահացել է հայրս, որից հետո մեր ընտանիքը տեղափոխվել է Բեյրութ:

ՆԱԽՎԳԱՅ - (Թերթում է դատական գործը) - Ենիշտ է, Բեյրութում, 1970-ին մահանում է ձեր մայրը: Որբանալուց հետո ի՞նչ եք արել, ինչո՞վ եք զբաղվել:

Յ. ԶՈՒԼՖԱՅԱՆ - Ինձ տեղափոխել են մի դպրոց-որբանոցում, որը գտնվում է Այնարում: Ես այնտեղ եմ ստացել իմ տարրական և միջնակարգ կրթության մի մասը: Այդ տարիներին էլ հետաքրքրվել եմ հայ ժողովրդի պատմությանը: Պատիս շատ քիչ եմ տեսել, բայց նա ինձ պատմել է, թե ինչպես է կոտորվել մեր հարազատների մեջ մասը: Ողջ մնացածներին էլ թուրքերը աքսորել են, որպեսզի մեր հողերը հափշտակեն:

ՆԱԽՎԳԱՅ - Ինչպես եք զինվորագրվել ԱՍԱԼԱ-ին:

Յ. ԶՈՒԼՖԱՅԱՆ - Իմ սեփական նախաձեռնությամբ: Ազգակը Բիկֆայայում եղենի զոհերի հուշարձանի ռմբահարումը դարձավ, որը կատարվեց 1973 թվականին: Այդ կորողը հայ ճարտարապետները կառուցել էին՝ ի հիշատակ 1915-ին նահատակված մեկ ու կես միլիոն հայերի: Բացի դրանց, լիբանանյան պատերազմի ընթացքում բազմաթիվ հայ երիտասարդների առևանգում, դիակներն էին հարազատներին վերադարձնում:

ՆԱԽՎԳԱՅ - Ովքե՞՞ր էին առևանգում:

ՏԻԿԻՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ - Նախընտրում եմ ասել՝ «օտար ուժերը»:

ՆԱԽՎԳԱՅ - Ծնորհակալություն:

Համեցեք, տիկին Բասմաջյան:

ՏԻԿԻՆ ԲԱՍՍԱՋՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Ես Արամ

Բասմաջյանի մայրն եմ, ապրում եմ Բեյրութում:

ՊԱՇՏՈԱՆ ՂԵՎԵԶՅԱՆ - Ձեր ընտանիքում խոսո՞ւմ են ցեղասպանության մասին: Հաճա՞՞ն են խոսում: Ինչո՞ւ:

ՏԻԿԻՆ ԲԱՍՍԱՋՅԱՆ - Իհարկե, խոսում են, քանի որ մեր մեջ հայրիկն ապրեց 101 տարի, իսկ ամուսինս հրաշքով է փրկվել, կրած զրկանքների պատճառով յոթ տարի անդամալույթ է եղել:

ՊԱՇՏՈԱՆ ՂԵՎԵԶՅԱՆ - Հետաքրքիր է՝ ի՞նչ ապրում ենք ունեցել տիկին Բասմաջյանը, ի՞նչ ապրում ենք ունեցել բուրջ Ջամուղի հայերը, երբ ինացել են Փարիզի դեպքերի մասին:

ՏԻԿԻՆ ԲԱՍՍԱՋՅԱՆ - Քանի որ հայ ենք, չենք կարող չիպարտանալ: Ուզում են ճշտել, որ տեղի ունեցածն ինձ համար բռնություն չէ, դրա համար էլ ամոթալի չէ: Գործողությունը մեր դատի համար է կատարվել, մենք պիտի ծափողունենք:

ՊԱՇՏՈԱՆ ԱՍԱԼԱՅԱՆ (Թարգմանչին) - Մի պարբերություն բաց բողեցիք: Տիկինն ասաց՝ «Մենք մեր հայրենիքն ենք տեղում, թափառական կյանք ենք վարում»:

ՏԻԿԻՆ ԲԱՍՍԱՋՅԱՆ - Այո՛, քանի որ բոլոր սփյուռքահայերն են թափառական ու հայրենազուրկ են, կարծում եմ պիտի մեզ ննան մտածեն, հպարտ լինեն...

Դատաքննությունը տևում է մեկ շաբաթ, որից հետո, երբ ատյանի նախագահը վճիռը հրապարակելու համար մեղադրյալներին խնդրում է կանգնել, ոտքի են ելում դատասրահի բոլոր հայերը: Չորս մարտիկների պայքարը յուրաքանչյուրը համարում է իրենը: «Կան» գործողության նասնակիցներն, ի վերջո, հասան իրենց նպատակին: Համաշխարհային մամուլի վկայությամբ՝ «Հայկական հարցը կրկին միջազգային ասպարեզ ելավ», «Սփյուռքի օտարամետ հայությունը վերադարձավ իր ինքնությանը՝ ազգային արմատներին»: Ոմանք այնքան հայացան, որ խտացրին ԱՍԱԼԱ-ի շարքերը: «Եղիա Քեշիշյան» մարտախմբի անդամները, ճիշտ է, ակնկալվածից ծանր պատիժ ստացան՝ յոթական տարվա բանտարգելության դատապարտվեցին, բայց ցուցանատներն ու միջնամատները լայն բացած, վեր պարզած դուրս եկան դատարանի դահլիճից:

Իսկ ի՞նչ կերպ դասավորվեց հայ ազատամարտիկների հետագա կյանքը:

Կրամ Բասմաջյանը բանտարգելության վերջին տարում, բանտախցում կախեց իրեն (չնայած երկու անգամ ընկերները կանխել էին նրա ննան փորձերը): Այժմ նա հանգչում է Պեր-Լաշեզի գերեզմանոցում Զորավար Անդրանիկի մահարձանից ոչ հեռու:

Գևորգ Գյուղելյանը Հայրենիք վերադառնալուց, իր իսկ կազմավորած «Մեծն Մուրադ» ջոկատով Արցախի ազատամարտիկ մասնակցելուց հետո, այժմ մեկնել է Միացյալ Նահանգներ, բազմանդամ ընտանիքի ապրուստն է հոգում:

Կազեն Սիսյանն ու Հակոբ Զուլֆայանը Երևանում են, նպաստում են Յայաստանի անկախ պետականությանը:

Իրավացի է ֆրանսահայ հոգեվերլութող ժիլ Լուսակը. «Եղասապանությունից չեն բուժվում, յուրաքանչյուրը յուրովի է արտահայտում իր կորուստը, վիշտն ու վրեժը»:

Մի ավելացում միայն՝ ցեղասպանությունից, անենայն հավանականությամբ, բուժվում է միայն այն ժողովուրդը, որ հատուցման է հասնում:



ՀՅՈՒՊԱՏՈՒՍԱՐԱՄՈՒՄ

ՀԱՐՑԵՐԻ ՀԱՐՑԸ



Զախից աջ՝ Յակոբ Զուլֆայան, Գևորգ Գյուղելյան, Արամ Բասմաջյան:


Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, մենք՝ ընտանիքով, գնում ենք Շիծեռնակաբերդի հուշահամալիր՝ մեր սրբազն պարտօն կատարելու 1886-1915թթ. անմեղ զոհերի հիշատակը հարգելու:

Ինչպես բոլոր հայ ընտանիքները, այնպես էլ իմ ընտանիքը ունի ցեղասպանության զոհեր: Այդ մասին ինձ պատմել է տատիկս, թե ինչպես 60 անձից բաղկացած ընտանիքից մազապուրծ են եղել երեքը միայն:

Թուրքերի դեմ կենաց մահու կրիվ են մղել հազարավոր հայ երիտասարդներ, որոնց երեխան գենքն էր, իսկ բարձր՝ քար: Այդ քաջերից էին Գևորգ Զառշար, Աղբյուր Սերոբ, Դժոխվ Յայորը, Արաբոն, Սոսէ մայրիկը, Զորավար Անդրանիկը և շատ-շատ ուրիշներ, որոնք, անկանած, արժանի էին հիշատակության:

Դեռևս 1932թ. ավստրիացի մեծ գորո Անատոլ Ֆրանսը ասել է. «Յայերի դատը մարդկության դատն է»:

2003-ին երևանյան մի կրպակից գնեցի «Վասն հայության» շաբաթաթերթը, որտեղ ինձ համար բացվեցին մի շարք գաղտնիքներ: Ես հասկացա, որ ASALA-ն (Armenian Secret Army for the Liberation of Armenia) նույն ՀԱՌԳԲ-ն է, որը նշանակում է Յայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ: Այդ նույն թերթից ինչպես թե ինչպես ծերունի հերոս Գուրգեն Յանիկյանը



Նկարում՝ աջից Սամսոն Խաչատրյանն է:

հայ վրիժառուի կողմից գնդակահարված, 1943թ. Թուրքիային հանձնված Թալեաթի դիմակը 1981թ. մարտի 15-ին ամենամեծ պատիվներով հողին էր հանձնվել Ստամբուլի ազգային հերոսների դամբարանուն: Դիմացի տրիբունայում գտնվող մի խումբ հայեր սկսեցին վանկարկել «ASALA-ASALA»:

Ու հանկարծ թուրքերը լռեցին: Մեկ ակնթարք պահանջվեց հայ բռնցքամարտիկից, որ նրա ուժգին հարվածից Այկաչը հայտնվի ունգի հատակին: Տիրեց լռություն ու լռության մեջ հայերենով հնչեց՝ «Կեցց՛ Սամսոնը, կեցց՛ Յայաստանը» և հետո նույնը կրկնվեց թուրքերենով:

գենք վերցրեց և գնդակահարեց երկու թուրք դիվանագետների. նրան հետևեցին սփյուռքահայ երիտասարդները և ստեղծեցին ASALA-ն:

Ներկա օրերում անշափ շատ է խոսվում «ահաբեկչության» մասին, սակայն այս պայքարը «ահաբեկչություն» չէ, այլ զինյալ ազատագրական պայքար՝ հանուն հայ ժողովրդի իրավունքների վերականգնման և հայկական հողերի ազատագրման:

Նույն թերթում կարողում են.

«1981թ. սեպտեմբերի 24-ին ժամը 11:15-ին, Ֆրանսիայի բոլորական հյուպատոսարանից աշխարհով մեկ տարածվեց կարճ հաղորդագրություն. ««Վան» գործողությունը իրականացվեց. դեսպանատունը գրավված է»: Յայտնի էին «ահաբեկչները»՝ Վազգեն Սիսյան, Գևորգ Գյուղելյան, Յակոբ Զուլֆայան և Արամ Բասմաջյան: Բոլորի շուրջերին Յայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ՀԱՌԳԲ կամ ASALA) անվանումն էր: «Վանը» այս մարտավարության առաջին փորձն էր և հաղթանակով պակվեց:

Նման շատ ու շատ գործողություններն էին նաև, որ ամբողջ աշխարհում վեր խոյացավ Յայկական հարցը... Յայերիս համար՝ հարցերի հարցը...

Սրբանից հետո 1988թ. սկսվեց հայկական ազատագրական պայքարի երկրորդ փուլը՝ Արցախյան շարժումը, որը ծնեց մեր օրերի հազարավոր հերոսներ: Մեր բոլորի աչքի առաջ հերոսացան շատերը. արդյունքում ունենք ազատագրված Արցախ աշխարհ: Այնպես որ, հայկական հարցը եղել է, կա՛ ու կլինի՛, մինչ հաղթական ավարտ:

«Այն ազգը, որ չի ուզում մեռնել, երբեք չի մեռնի», - ասել է Անատոլ Ֆրանսը:

**ՏԱԹԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
10-րդ դասարան**

ԲՈՈՒՆՑՔՎԱԾ ՈԳԻ

1985թ. Բուդապեշտ: Բռնցքամարտի Եվրոպայի առաջնության կիսաեզրափակիչում հանդիպում են հայ բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրյանը և թուրք Այկաչը:

Տրիբունաներում գտնվող իր մեծաքանակ հայրենակիցների աջակցությունից ոգևորված՝ Այկաչը դիմում էր բուռն գրոհների: Մոլեգնած թուրք հանդիսականը, ժամանակ առ ժամանակ, բացականչում էր. «Թալեաթ փաշա, Թալեաթ փաշա»:

Եղենի 70-րդ տարելիցը նշող ժողովորի համար հայ ժողովորի դահճի անունը նշելը պատահական չէր: Բեռլինում, 1921թ.,

հայ վրիժառուի կողմից գնդակահարված, 1943թ. Թուրքիային հանձնված Թալեաթի դիմակը 1981թ. մարտի

15-ին ամենամեծ պատիվներով հողին էր հանձնվել Ստամբուլի ազգային հերոսների դամբարանուն: Դիմացի

տրիբունայում գտնվող մի խումբ հայեր սկսեցին վանկարկել «ASALA-ASALA»:

Ու հանկարծ թուրքերը լռեցին: Մեկ ակնթարք պահանջվեց հայ բռնցքամարտիկից, որ նրա ուժգին հար-

վածից Այկաչը հայտնվի ունգի հատակին: Տիրեց լռություն ու լռության մեջ հայերենով հնչեց՝ «Կեցց՛ Սամ-

սոնը, կեցց՛ Յայաստանը» և հետո նույնը կրկնվեց թուրքերենով:

ՀԱԿՈԲ ՄԱՆԶՅԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՆՔՍԱԳԱՇԵԴՊԱՍԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ,
1979-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ, ԶՈՂՎԱՅ ՀԱՅԳԲ-Ի (ASALA)
ՄԱՐՏԻԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԻՐՆԵՐ



ՈԱՖԻԻ ՊԱԼՅԱՆ

1963-1979թթ.: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:



ԶԱՎԵՆ ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

1963-1979թթ.: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԵՅԱՆ

1940-1979թթ.: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:



ԶՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1954-1979թթ.: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:



ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՍՈՒՆՅԱՆ

1957-1979թթ.: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:



ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՇՎ

**Փառք այն ոգիներին, որոնք
լսեցին ժամանակի, պատմութեան եւ
իրենց ազգի ծայնը ու գործի ասպարեզ իջան...**



Բանտարկեալնե՞րը...
Ովքե՞ր են այդ բան-
տուած ոգիները:

Եթէ այդ հարցը առա-
ջարկենք ներմակ Զարին
կամ Կարմիր Սուլթանին,
նրանք «աւազակ» եւ
«մարդասպան» անուննե-
րով կը մկրտեն նրանց:
Այն, նրանք, բանտարկե-
ալները, Ազատութեան ա-
ազակներն են, որոնք ու-
ղեցին Ազատութիւն եւ Ար-
դարութիւն գողանալ
իրենց իրատանջ Ազգի
համար:

Նրանք յանդգնեցան փշրել Յայու ձեռքն ու ոտքը կաշ-
կանդող բռնութեան շղթաները:

Նրանք, Յայու ազատութեան ասպետները, ցոյց տուե-
ցին բռնակալներին, թէ Յայը այլևս արցունքի գետեր չէ
թափում, այլ՝ բռղոքում է, որի ծայնից դողում են տիրան-
ները իրանց շիրմների խորքերում, ցոյց տուեցին, թէ Յա-
յը այլևս չէ բախում, այլ փշրում է Ազատութեան դար-
պանները:

Իր ճակատագրի դարբինն է ամեն մի ժողովուրդ: Վաղ
թէ ուշ, նա դառնում է այն, ինչ որ ուզում էր լինել այսօր:

Այսօրվա նրա իրեալը՝ դա միաժամանակ և մարդար-
ացնում է և խոստումն է այն բանի, ինչ որ վերջիվերջո պի-
տի դառնա նա:

Անհատ, խմբակցություն, ժողովուրդ՝ հոգեբանորեն

այլ բան չեն այդ բոլորը, քան իրենց իդեալի ստեղծագոր-
ծությունը:

Արիությունն է ոստայնանկում ազգերի անկախության
ու հզորության դրոշը: Անարիությունը՝ պատրանքն ազգե-
րի:

Ազգերն ունեցել են, ունեն և պիտի ունենան իրենց
արժանի ճակատագիրը: Արի և հայրենապաշտ, որ ասել
է հզոր, - ահա՝ անկախության արժանի ժողովուրդը:

Քեզնից զատ - խրատում է պատմությունը – ոչ ոք չի
կարող բարեփոխել քո դրությունը:

Ինքնափրկություն - ահա՝ պատմության թելադրանքը:

Մի ժողովորդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն
հայրենիքը դառնալ:

Անկախ հայրենիք ունենալը իրավունք լինելուց զատ
և պարտականություն է:

Թաղաքական ազատությունը ծնունդ է բարոյական
ազատության:

Ազատության նախապայմանը – ինքնատիրապետումն
է, ինքնահաղթահարումը, իր տկարությանց հաղթահա-
րումը:

Ճշմարիտ ազատությունը սկսվում է բարոյական վե-
րանորդնամբ, վերածնունդով:

Ազատությունը չի առնվում, այն սովորում են:

Որքան վսեմ է մի ժողովորդի հասկացությունը հայրե-
նիքի մասին, այնքան զորավոր է նրա երկիրը, նրա հայ-
րենասիրությունը:

«ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒԽ» ԽՈՐԱԳՈՐՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈ- ՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

- Սուրբ թվականի հոկտեմբերի 6-9-ը, Յայու գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարություն-
ների շրջանակում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Յայու կաթողի-
կոսի բարձր հովանավորությամբ, անցկացվելու է «Յա-
յերեն Աստվածաշուխ» խորագորվ միջազգային գիտա-
ժողով,- հայտնեց Մայր Աթոռ Էջմիածնի միաբան Ս. Վա-
հան վարդապետ Յովհաննիսյանը:

Սուրբ Գիրքը մեծ տեղ է գրավում Յայու եկեղեցու ծե-
սում և մատենագրության մեջ: Այն եղել է աստվածա-
բանների, մատենագիրների, ծիսագետների, մանրան-
կարիչների և երաժիշտների ներշնչման աղբյուր:

Մայր Աթոռը սիրով հրավիրում է Աստվածաշնչի հայե-
րեն թարգմանությամբ ու մեկնաբանություններով գրադ-
վող և հետաքրքրվող գիտնականներին՝ մասնակցելու
կազմակերպվելիք գիտաժողովին:



ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ



Ամառվա
վերջին ամի-
սը յայս-
տ ա ն ո ւ մ
ա վ ա ն դ ա-
բար «Երի-
տասարդա-
կան է»: Ավե-
լի տարեց
ք ա ղ ա ք ա -

կան գործիչները հիմնականում գնում են հանգստանա-
լու, գիտակցելով, որ ոչ մի հնարավորություն չունեն մր-
ցակցելու երկրի բնակչությանը հուզող մեկ այլ երևոյ-
թի՝ բուհական ընդունելության քննությունների հետ: Այս
ժամանակահատվածում ամենազդեցիկ հրապարա-
կային գործիչներն են դաշնում կրթության և գիտության
նախարարն ու քննական առարկայական համձնաժո-
ղովների նախագահները: Տեղի է ունենում երիտասարդ-
ների նոր սերնդի ընտրություն, որը պետք է համարի
բնակչության առավել ակտիվ, շարժուն և գործունյա-
խավը՝ ուսանողությունը:

Բարձրագույն կրթությունն իր հետ բերում է ոչ միայն
գրավոր ճշակույթին պասիվ հաղորդակից լինելու հնա-
րավորություն, այլ նաև թույլ է տալիս այն գործնակա-
նում օգտագործել՝ ինքնուրույն և քննադատաբար ընտ-
ուել տեղեկատվության աղբյունները, հրապարակայնո-
ուն հայտնել սեփական կարծիքը, բանավիճել և հնտե-
լեկուուալ հավասարություն գգալ նույնիսկ քաղաքա-
կան գործիչների հետ: Այս հատկանիշը հետագայում
դաշնում է այն հիմքը, որը թույլ է տալիս մասնաբաժն
պահանջել հարստության և իշխանության վերաբաշխ-
ման գործում: Սակայն, միայն այսքանով չի սահմանա-
փակվում երիտասարդության նկատմամբ ուշադրու-
թյունը. օգոստոսը բազմաթիվ ճամբարների, բանակում-
ների, համաժողովների և համահայկական այլ միջոցա-
ռումների ամիս է: Բազմաթիվ երիտասարդների հան-
գիստը կազմակերպելուց զատ, փորձ է արվում գաղա-
փարական հիմնավորում տալ այդ (թվում է, թե անմեղ
երևոյթին) հանգստին: Պատահական չէ, որ, օրինակ,
արդեն ավանդական դարձած Համահայկական երիտա-
սարդական և ուսանողական «Բագե» փառատոնը մշ-
տապես իրենց մասնակցությամբ պատվում են երկրի
ամենաբարձրաստիճան պաշտոնյաները, ընդհուպ՝
մինչև երկրի նախագահը:

Երիտասարդության դերի կարևորումը նոր երևոյթ
չէ: Դեռ խորհրդային ժամանակաշրջանի պիոներական
և կոմերիտական կազմակերպությունների ցանցերի գո-
յությունը կոչված էր կառավարելի դարձնել այդ հսկա-
յական զանգվածը և փորձել նոր ներուժը օգտագործել
պետության և հասարակության համար ամենաօգտա-
կար (ինչպես դա ընկալում էին կառավարող շրջաննե-
րը) ձևով:

«Սպառնալիքը» հասկանալի է. երիտասարդությունն
ունի մի շարք «վտանգավոր» հատկանիշներ: Այն ամե-
նաշարժուն, ամենաակտիվ տարիքային խավն է: Նրան
բնորոշ են՝ ծայրահեղ գործողությունների հակածու-

թյուն, կյանքի ինաստի փնտրություն և ավելի բարձր կար-
գավիճակի ու ճանաչման հասնելու ձգտում:

Երիտասարդությունը նաև խոր հիմաքափություն է
ապրում չիրականացած սպասումներից և ամենաշուտն
է ընկնում ազդեցության տակ և այդ պատճառով հնա-
րավոր է նրան ուղղորդել որոշակի գործողությունների,
ինչպես նաև՝ ոգեշնչել նոր հավատով:

Վերջին շրջանում այս «սպառնալիքը» ստացել է իր
մարմնավորումը «գունավոր հեղափոխությունների»
տեսքով, որոնց ընթացքում երիտասարդության դերը
հսկայական է առաջնային խնդերի ձևավորման գոր-
ծում: Վրացական «Քմարա», սերբական «Օտպոր» և
ուկրաինական «Պորա» երիտասարդական կազմակեր-
պություններն այն ավանգարդներն էին, որոնց ձեռքե-
րով, «լավ փաթեթավորված» բողոքի ալիքի միջոցով,
առաջին հարվածներն էին հասցում կառավարող վար-
չակարգերին, ինչը հաջող հեղափոխությունների հիմ-
նական գրավականներից մեկն է: Հայաստանում նման
շարժում թվում էր, թե ձևավորվում է 2004թ. ապրիլ-մա-
յիս ամիսներին, երբ երիտասարդական մի շարք կազ-
մակերպություններ մի քանի միջոցառումներ նախա-
ձեռնեցին, սակայն շարժումը չծավալվեց և այն նորից
իր տեղը զիցեց այս դաշտում ավելի ամուր հիմքեր ու-
նեցող կուսակցականացված երիտասարդությանը: Բուլ-
երի ուսխորհուրդները և համաերիտասարդական կա-
ռուցեցների խորհուրդները հաճախ վերածվում են կու-
սակցությունների երիտրեների պայքարի թատերաբեմի,
որին ներգրավված են երիտասարդների մի նեղ շրջա-
նակ, որը դրանով պապահովում է սեփական կարիքերան,
իրատես է և գլուխն առանձնապես չի ծանրացնում գա-
ղափարական հարցերով: Այս երիտասարդությունը
փորձում է դաշնալ ապագա քաղաքական էլիտան, որը
և իր հետևի կտանի հասակակիցներին: Ընդ որում՝
նրանց հնարավորությունները բավականին մեծ են, եթե
հաշվի առնենք սպասվող սերնդափոխությունը:

2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահա-
կան ընտրություններին առաջին անգամ ընտրություն
են կատարելու այն երիտասարդները, ովքեր իրենց գի-
տակից ամբողջ կյանքն ապրել են անկախ Հայաստա-
նում:

ՍՈՒՐԵՆ ՄԱՍԻՄԻԿԱՆ Պատմական գիտությունների թեկնածու





ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2005 ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ

Յուլիորիհնակ օրինաչափություն է դարձել Ադրբեջանում նախընտրական պայքարի և քաղաքական հակամարտությունների ժամանակ «հայկական խաղաքարտի» կիրառումը սև քարոզչության տեսքով։ Դատելով 2005թ. նոյեմբերի սկզբներին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախընտրական պայքարի ժամանակ կիրառվող, այսպես կոչված, «կերտուտ տեխնոլոգիաներից» և այլ քարոզչաեղանակներից՝ հայկական գործոնը այս անգամ ևս շարունակելու է տիրապետող մնալ։

Ըստ որում՝ հատկանշական է, որ հայկական ծագման, կամ հայերի հետ համագործակցության մեղադրանքներն օգտագործվում են թե՝ ադրբեջանական իշխանությունների, թե՝ ընդդիմության կողմից։ Ադրբեջանական քաղաքական պայքարին, այսպիսով, հատուկ է դարձել եթիկ կամ ազգային պատկանելության հարցի սրացումը՝ այն օգտագործելով որպես վստահելի քարոզչաեղանակ։

2005թ. ընտրությունները, թեև կայանալու են նոյեմբեր ամսին, սակայն արդեն մի քանի օրինակներ վկայում են նախընտրական պայքարում հակահայկականության տիրապետող դիրքերի մասին։ Անդրադառնանք դրանցից մի քանիսին։

Գարնանը ադրբեջանական հասարակությանը ցնցեց հայտնի լրագրող Էլմար Շուտեյնովի սպանության լուրը, որը վերլուծաբանները որակեցին՝ որպես քաղաքական սպանություն՝ այն կապելով սպասվելիք ընտրությունների հետ։ Սպանությունից մի քանի օր անց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը սպանված լրագրողի հոր հետ հանդիպման ժամանակ շիապաղեց արձանագործել, որ է։ Շուտեյնովի սպանությունը հայկական լորիի ծեռքի գործն է։

Որպես կանոն՝ Ադրբեջանում ցանկացած աղմկահարուց սպանություն անցկացվում է «հայկական ֆիլտրի» միջով՝ փորձելով դրանցում, նախևառաջ, գտնել հայկական հետք։

Օգոստոսին ադրբեջանական հանրությանը հրամ-

վեց ևս մի աղմկահարույց «բացահայտում»։ այս անգամ ընդդիմադիր «Ազգային ճակատ կուսակցության» երիտասարդական թիվ առաջնորդ Ռուսան Բաշարլիի և իր հայկական հատուկ ծառայությունների համագործակցության արդյունքում՝ Ադրբեջանում 2.000 դոլարանոց հեղափոխություն իրականացնելու էժանագին մոնտաժի տեսքով։ Ընդդիմությանը վարկարեկելու այս եղանակը, լինելով փորձվածներից ամենավստահելին, այս անգամ իրականացնան եղանակի աղաղակող փնդիության աստիճանով, Ադրբեջանում շատերի համար այնքան էլ համոզիչ չքվաց։ Իսկ նոյն կուսակցության առաջնորդ Ալի Քերիմլիին, որին Ադրբեջանում վաղուց «հայկական լրտեսի» պիտակավորում են տվել, հայտնվեց նոր մեղադրանքի առջև՝ այս անգամ հայկական լրատվամիջոցներին հարցազրուց տալու համար։



Ի հավելումն վերոհիշյալ փաստերի, ադրբեջանական լրատվամիջոցներով պարբերաբար հաղորդագրությունները են մատուցվում հայկական զինուժի կողմից հրադադարի խախտնան դեպքերի մասին, ինչն, անշուշտ, կոչված է շեղել ադրբեջանական հասարակայքության կողմից սպանություն երկրությունը կուտանքի կողմից հայտնախնդիրներից։ Իսկ որ այդ հիմնախնդիրները լուրջ վտանգ են պարունակում, թեկուցք հավանական հեղաշրջման տեսքով, կասկածի տեղիք չի տալիս։ Բացառված չէ, որ 2005թ. նոյեմբերյան ընտրություններն ավելի արյունալի սցենարով ընթանան, քան նախորդ տարիների ընտրությունները։

Ընտրությունների ժամկետի մոտենալուն համընթաց ադրբեջանական իշխանություններն ամեն կերպ փորձելու են, որպես լրացուցիչ շեղող հանգամանք, կիրառել հակահայկականության գործոնը՝ ընդդիմությանը վարկարեկելու և քաղաքական լրացուցիչ միավորներ շահելու համար։

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԱԼԻԵՎԻ ԿՆՈՉ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ ԵՆ ԱԴՐԵԶԱՆԻ ՀՐԵԱՆԵՐԸ

Թուրքական DHA գործակալությանը հայտնի է դարձել, որ նոյեմբերի 6-ին, Ադրբեջանում տեղի ունենալիք խորհրդարանական ընտրություններում պատգամավոր ընտրվելու համար այդ երկրի նախագահ Իլհամ Ալիևի կնոջ՝ Սեհրիբան Ալիևայի թեկնածությունն առաջադրել է Ադրբեջանի հրեական համայնքը։

Ըստ գործակալության, Մ. Ալիևայի թեկնածու առաջադրվելու որոշման մեջ նշված է, որ դրանում մեծ ազդեցություն է ունեցել Ադրբեջանի Շուրա քաղաքի «Կըրմըզը Կասարա» (Կարմիր ավան) ավանում բնակվող և իրեն լեռնային հրեաներ կոչող համայնքը։ Համայնքի կողմից նախագահ Ալիևին հղված նամակում ասվում է. «Խնդրում ենք, եթե հնարավոր է, թող Զեր կինը մեր քաղաքից, իսկ եթե ոչ, ապա մի այլ վայրից պատգամավոր ընտրվի։» Եվ Մ. Ալիևան թեկնածու է առաջադրվել Բաքվի Ազգաբեկովի տարածաշրջանից, հայտնել է վերոնշյալ գործակալությունը։



ԻՆՉՊԵ՞Ս Է ԹՈՒՐՔԻԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ

Յոկտեմբերի 3-ին սկսվելիք Թուրքիա-Եվրոպիային լիիրավ անդամակցության բանակցությունների նախապատրաստման գործընթացում Անկարայի անհրաժեշտ քայլերից են հարևան երկրների հետ հարաբերությունների բարելավման փորձերը: Այս առումով ուշագրավ են Թուրքիայի հարաբերությունները Յունաստանի ու Հայաստանի հետ:

Երկու ամիս առաջ Անկարան այդ ուղղությամբ մի կարևոր քայլ կատարեց: Իուլիսի 3-ին՝ թուրք-հունական սահմանի վրա, տեղի ունեցավ նոր զազատարի հիմնան արարողություն: Նոր գազատարը միացնելու է Թուրքիայի ու Յունաստանի գազաբաշխիչ համկարգերը, իսկ այնուհետև՝ կազմելու Հարավային Եվրոպայի զազային համակարգի բաղկացուցիչ մասը: Այն կլինի կասայան, կովկասյան և մերձա-վլուարկեյան տարածաշրջաններից դեպի Եվրոպայի կենտրոն ուղղվող զազատարի շղթայի կարևոր օդականությունը: Հայածայն նախագծի այն հանձնվելու է շահագործման 2007թ. սկզբին: Առաջին փուլում բաղկանացն երկրները ծրագրվում է տեղափոխել 500 նկան խորանարդ մետր զագ, իսկ 15 տարի հետո նրա հզորությունը կիսացվի մինչև 11,5 մլրդ խորանարդ մետր: Ռուսական մի շարք ԶԼՄ-ներ հույս են հայտնել, որ այդ ծավակի նշանակալի մասը կազմի Սև ծովի հատակով անցկացված «Երկնագույն հոսք» խողովակաշարով Թուրքիա ներմուծվող ռուսական գազը: Թուրք-հունական զազատարի բացման արարողության ժամանակ հայտարարվեց Յունաստանի վարչապետ Կոնստանտին Կարամանի հայտ կատարելիք առաջիկա այցի մասին: Նա կլինի առաջին հույն վարչապետը, որ վերջին 45 տարիների ընթացքում կայցելի Թուրքիա:

Առավել խնդրահարույց են Թուրքիայի հարաբերությունները Յայաստանի հետ: Այստեղ նշանակալի առաջնորդ դեռ չի գրանցվել: Թուրք-հայկական հարաբերություններում Անկարան մշտական հանդես է եկել կոչտ դիրքորոշումով և փորձել է ճնշումներ գործադրել Երևանի վրա՝ զուգահեռաբար առաջ քաշելով մի շարք պահանջներ:

Թուրք-հայկական հարաբերություններում առաջին խնդիրը սահմանների հարցն է: Անկարան պահանջում է, որպեսզի Երևանը ճանաչի 1921թ. Կարսի ու Ալեքսանդ-


րապուլի պայմանագրերը: Յայաստանը քանից հայտարարել է, թե Թուրքիայի հետ ոչ մի սահմանային խնդիր չունի, և սահմանն էլ հայկական կողմից բաց է, փակել է Թուրքական կողմը: Այսուամենայնիվ, պետք է ընդունել, որ այդ պայմանագրերը ամբողջապես ճանաչելը խնդրահարույց կարող է լինել Երևանի համար, քանի որ այնտեղ խոսք է գնում նաև Լեռնային Ղարաբաղի մասին, որը ներկայացված է որպես Աղրբեջանի մաս:

Ինչ վերաբերում է սահմանների վերաբացման խնդրին, ապա դա թուրք-հայկական հարաբերությունների երկրորդ հարցն է: Յիշեցնենք, որ 1993թ. ապրիլի 3-ին, Թարվածարի ուղղությամբ հայկական ուժերի առաջնադաշտում ի պատասխան, թուրքական կառավարությունը որոշում կայացրեց փակել հայրաբական սահմանը: Ցայսօր Անկարան հայ-թուրքական սահմանի բացումը կապում է հայկական ուժերի «Աղրբեջանին պատկանող գրավյալ տարածքներից դուրսբերման» հետ:

Վերջապես երրորդ խնդիրը Յայոց ցեղասպանության ճանաչման հարցն է: Անկարան դեռ չի հրաժարվել հերքման բաղաքականությունից և նորանոր «հակաբեգեր» է պատրաստում ու տարածում: Որպես իր այս քաղաքականության մի մաս՝ Թուրքիան ձգտում է ներկայացնել ողջ աշխարհին, մասնավորապես՝ ԵՄ-ին, որ ցեղասպանության հարցը խնդրահարույց չէ և հետ հարաբերություններում, որովհետև Երևանը բազմից հայտարարել է, որ ցեղասպանության ճանաչումը չի դիտում՝ որպես նախապայման, իսկ հիմնական պահանջատերը «հիլիացած, եսատեր ու թշնամական սիյուռն» է: Այնուամենայնիվ, Թուրքիայի ԵՄ լիիրավ անդամակցության գործընթացը և Եվրոպայում դրա հակառակորդների ստվար բանակը Յայոց ցեղասպանության ճանաչման հարցը կրկն բերեցին միջազգային ապարագ՝ դարձնելով այն կարևոր հաղթաբույր:

Յարևանների հետ հարբերությունների կարգավորման հարցում Անկարայի համար թուրք-հայկական հարաբերություններն առաջիկայում խնդիրներ են առաջացնելու, և Թուրքիան կանի ամեն ինչ, որպեսզի փորձի կրկն խարել Արևմուտքին:

ԱՐՏԱԿ ՇԱԲԱՐՅԱՆ



Միակ լուծումը՝ ընդունել իրականությունը, և «իբրև թե ցեղասպանություն» կրկնող սուս՝ քարոզչությունից հրաժարվելն է:

Իրֆան Եութե, «Ենի գյունդեմ»-ի («Նոր օրակարգ») հոդվածագիր, 01.02.2001թ.:

Նախ և առաջ հաշվետու լինենք ինքներս մեզ... Յայկական ցեղասպանությունը եղե՞լ է, թե՞ ոչ: Անունը կարող ենք դնել Արևմուտքան Անատոլիայում 1915թ. տեղի ունեցած դեպքեր:

Իլիան Սելջուկ, «ճումհուրիյեթ»-ի գլխավոր խմբագիր, 03.03.2002թ.:

Թուրքիայի ժողովրդականացմանը խոչընդոտող արգելվելներից մեկը հայկական տարուն:

Տողան Ակիհանլը, մտավորական, մարդու իրավունքների պաշտպան:



ՍՓՅՈՒՌ. ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԻՑ՝ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

(հատված «Գիրք հայոց վաճառականության» անտիպ գրքից)

Երիցս իրավացի էր Ս. Վարանյանը, երբ գրում էր. «Սփյուռք թուլության աղբյուր, սիյուռք զորության աղբյուր»: Երկրի առաջընթացին, զարգացմանը, հզրացմանը Սփյուռքի լիարժեք ներդրավանան համար վաղուց ժամանակն է Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները պարզունակ հուզականության հարթությունից փոխադրել սրաի գնահատականների և գործնական հաշվենկատության մակարդակ, վերացնել հայաստանաբնակ-օտարաբնակ արհեստաձին ջրաժամկանը, որ տասնամյակների ընթացքում վերածվել է մտածելակերպային կաղապարի: Ընդ որում՝ այդ «անխախտ մեծությունը» իներգիայի ուժով շարունակվում է ամիսաթար պահպանվել թե՛ ՀՀ-ում, թե՛ Սփյուռքում:

Սփյուռքի գործերով զբաղվող մի պաշտոնյա՝ ամեն հրաժարակային ելույթի ժամանակ սիրում է դեմքին խորհրդավորություն հաղորդել և ավետել՝ Սփյուռքը բարդ երևույթ է. իրը, են գիտեմ, դուք՝ չե՞, թողեք «պրոֆեսիոնալեռո՞» զբաղվեն: Դրանից ի՞նչ է փոխվում, ոչինչ. Դանրապետության վերաբերմունքը Սփյուռքի հանդեպ եղել և մնում է շահառութական: Ոչ ոք դրան դեմ չե՞, դա տրամաբանական է, սակայն ամբողջ հարցը շահառության որակի մեջ է. Դանրապետությունը Սփյուռքից ունի լոկ մամր շահախմբրական ակնկալիքներ, այնինչ Սփյուռքի առաքելությունը պիտի լինի ազգային շահը, մի հասկացություն, որը Դանրապետությունն ի վիճակի չէ հստակ ձևակերպել ու իրապարակավ հայտարարել:

Այո՛, Սփյուռքը բազմադեմ, տարածերտ, տարաբնույթ իրողություն է, սակայն ինչպես ցանկացած հասարակական երևույթ, նա էլ ունի ծագման, զարգացման իր օրինաչափությունները, որոնց ուսումնասիրումն ու գնահատունք խիստ այժմեական, գործնական եղակացությունների հանգման հնարավորություններ են ընթառություն:

Սփյուռք բարիմաստի միջազգային համարժեքը դիմապորան է. դիմապորան ընդհանուր անվանումն է բոլոր այն հուդայացիների, որոնք բարելույան գերեվարությունից հետո ապօռում էին Պատեստինից դուրս: Հայոց Սփյուռքը ծագել է միանգամայն ինքնատիպ ծնունդ մեր ժողովորի ճակատագրին համապատասխան: Դիմուվին սխալ է մինչ օրս հաճախ ինչող այն կարծիքը, թե Սփյուռքը Ցեղասպանության հետևանք է. դա պատճական իրականության հետ ոչ մի առնչություն չունի կամ, ավելի ստույգ՝ մասամբ է ծճմարիտ: Աշխարհի տարբեր երկրների հայոց գաղթավայրերը ի սկզբանե եղել են առևտություններական համայնքներ, որոնք առաջացել են զուտ տնտեսական դրդապատճառներով, հայ վաճառականության ներկայության և շարունակական երթևեկի արդյունքում: Որպես կանոն՝ դրանք միայն տղամարդկանցից բարկացած վաճառականական հանրակցություններ էին, որոնց թվակազմը ուղղի համեմատական էր առևտություններից տվյալ երկրի արժեքավորության հետ: (Ազգային սնապարծության մեղադրանքն անսալով՝ կարող են նույնիկ պնդել դրտեղ չկար հայ վաճառական, այդ երկիրը հետամնաց էր ու ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում: Այսինքն՝ հայի ներկայությունը քաղաքակրթածության չափանիշ էր): Այդ վաճառականները, բնականաբար, պահում էին Հայութիքում թողած իրենց ընտանիքներին, ինչպես նաև ֆինանսապես ու նյութապես աջակցում եկեղեցներին, վարժարաններին և այլ հաստա-

տուրյուններին: Զարդերից, կոտորածներից, ցեղասպանդներից փրկվածներն ո՞ւ պիտի արտագաղթեին. պարզ էր՝ այստեղ, ուր իրենց ազգակիցները, հայրենակիցները, ցեղակիցները ապրում էին ապահով ու համեմատաբար բարեկեցիկ կյանքով: Բայց քանի որ արտագաղթը կատարվում էր զանգվածարար, ապա պանդսության մեջ հայտնվեցին դրամագլխից ու թզնես վարելու ունակություններից զուրկ խյաներ, ինչի հետևանքով փոխվեց նաև առևտություններական համայնքների տողական կազմը: Դամայնը վերածեց վերապարման գաղթավայրի, որի անդամները ժողովեցին եկեղեցու շուրջ և սկսեցին զբաղվել հայ վաստակելով: Այդ զբաղմունքը թելադրված էր Աստվածատուր ծիրծով, դարավոր գենով, որը հայտնվելով օտար պարարտ հղում, բարենպատ պայմաններում արագործեն հանգեցրեց բացարիկ հաջողությունների տնտեսական ասպարեզում: Այսպիսով՝ արդի Սփյուռքը իրենից ներկայացնում է այլ երկրների պետականական համակարգերում ազգային հատկանիշի հիման վրա գործող քրիստոնյա հանրակցությունների մի ամբողջությունը, որի առաջնային բաղադրյալը, գոյատևման հենարանը տնտեսական գործունն է:

Ստամբուլի քաղցի բավարարումը, սակայն, սփյուռքահայության համար բնավ չեր օշանակում հոգու քաղցի բավարարում, բռնազարքած բնօրդանների կարուի մեղմում: Ի՞նչ կարող էր լինել կարուի հանգրվան. բնականաբար, խորհրդային Հայաստանը, ապա՝ Հայաստանի Հանրապետությունը: Եվ այստեղ մենք առնչվում ենք քաջականության հետ:

Խորհրդային Հայաստանը Սփյուռքի հետ գործակցության երկու հիմնակետ ուներ՝ օգտվել տնտեսական օժանդակությունից և համայնավարական գաղափարախոսություն տարածել արտասահմանի հայության մեջ (ի դեպ, լիովին ապարդյուն):

Հայաստանի Հանրապետության հիշական սահմանադրությունը հայրենիքի գաղափարը փոխարինեց պետությամբ, իսկ ազգային պատկանելության հատկանիշը՝ քաղաքացիությամբ: Դա ոչ միայն անընդունելի անջրադես առաջացրեց Հանրապետության և սփյուռքահայության միջև, այլև կորստյան մասնեց ազգային միասնականացման, համազգային զարգացման ուղին բռնելու հարմարագույն պահը:

Սփյուռքի հանդեպ նման վերաբերմունքը գրեթե նույնությամբ պահպանվում է ներկայունս, և արտաքին քաղաքական գործեակերպ հօչակված կոմպլեմենտարության սկզբունքը կիրառվում է նաև սփյուռքահայության նկատմամբ:

Որո՞նք են դրա դրսնորումները:

Առաջին հերթին, լիակատար սիրողական մակարդակն է: Բարձրաստիճան պաշտոնյաններից մեկը, դեպքից դեպք հանդիպումներ ունենալով սփյուռքահայության հետ, ավետում է աշխարհի բոլոր հայերը պիտի վերադառնան Հայաստան, դուք մի օր պիտի տուն դարնաք: Այսինքն՝ ներգարի կոչ է անում: Սակայն հանրապետությունը պետք է պաշտոնապես ստանձնի մեկ առաքելություն՝ զորացնել Սփյուռքը ու նրան ուղղորդել դեպի պետականապահանություն, որովհետև Սփյուռքը ազգային արժեք է:

Գործածելով սպորտային եզրաբանություն՝ երկրի դեկավարությունն ասում է Հայաստանը Սփյուռքի հետ մի քաշային կարգում է, առանց Սփյուռքի այլ («խորհիմաստ»



ձևակերպում): Ո՞ր «քաշային կարգի» մասին է խոսքը: Ըստ էտիքյան՝ սիյուռքահայությանն առաջադրվում է մեկ հիմնադրույթ՝ նպաստել ցեղասպանության միջազգային ճանաչմանը (ըստ որում՝ կոմպլեքսնությունը թույլ չի տալիս ասել՝ հանուն ինչի), և այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե դրանից կարևոր բան չկա: Ո՞չ, կա: Ակնհայտ է, որ Ցեղասպանության ճանաչումը երկարատև ու բարդ գործընթաց է, Սիյուռքի կարող ուժեղի մեջ մասի մնավող, նյութական միջոցները, ջանքերը այդ նպատակին ըներելը սիյուռքահայության այժմեական կարևորագույն առաքելության արիեստական սահմանափակում է: Մեծ Եղեռնի ճանաչումը և միջազգային դատապարտումը պետք է կատարվի իրնացու, այնինչ Սիյուռքին հարկ է Երկայացնել մեկ հիմնական պահանջ-խնդրանք՝ նպաստել Յանրապետության տնտեսական հզորացմանը. սա՛ է խնդիրներից խնդիրը, սա՛ է առաջնահերթությունը, սրանից է շատ բանով կախված նաև ցեղասպանության ճանաչումը:

Ասել, թե սա նոր գաղափար է կամ Յանրապետությունը չի գիտակցում դրա կարևորությունը, սխալ կլինի, սակայն զայրույթ է հարուցում այն հավկուրությունն ու ապահովությունն, որ որևէ պահանջանառ չէ:

Ես երկու անգամ մասնակցել եմ Երևանում կազմակերպված Համահայկական համագումարներին և ամոթից գետինն էի մտնում: Ըստ էլույան՝ սփյուռքահային ասվում էր մեկ բան՝ արի, ֆինանսական ներդրում կատարիր: Միայն նտոր կույրը կարող է չտեսնել և չընդունել, որ տնտեսական միավոր համոխացող և վիթխարի ներուժ ունեցող Սփյուռքի ներդրումային մասնաբաժինը Հանրապետության տնտեսությունում չնշին ու աննշան է: Ինչո՞ւ, ո՞րն է պատճառը: Այն, որ սփյուռքահային Վերաբերվում են որպես օտարերկրացու: Եթե նա հայոց դասական ազգային կապիտալի ժառանգորդը, Հանրապետությունում լոկ բիզնեսով պիտի զբաղվի, ապա եկամուտ ստանալու ավելի շահութաբեր շուկաներ գիտի (ասենք՝ Չոնգ Կոնգ, Մալայզիա, Մինչապուր և հազարումի այլ տեղ): Իսկ եթե բիզնես-հատույցը պիտի նվազ լինի, ապա պիտի ինձան՝ հանուն ինչի: Նրան էլ հենց ասում են՝ հանուն հայրենիքի: Բայց դրանք գուտ բառեր են:

Եթե Հանրապետությունը հիրավի իր հայրենիքն է, ապա նա հնարավորություն պիտի ունենա մասնակցելու երկրի կառավարմանը, ընտրելու և ընտրվելու, դադարի սփյուռքահայ (նույնը է թե՝ օտարերկրացի) համարվելուց: Դիցուք, ի՞նչ նշանակություն ունի՞ բաղապետ, մարզպետ, քաղաքագլուխ, Ազգային ժողովի պատգամավոր, երկրի նախագահ կողանա Ամերիկայի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Իրանի կամ Թուրքիայի հայը, թե Երևանցին կամ դարաբաղցին: Ենչի՞ց ենք վախենում, թող թեկնածություն առաջադրեն, ծրագիր Երկայացնեն՝ բնակչությունն էլ ընտրի լավագույնին: Ի վերջո, լավ նախագահ լինելու համար ինաստունի խելք պետք չէ, ինաստություն պետք է ունենալ: (Լատվիացիները հնարավորություն ընձեռեցին, Կանադայից մի կին Եկապ, ընտրվեց ու հրաշալի նախագահ ուղղաձավ):

Սակայն վախ, այդուհաներձ, կա, դա տիրողների՝ սեփական իշխանությունը կորցնելու երկյուրդն է: Նույնիսկ «իդիոտական» պատճառաբանություն են թերում, թե՝ մենք այսողեք «տաճզվում-տառապում» ենք, սկյուռքահայն իր համար «քեֆ է քաշում» (աղքատի, խորհրդային մարդու հոգեբանություն): Մինչև մենք չհաղթահարենք այս մտածելակերպային կաղապարը, հայաստանյան եսանդլությունը՝ կշարունակենք հանրապետությունում իրոք տաճզվել-տա-

ռապել՝ առանց չակերտների, իսկ սփյուռքահայր կգա, կզմայլվի Եօմիածնով, Գառնի-Գեղարդով, Արարատ-Սևանով ու Կրողնի-կիեռանան՝ թէֆ քաշելու՝ առանց չակերտների:

Մտահոգիչ է մի հանգամանք ևս՝ այն, որ իշխանության հետ մտածելակերպային նույն հարթության վրա է գտնվում նաև ընդդիմությունը: Ազգային-ժողովրդավար Վազգեն Մանուկյանը ժամանակին ասում էր՝ «մենքը համաշխարհային ազգ ենք. ասում-ասում էր՝ իման այլևս չի ասում, որովհետև իմնարար կերպով տրամաբանական շղթան շարունակելու դեպքում կհանգեր «վտանգավիր» մտքերի: Մեկ այլ ազգային-ժողովրդավար՝ Արշակ Սարդյանը, որի քաղաքացիական ազմիկ կեցվածքը կասկածանքի տեղիք չի տալիս, առիթը բաց չի բռնուում քննադատելու է. Երնեքյանի կողմից «Զվարթնոց» օդանավակայանը ձեռք բերելու փաստը: Ի՞նչ վատ բան կա դրա մեջ: Ենթադրենք, «Զվարթնոցը» գներ պլոտսոկրատին սնուցող կոմպրադորը, մի՞թե դրանով էլ ավելի չեր ամրապնդվի նրանց մենաշնորհային, միահեծան դիրքը: Կամ, լա՞վ է, որ Յանուապետության էներգետիկան, կապը, տնտեսության այլ ճյուղեր տնօրինում է օտարերկրյա կապիտալը, ախր, պարզից էլ պարզ է, որ դա քաղաքական ու տնտեսական կախվածության համեմականության մաս- նաբանականության մաս- նաբանականության մաս-

Օրերից մի օր ընդդիմությունը կղառնա իշխանություն, բայց եթե նա այժմվանց այսպիսի մտածելակերպային դիրքորոշում ունի, մնում է նեկ եղակացության հանգել՝ ազգային հանճանականության հարցում ոչինչ

Հանրապետություն և Հի փոխվի: Տխուր է...

Եսով պիտի գրադաւուս ստանալու թարեր շուկաներ են բիզնես-հասույաց լինի, ապա պիտում ինչի: Նրան և են՝ քո հայրերանք զուտ բառեր

համար հերթագայություն է սահմանվել: Նոյն նախագծում շարադրված են դրույթներ, որոնք անընդունելի են, այսինքն, ի սկզբանե գիտ է նշանակված եթե ուզում ես Հանրապետության մուտքի դուռը բացվի սկյուռքահայության առջև, աստիճանաբար տիրապետող դառնա ազգային միասնության գաղափարը, զգտես ձեռք-ձեռքի տված դիմակայելու մարտահրավերներին, ազգային առաջադիմության, զարգացման ուղին բռնես, պիտի ընդունես նաև ամոնոու ների: Ե՞ն ասես...

Աշխարհն օրեցօր, ժամանշամ փոխվում է, և այդ ընթացքին միայն մենք՝ հյուերս ենք են մնում: Ի դեմք պետության, Սփյուռքի ու Ղարաբաղի, մենք ունենք ազգային վիթխարի ներուժ, որը չենք կարողանում օգտագործել: Այնինչ, «մեր փրկությունը մեր միասնության մեջ է»: Փոխանակ կոնվենցիանարության «քաղաքակիրք» փաթեթավորմամբ աշխարհի առաջ սուսիկ-փուսիկ, խեղճ ու ծեծկված մուրացկան ներկայանալու՝ մեզ անհրաժեշտ է տնտեսապես զորանալ, որպեսզի հրեայի նման հայի հետ էլ հաշվի նստեն երկրագնդի ամեն ծայրում: Որպեսզի 10, 100, թե 1000 տարի հետո կարողանանք իրականացնել մեր համազգային ինքը՝ վերականգնել Միացյալ և Անկախ Հայաստանը, բոլոր հյուերի Հայունությունը: Անհայտահանդիպ գաղափար:

Ապրանքական



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐԱԿՈ՞Ր Ե ԱՐԴՅՈՒՆ ԱՅՆ ԿԱՌՈՒՑՑԵԼ ՄԻ ԵՐԿՐՈՒՄ, ՈՒՐ ՀԱՄԱՌՈՐԵՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՁԱՍՏԵԼՈՎ, ԱՐԳԵԼԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՀՐԳԵՎՈՐ ԻՇԽԱՆԱՌՈՅՈՒՆ:

Անհիշելի ու վաղնջական ժամանակներից անվիճելի է Բովանդակության առաջնայնությունը Զեկի նկատմանը: Դայտնի է՝ յուրաքանչյուր երկիր պետականության սկիզբը, ասել է թե ակը՝ աղբյուրը, առաջնայինն ու առաջնորդողը նրա ազգային ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆն է: Իսկ պետությունը ԶԵՎՍ է՝ արդյունքն ու հետևանքը ազգային բովանդակության ինքնաստեղծագործ ստեղծագործում:

Ժղողվրդակարությունը ԿԵՆՍԱՁԵՎ է, որի միջոցով՝ օրենսդրութեան և գործնականորեան իրազորձվում է համաժղողվրդական իշխանությունը՝ տվյալ երկրի-պետության ԽԵԲԻՇԵԱԼՍՈՒԹՅՈՒՆԸ:

Հայոց Պետությունն ու Ինքնիշխանությունը իրենց ինքնության մեջ, բովանդակային առումով, հազարամյակներ շարունակ բոլոր՝ մինչքրիստոնեական և քրիստոնեական ժամանակաշրջաններում (որքան հայտնի է գրավոր աղբյուրներից նաև հայկական եպոսից), լիովին հարազատ են եղել ու մնացել Հայոց Պետականությանը. կենսածի առումով՝ նախընտելուկ ժողովրդավարությունը՝ որպես ներկայացուցչական և միջնորդված ապակենտրոն, իշխանությունների և ազգային ինքնակենտրոնացումի համաժողովրդական՝ անմիջական իշխանության կենտրոնակիր ծևավորում. հենված ազգային բարոյականին, նաև ազատ հոգու և մտքի հիմնարար դրսևսորումներին: Երողություն, որին վերջին մեկուկես հազարամյակում՝ առավելապես IX - XX դարերում, մեծապես խանգարել են Հայոց քաղաքակրթական՝ մոտիկ ու հեռու հարևանության արտաքին միջավայրի ոչ ժողովրդավարական՝ նյութական արժեքներին մոլագար սևեռվածության, վայրի կարգավորվածություն ունեցող բոլոր երկր-

Եթերը՝ պետությունները: Դրա վառ ապացույցներն են Հայոց պետականությանը պարտադրվող Սովետմիության սոցիալիստական ժողովրդավարությունն ու վերջին 10-15 տարիներին Եվրոպի հության կողմից մեզ և այլոց հարկադրվող, ժողովրդավարության հետ ոչ մի առնչություն չունեցող, հենց իրենց Եվրոպական երկների ու ժողովուրդների կողմից մերժելի ու անընդունելի Եվրոպանտյան ժողովրդավարությունը:

Այս, որ ՀՀ Սահմանդրությունում Մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը ունեն լուրջ սահմանափակումներ, հայտնի է վաղուց. դրանք վերացնելու պահանջները դրված էին 1995-ին Սահմանադրությունն ընդունելու հանրաքվեի քարոզարշավի ժամանակ: Քանզի նրանում բացակայում է ՀՀ ինքնիշխանության անբողջ բովանդակային մասը, այդ թվում՝ ա) բարոյահոգնոր՝ ազգային ավանդական ու հոգևոր ինքնիշխանությունը, թ) բարոյանտավոր՝ Հայոց արքեստը, գիտությունն ու կրթությունն ամբողջանող մշակութային ինքնիշխանությունը, գ) ազգային - քաղաքակրթական պաշտպանության, անվտանգության և զարգացման ազգային պետական իիմնարար հենքը: Թերություններ, որոնք ակնկալվում են վերացնել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների և լրացումների միջոցով:

Սակայն 2003-ի գարնաճը օրենքի ուժով բացահայտված Սահմանադրության փոխիշությունների նախագիծը գերազանցեց բոլոր հնարավոր նեզատիկ սպասումները: Պարզվեց, որ ոչ միայն չեն ուղղվել նախորդ բոլոր «բացրողությունները», այլև ՀՀ-ում ՀՀ օրինապաշտ քաղաքացիների համար ավելի են խորացրել Սարդու իրավունքների սահմանադրական մերժման չափը, նաև լիովին վերացման տանելով ժողովրդավարությունը: Փորձ է արվում սահմանադրորեն երաշխավորել և պաշտպանել ՀՀ մերկայացուցչական իշխանությունների կողմից ժողովրդին պատկանող ՀՀ ամբողջ իշխանության՝ դեռևս ստվերում գտնվող, փաստացի յուրագումը:

Այս, որ Մարդու իրավունքները ու ժողովրդավարություն թմբկահարող, դրանք մեր երկիր ներմուծելու, նաև քրիստոնեական արժեքներին մեզ վարժեցնելու հանձնառությունը ինքնաստանձնած եվրոպի-ութենական քաղաքականությունը իրականում հենց միայն փորձում է խոչնշութել, մերժել ՀՀ-ում ժողովրդավարությունն ու Մարդու իրավունքները, մեզ հայտնի դարձավ դեռ 2000-ին՝ Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղար, Երջանկահիշատակ Մեսոպուարքեպիսկոպոս Աշճյանի ոգևորող հավատով ու հետևողական ջանադրությամբ Ծաղկաձորում, մարտի 2-5-ին հրավիրված «Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովից անմիջապես հետո: Գիտաժողովիմ՝ որպես հիմնական քննարկման առարկա, դրված էր ՀՀ-ում հոգևոր իշխանության Վերականգնման, ասել է թե Ազգային կրոնի և Հայոց եկեղեցու կարգավիճա-

կի վերականգնման հարցը¹: Գիտաժողովի ավարտը եղարափակեց հայտարարագիրը, որով նաևնակիցները ՀՀ իշխանություններին առաջարկում էին քննության առնել Ազգային կրոնի և Կայոց Եկեղեցու պետական սահմանադրական կարգավիճակի վերականգնման հարցը: Դեռ չինք հասցրել Շաղկաձորից վերադառնալ, եթե Եվրոպայից շտապով Երևան ժամանեց, այսպես կոչված, Եվրոխորհրդատվական՝ «դաստիարակչական» մի հանձնախումը, որի խնդիրն էր ՀՀ Արտգործնախարարությունում կազմակերպված քննարկնան միջոցով ՀՀ իշխանություններին հորդրել ու պահանջել, որ հեռու մնան ՀՀ Տոգնոր իշխանության վերականգնման գաղափարից, փոխարենը, իբր հանդուրժողականություն ցուցաբերեն, ասել է թե պետականորեն լայն հնարավորություններ և իրավունքներ ընձեռեն ՀՀ-ում առկա, նաև հետագյում ներքափանցող բոլոր աղանդների յուրաքանչյուր երկրի համար համաշխարհային նշանակության միջազգային այդ հայտնի ՉԱՐԻՔԻ նկատմամբ:

Հայտնի է, որ այդ քննարկմանը հրավիրված, այսպես կոչված, հասարակական ներկայացուցիչները գերադասեցին լռել, ուստի՝ Հայոց հոգևոր քարոյագրկմանն ուղղված այդ եվրոպական գրոհին հիմնական և միակ դիմակայողը Եղավ Երջանկահիշատակ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը՝ որպես Մայր Աթոռը ներկայացնող՝



Ամենայն Յայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ: Նրա համարձակ համառումի և ջանքերի արդյունքում էր, որ որպես Եվլոգիում «քոյլ տրվեց» ՀՀ Աշխարհիկ և Հոգևոր իշխանությունների միջև համաձայնագիր (կոնկորդատ) ստորագրելու տարրերակը: Փաստաբուղթը պետք է պատրաստ լիներ 9 ամիս հետո: Ինչպես հայտնի է, այդ համաձայնագիրը առ այսօր չկա չի կոքվել, քանզի, ինչպես հետագայում պարզ դարձավ, զիշման այդ 9-ամսյա ժամկետը տրվել էր ոչ թե խնդիրը լուծելու, այլ դեկավարելի հետևողականությամբ այն մոռացության նատնելու համար:

Այն, որ 1995-ից գործող ՀՀ Սահմանադրությունում տեղ չի գտնվել ոչ Յայոց Ազգային կրոնի և ոչ էլ Յայոց Եկեղեցու համար, մտահոգիչ էր և ոչ անակնակալ: Քանզի այն, անգամ հպանցիկ, չի անդրադարձել ազգային մի շարք՝ (ոչ պակաս կարևորության) կենսախնդիրների և կառույցների: Անսպասելին, նաև ավելի քան մտահոգիչն այն էր, երբ Քրիստոնեությունը Յայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի մեջ տոնախնդրություններին զուգահեռ 2001-ին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում, գրիչ մի հարվածով ամրագում են. «Յայաստանի Յանրապետությունում Եկեղեցին անջատ է պետությունից», ասել է թե՝ ժողովրդից, քանզի ՀՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին՝ Յայոց Պետականության կրոնին: Յարկ է նշել, որ Յայոց կրոնին ու Եկեղեցուն վերաբերող Եվոլոմիության մերժողական որոշմանը ՀՀ ժողովուրդը տեղյակ եղավ միայն 2003-ին, երբ նախագիծը արդեն դրվել էր հանրաքվեի: Ի դեպ, դրանից հետո էր, որ մեզ համար հասկանալի դարձավ Ծաղկաձորի գիտաժողովը տապալելու բոլոր չհաջողված փորձերի բուն նպատակն ապատիքուն:

Ժամանակին 1920-30թթ., կրոնի, հավատի ու Եկեղեցու դեմ պայքարող, սրբություններ չճանաչող, նաև անաստվածներին առաջնորդող բոլշևիկներին Աստծո պատիժը երկար սպասեցնել չտվեց. նրանցից շատերը արդեն 1937-40թթ. իրենց մահկանացուն կնքեցին նույն Շենքայի բանտերում կամ Միքրիի ճամբարներում:

Կստահաբար, նյութականի նկատմամբ մոլուքը տարված ներուշիկյան այս նոր Եվրոպուսկորումներին, բոլոր ազգութաց, հայրենադավ ու սրբություններ չճանաչող, օտարին ինքնաստրկացող այսօրվա ծառայամետներին նոյնական Աստծո (ասել է թե Յայոց ու համանարդկային բնության բնականոն) պատիժը երկար սպասեցնել չի տա...

Մենք ներկայացրել ենք Մշակույթի աջակցման և

ռազմավարության հայկական կենտրոնի կողմից ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հեղինակներին ... մայիսի 2005թ. առաջարկված հորված 7.1-ի փոփոխության Առաջարկը: Այն, ոչ միայն չներառվեց առաջին ընթերցման տարրերակում, այլև լուսայն մատնվեց, քննարկման իսկ չդրվեց նախագծի հեղինակների կողմից: Քանզի սա ևս այն հիմնադրույթներից մեկն է, որը Վեճետիկի Եվրոպանձնաժողովի կողմից արգելված է փոխել:

Կարծում ենք, ակնհայտ է, որ Եկեղեցին պետությունից անջատելով, առաջին հերթին ՀՀ-ում արգելափակվում է ժողովողավարությունը. քանզի հակառակ պարագայում, երբ Յայոց ազգային կրոնն ու Եկեղեցին ունենան պետական կարգավիճակ, ասել է թե՝ ՀՀ Հոգևոր իշխանությունը լինի իր օրինական՝ ազգային օրինապահ դիրքերում, իսկ ՀՀ-ում սահմանադրութեն մերժվեն ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները, ապա Յայոց պետականության վերջին 1700-ամյա փորձից հայտնի է, որ հենց միայն Եկեղեցին, ՀՀ-ում հոգևոր իշխանություն իրագործելով, կարող է և ի զորու է մեր երկիրը պահել ժողովրդավարական կենսաձևում՝ ստեղծելով նաև երաշխավորված ու հզոր պաշտպանությունն մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների համար՝ պապակիւն նաև երկրի ու ժողովրդի ազգային քաղաքական պաշտպանությունը. քանզի շուրջ 1700 տարի Յայ առաքելական Եկեղեցին եղել և մնում է աշխարհիկներից աշխարհիկը և ժողովրդավարականներից ժողովրդավարը. անգամ Յայոց Պետության անկախության կորստի օտարի բռնության ու հայածանքների պարագայում:

Յազարամյակների դաժան փորձություններին դիմակայած մեր երկիրն ու ժողովուրդը հնից հին ու նորից նոր այս փորձությանն էլ կրիմակայի և առաջադեմ մարդկության հետ միասին կիադրահարի՝ առաջնորդվելով Յայոց բարոյահոգեն ինքնակազմակերպումին, մշակութային իմաստությանը՝ պապակիւն Աստծուն և ազգային ինքնապաշտպանության հավատակիր ու հավատավոր հզորությանը:

ՄԻՄՈՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

1. Գիտաժողովում բարձրացված հարցերին մանրամասն կարողի է ծանոթանալ՝ «Յայոց Եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութերից, Եջմիածին-Օշական-Ծաղկաձոր, 2000թ., Երևան:

ՈԴ-Ն ԶԻ ԿԱՐՈՂ ՅԱՄԱՁԱՅՆԵԼ ԱՊՅ ՏԱՐԱԾՔԻ ԲՈՆԻ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ»

Ուսւաստանը չի կարող համաձայնվել ամբողջ հետխորհրդային տարածքի բռնի «ժողովրդավարացման» մեթոդներին, հայտարարել է ՈԴ արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինը:

«Մենք չենք կարող համաձայնվել ամբողջ հետխորհրդային տարածքի բռնի «ժողովրդավարացման» մեթոդներին՝ լինեն դրանք «գունավոր հեղափոխություններ», թե տեղեկատվական-քաղաքական ճնշում գործող իշխանության վրա», - ասել է Կարասինը «Ուսիխսկայա գագետա»-ում իրապարակված հարցազրույցում, որի տեքստը գետեղված է Ուսւաստանի արտգործնախարարության պաշտոնական կայքում:

Դիվանագետի խոսքով՝ «դա անխուսափելի էր տանում է տարածաշրջանի իրադրության ապակայունացման, ինչը իղի է երկարաժամկետ բարդություններով՝ անկանխատեսելի հետևանքներով, այդ բվում նաև ծայրահեղականության ածի առունով»:

ՈՒՍՏ, ՈՐՏԵՇՈ, ԻՆՉՊԵՇՈ...



Հոգևոր մուտացիան արագորեն իր ավերիչ գործն է կատարում մեր ազգային նկարագրում: Բայց ես հավատում եմ, որ հնարավոր է այդ աղետի առաջն առնել, եթե համախմբվեն նպատակի բարոյականությունը խորապես գիտակցող մարդիկ:

Ժողովուրդների կյանքում միշտ էլ լինում են ճակատագրական տարեքվեր, որոնք օրացուցում համայնական սգահանդեսի կամ ուրախության և ոգևորության օրեր են արձանագրում: Վերջին հազարամյակում Դայոց օրացուցը որքա՞ն առան եղավ նման օրերով:

Բայց խոսքը հիմա վերջին տասը տարիների մասին է: 1988-ը ցնցեց, կարծես՝ լեբարգիական քնի մեջ ընկղմված ժողովրդին և արժնացումի կարևոր պահ ընծայելով նրան, սկիզբ դրեց արդարությունը վերականգնելու, ագգային միասնական կամքի դրսորման, Արցախյան շարժման, շրջափակման ու հաղթանակների, ողջակիցումի ու հառնումի մի ժամանակաշրջանի: Թվում է՝ կարծ, բայց հակասական զգացումների ու ապօռումների ինչպիսի ժամանակաշրջան էր: Փառք ու մեծարանք արժանապատվության դրոշի ներքո զոհված կամ իրենց ողջությամբ մեզ ուրախացնող քաջորդիներին, նրանց խնկելի գործերին: Նրանք արժանի են, որ իրենց հերոսական ու արժանապատիվ կյանքի յուրաքանչյուր դրվագը գրվի տաղանդավորի ոսկյա գրչով: Բայց խոսքն այսօր հաղթանակների մասին չէ, այլ այն հոգևոր աղետի, որին ամեն օր, ամեն ժամ, ենթարկվում են երեխաները:

Խոսքն այն մասին չէ, թե վիլուգված քաղաքներում և շեներում, կամ պատերազմի ներսում գտնվող երեխաները, որոնց գլխին այդ տարիներին ռումբեր էին պայթում, ինչպիսի չարչարանքներով ապրեցին...

Կարեկցանքի արժանի մեր երեխաները:

Բայց մենք՝ մեծահասակներս, մեզ թոյլ տալի՞ս ենք, կարեկցելուց բացի, հասկանալ նրանց: Կամ գիտակց՞ւմ ենք, որ երեխան, անկախ մեր վերաբերմունքից, իր եւրայան ներսում կրում է հնարանքի հանդեպ ունեցած հավատը, և եթե նրան թողնել է պետք, նա բնավ չի մտածում, թե ոտքերին կյանքի պարտադրված «երկարէ կոշիկներ են»: Նրա երևակայությունն անկաշկան է, և երևի մեծահասակներիս հարկավոր է ոչ միայն կարեկցանքով, այլև բանինացությամբ հոգալ նրա ներաշխարհի բնածին հարստությունը, որը կոչվում է Դնարանք և երազանք:

Բացատրեն միտք:

Դեռ աղետի ու պատերազմի սարսափմերը հոգիներում ահաբեկված անչափահաների համար մեծահասակներս հանուն մեր շահերի, կամ պարզապես մեր խաթարված զգացումներից ու մտածումներից ելնելով, ամեն բարոյական արգելք ջարդուիչուր անելով, նրանց դասեր տվեցինք կեղծ «ազատության» անունից: Նրանք, որ եկել են խորհրդային իշխանության տարիներից, շատ լավ գիտեն միտքը կաշկանդող գլավիտ՝ գրաքննություն հասկացության արժեքը: Յիմա ազատություն է: Յիմա ով, ինչ ցանկանա կարող է անել և ասել... Այսինքն՝ ազատ ենք և կարող ենք ուրիշ մի տեսակ «աղբանցի» վերածել

մեր Ոգեղենի տիրությունը, որի վաղվա լիիրավ տերերը այսօրվա երեխաներն են:

Դարյուրամյակներ շարունակ պետությունից գուրկ, սակայն մշտապես կառուցող, կերտող, բարոյական բարձր արժանիքներով ապրող ժողովրդից մենք կամաց կամաց վերածնվեցինք մի ժողովրդի, որի երգած երգերը այսօր կարող է ստիճան խնկելի կոմիտասի անմահ ոգուն նորից ու նորից խելագարվել:

Որքա՞ն «ամբարո» է բոլորիս այն հավաստիացումը, թե երեխաները մեր ապագան են, մեր կյանքի ծաղկմերն են: Բայց ինչպէ՞ս ենք վարվում նրանց հետ. մենք մեր Ոգեղենի տարածքը նրանց համար դարձնում ենք փուշ ու տատասկ՝ անհաստան: Իսկ այդ Ոգեղենի մեծագույն արժեքը, նախ և առաջ, Դայոց լեզուն է, որն ամեն օր, ամեն վայրկյան, խոցուտվում ու արյունոտվում է փողոցում, դպրոցում, մանուկի էջերում, հեռուստատեսությամբ և ռադիոյով՝ անգրագետ, թվատ, ամներդաշնակ բարբառային շեշտերով ու խառնուրդով մեծամիտ «գիտակների» թերև ջանքերով: Երեխաները լսում և սովորում են: Սա չափազանց լուրջ և ընդգրկում թեմա է, որին պիտի անդրադառնալ առանձին, օրինակներով և ապացույցներով:

Բայց երեխաների «անզուգական բարեկամ» հեռուստատեսության մասին ուզում եմ իմաստ խոսել, որի բազմաթիվ կայանների էկրաններից ինչ ասես, որ չի մատուցվում:

Եթուստատեսությունը ինքն իրեն վահուց է պարտադրել յուրաքանչյուր ընտանիքի մեջին ու փոքրին: Անեն օր, ամեն ժամ ցուցադրվող ահասարսութ, կատաղի, անմարդկային, արյունօռուշտ, երոտիկ, անբարո, տգեղ, հոգին ահաբեկման անդունդները ընկղմող, դաժանության գազանային կրթերին հագուրդ տալու ճանապարհութիւն ընկած ամեն արգելք ջարդուիչուր անող դասեր են տնային էկրաններից մատուցվում մեջին ու փոքրին: Մեծը՝ մեծ, բայց մտահոգությունը երեխաներն են:

Երբ Աստված Աղամին ու Եվային վտարեց դժոխքից, և խեղճ առաջին մարդիկ հասկացան, որ մերկ են, իրենց ծածկեցին թգենու տերևներով, չնայած որ մեն-մենակ էին ամրոջ աշխարհում: Արդյո՞ք այս առասպելը մեզ ոչինչ չի հուշում: Անեն արիթով քարոզում ենք հավատ, բարություն, մաքրություն, բարոյականություն... Բայց այս քարոզները վասն ինչի՞ն են, երբ, ահա, ավելի իրական, որոշակի, առանց քարոզի, պարզապես բուռն գործունեությամբ ծավալվում է միասեռների, հաշիշամոլների, վավաշոտների, բռնաբարողների, սպանողների, թալանչների, խաղամոլների սերունդն աճեցնելու գործը: Այդ դաժան ու նողկալի ֆիլմերը, այդ կատաղի, նյարդերը սղոցող, միտքն օրապակաս դարձնող խժալուր ծայների գարիւրանքը, որը կոչվում է երաժշտություն և որտեղ բացառվում են մեղեդին ու զգացնւներները, ազգային և համաշխարհային հզոր ծեռքբերումները, մարդկային սքանչելի լսողության ընկալումները բթացնող, որնացող թերանները, այս ու այն կողմ զարնվող հոգեխախտված մարմնները, այդ անընդհատ տղամարդ և կին անասնական կապը ծատագովող աղտեղությունները մի՞թէ չեն թելադրում այսօրվա մշակույթի հոգեվարքը: Դեռ աշխարհի լավան ու վատը չտարբերակող անչափահաներին նման թունավոր արտամղումով վարակող ոճարագործների ծեռքերը հարկավոր չել, արդյոք, անհապաղ



թօնել: Ես կրկնում եմ՝ ոճրագործների, որոնց օրենքի ոչ մի կետով պատասխանատվության կանչել հնարավոր չէ, որով և նրանք ավելի՝ վտանգավոր են: Ուրեմն, եթե վտանգվում է սերնդի դաստիարակությունը, պետք է գործն բարոյական օրենքները, հազարամյակների ընթացքում բյուրեղացած ու ազնվացած մեր ազգային բնավորության օրենքները:

...Անշափահաս հանցագործների թիվը տարեցտարի ավելանում է:

Սադիզմի և անբարոյականության դասեր առաջ պատահն, որը վաղվա ժառանգմեր ծնող տղամարդն է կամ կինը, դժվար թե դառնա հայրենիքի այն կառուցողը, ուսուցիչը, զինվորը, արվեստագետը, դեկավարը, որի վրա հոյսով աչջը հառած ախտի պահի ազգը: Նա, պարզապես, ոչ ֆիզիկապես, ոչ գիտելիքներով, ոչ մտածելակերպով, ոչ հոգեբանորեն պատրաստ չի լինի իր առաքելությանը:

Վերջերս, պարզապես, ազգային աղետ են դարձել գովազդները՝ ցածրորակ տեսարաններով, խոսքով, երաժշտությամբ: Սա է հիմա երեխայի խւկական դպրոցը: Երեխան, որն արդեն մշտապես գամված է հեռուստատեսային էկրանին, ականա առանց հասկանալու, արդեն անգիր գիտե գովազդների խոսքերը, երաժշտությունը, նմանվելով նրա «հերոսներին», կրկնում է ու երգում բութակի նման: Հարցուեք նրան. գիտե՝ արդյոք, գոնե մի բանաստեղծություն



Տերյանից, Թումանյանից, Զարենցից: Գիտե՝, արդյոք, ի՞նչ է դասական երաժշտությունը կամ ո՞վ է Կոմիտասը:

Պետք է փրկել երեխաների, պատասխների հոգիները: Բայց ո՞վ պետք է փրկի գուցե դպրո՞ցը:

Մենք չենք փորձում փրկել երեխայի օր-օրի աղճատվող երազանքի ու հնարանքի հանդեպ ունեցած բնածին մղումը: Այդ մղումին մենք՝ մեծահասակներս, տալիս ենք այնպիսի ուղղություն, որը տանում է դեպի անխուսափելի մտային հետած: Եվ առանց դադարի հարմարեցնում ենք նրանց երազանքները մեր խաթրված մտածելակերպին, մեր անընդունելի ապրելակերպին: Բայց չէ՝ որ մանուկ հոգիներում առկայածող երազանքի գեղեցկությունն է մարդկության փրկում գրեկությունից, փրկում՝ աշխարհը կործանումից: Որովհետև երազանքից են սկիզբ առնում մեծ ու փոքր, բարի և օգտակար գործերն իրականություն դարձնելու ջանքերը:

Վաղվա հուսալի տունը նրանք պիտի կառուցեն, Յայոց հողը նրանք պիտի մշակեն, իրենց ուսերին կրեն հայոց աշխարհի ծանրությունն ու ապահովությունը:

Ապահովություն:

Սակայն վասն ինչը՝ են այս խոսքերը, թե երեխայի ոգեղենի փրկության համար որոշակի ուղիներ չեն նշվում և առաջարկներ չեն արվում... Գուցե օգնենք մինյանց հասկանալու համար, թե ո՞ւմ, որտե՞ղ, ինչպե՞ս պետք է արվեն այդ առաջարկությունները: Գուցե ողջ հայության լողությունն ի վար պիտի աղաղակենք. «Յայե՛ր, միացե՛ք՝ փրկելու համար մեր զավակների հոգիները»:

ԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԶԱՎԱԽՈՒՄ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ ԽՈՍԵԼ ՎՐԱՑԵՐԵՆ

2003թ. «Վարդերի» հեղափոխությունից հետո Զավախքը հայտնվել է նոր իրադարձությունների փուլում, որն առաջ է բերել ավելի լարված ու պատասխանատու իրադրություն: Վրաստանի իշխանությունները սկսել են ավելի ակտիվ կերպով գրավել ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերով, որոնք հանգեցնում են մայրենի լեզվի դերի նվազման և արգելման, բնակչության կազմի փոփոխման, այսինքն՝ այն տարածքում, որտեղ գերակշռում են ազգային փոքրամասնությունները, և այս տարածքները վերաբնակեցվում են ազգությամբ վրացիների կամ վրացական ցեղերի կողմից:

Զավախքի հայ ազգաբնակչությունը դժգոհ է վրաց իշխանությունների վերաբերմունքից և չի կարող համակերպվել հայկական դպրոցներում ուսուցման լեզուն վրացերեն դարձնելու իրողության հետ, քանի որ դրա համար կան պատճառներ՝ նախ այն, որ իրենց մայրենի լեզուն հայերենն է, երկրորդ՝ նրանք իրեխանների ապագան չեն պատկերացնում վրաց հասարակության և Վրաստանի վարչական համակարգում, քանի որ այսօրվա տվյալներով Վրաստանում 10% ազգային փոքրամասնությունն կազմող յան-ով ազգանուն ունեցող հայերը չեն ներկայացված պետական կառավարման համակարգում: Անգամ 90% հայաբնակ Զավախքը փորձում են վրաց իշխանակուները դեկավարել:

Իսկ թե ինչպես կարելի է հանդուրժել վրաց իշխանությունների այսպիսի վերաբերմունքը, առանց այն էլ ծանր վիճակում գտնվող Զավախքի նկատմամբ, դա միայն գիտի ջավախքահայությունը:

ՀԱՅՈՑ ԳԻՐՆ ՈՒ ԳԻՐՔԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ

Եվրոպական ժառանգության օրերն այս տարի Հայաստանում կանցկացվեն սեպտեմբերի 3-18-ը «Գիրք ճանապարհի, ճանապարհ գրքի» խորագրով և կնվիրվեն մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակին: Կկազմակերպվեն ֆիլմերի ցուցադրություններ, գիտաժողովներ, կներկայացներ հուշարձաններ ու վայրեր, որոնցում գործել են գրատներ, գրչության կենտրոններ:

Եվրոպական ժառանգության օրերի հայաստանյան նախաձեռնող խմբի կազմում ընդգրկված են պետական գերատեսչություններ, հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև Եվրոխորհրդի գրասենյակն ու Եվրոպական համաձայնությունի պատվիրակությունը: Մշակած ծրագրի մանրամասները նախաձեռնող խումբը կներկայացնի միջոցառման նախօրեին, Հայաստանի ճարտարապետների տանը:



ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՎԱՏՔԸ

Ներկայիս պատմական, քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային իրավիճակում հավատքի հարցը չափազանց կարևոր է: Առողջ և կենսունակ պետություն ստեղծելու ձգտում ունեցող ժողովուրդը՝ հարկ է, որ ունենա հավատ առ Աստված, և հավատ իշխանությունների հանդեա: Փօքր-ինչ շեղվելով բուն թեմայից՝ խոսենք հավատի մասին:

Երբ հին չինական մտածող Կոնֆու-Ցզիին հարցում են, թե ո՞րն է լավ կառավարությունը, նա պատասխանում է. «Դա այն կառավարությունն է, որը երաշխավորում է առատ սնունդ, ապահովում երկրի անվտանգությունը թշնամիներից և հոգ է տանում, որ ժողովուրդը հավատա իրեն»: Նորից է հարց տրվում, որ եթե անհրաժեշտ լինի այդ երեքից միայն երկուսն ունենալ, ո՞ր մեկից կարելի է հրաժարվել: «Պատասխանը՝ բանակից: Դարձյալ հարցում են, եթե հարկ լինի մնացած երկուսից մեկը թողնել, ապա որի՞ց կարելի է հրաժարվել: Եվ իմաստունը պատասխանում է. «ՍԱՆԻ մասին հոգալուց: Առանց սմնի մարդիկ կմեռնեն, բայց մահը, ի վերջո, բոլորին ճակատագիրն է: Իսկ եթե ժողովուրդը չհավատա իր կառավարությանը, այն ժամանակ կմեռնի պետությունը»:

Կարծես՝ մեր օրերի վերաբերյալ ասված խոսք է, որը չի կարելի անտեսել այս բարդ, ներազգային իրավիճակում, և որն առավել է կարևորվում միջազգային կամ, ինչպես ասում են, տարածաշրջանային խնդիրների գարգացմանը զուգընթաց:

Շրջապատված լինելով հիմնականում ոչ քրիստոնյա ժողովուրդներով՝ մենք՝ հայերս, պետք է աչալուրջ լինենք հավատքի հարցում: Եվ առաջին հայացքից թվում է, թե աչալուրջ ենք, սակայն...

Գիտամշակութային մի միջոցառման ժամանակ հոգևորականներից մեկն այն կարծիքը հայտնեց, թե Հայոց հեթանոսությունը բավականին թույլ էր, տկար, այդ պատճառով էլ քրիստոնեությունն ընդունվեց գրկաբաց: Ցավալի է, որ հոգևորականն իսկ իրազեկ չէ իր ժողովորի հոգևոր անցյալին: Նա ձգտում է բարձրացնել քրիստոնեության դերը՝ ի հաշիվ նախաքրիստոնեական հավատքի, և միակը չէ այս ձգտման մեջ:

Այսօրինակ ձգտումը պատճառաբանված և հասկանալի էր քրիստոնեության տարածման սկզբներում: Սակայն մեր օրերում այն խօսում է առաջացնում ինը՝ հեթանոսական, և միջնադարյան ու արդի քրիստոնեական մշակույթների միջև:

Դայ քրիստոնեական հավատքն, իրավամբ, հզոր է եղել և է: Այն, պետականություն չունենալու երկար ու ձիգ ժամանակաշրաբքում, համախմբել է ժողովրդին մի դորշի ներքո: Եկեղեցին փոխարինել է պետությանը և հնարավորինս լրացրել այն բացը, որ եղել է պետական կառուցների չունենալու հանգամանքներում:

Ցավոք, մեր հեթանոսական շրջանը կարոտ է ամբողջական ուսումնասիրման: Բայց հիմնա, արդեն կարող ենք դիտարկումների և հետազոտումների հիմնա վրա ասել, որ մենք՝ հայերս, քրիստոնեությունն ընդունեցինք ոչ միայն այն պատճառով, որ տվյալ ժամանակահատվածի քաղաքական ու պատմական իրադրություններն են թելադրում ընդունել նոր կրոն, այլև այն պատճառով, որ մեր հեթանոսական պատկերացումներում պարարտ հոր կար քրիստոնեության պաշտամունքի արմատակալման համար: Հեթանոսական հավատքում կար այն լույսը, այն բարին, այն մաքրությունը, որ քարոզում էր քրիստոնեությունը: Ալսած Հայկից, Արամից, Տորից ու Արայից մինչև Խալդ ու Արամազդ, Անահիտ ու Աստղիկ, Վահագն ու Միհր, հայոց հեթանոսությունը ողողված էր վեհով, գեղեցիկով, քաջությամբ, հայրենասիրությամբ:


Երբ Սահակ Բագրատունի իշխանը Մովսես Խորենացուն պատվիրում էր գրել ազգի պատմությունը, քաջ գիտակցում էր, որ առանց «Հայոց մեծաց ծննդաբանության»՝ հայկազունների ու նրանց սերունդների պատմության, չկա պատմություն Հայոց: Եվ այդ պատմությունը ծշմարտացի և սիրով շարադրելու շնորհիվ էր, որ խորենացի պատմիչը «Պատմահայր» ճանաչվեց սերունդների կողմից:

Անհրաժեշտ է դպրոցական ծրագրերում նցցնել Ս. Խորենացու «Հայոց պատմություն»-ից շատ սերմ դասընթաց-ընթերցումներ՝ ամենավառ իրադրությունների մատչելի ներկայացմանք, որպեսզի հայ պատման հայտնի նախաքրիստոնեական պատմությանն ու մշակույթին, առասպելաբանությանն ու բանահյուսությանը:

Բուհական դասընթացում տեղին կլինի «Կրոնի պատմություն» առարկայի ուսումնասիրումը, ընդ որում՝ լայն, համաշխարհային ընդգրկումներով, որպեսզի կիրք մարդը՝ ուսայա երիտասարդը, գաղափար ունենա ինչպես իր, այնպես էլ մյուս ժողովուրդների կրոններից ու դավանանքներից:

Այժմյան պայմաններում, երբ հայ երեխան, պատաժին ու երիտասարդը գերադասում են օտար արժեքները ազգայինից, սա հաճախ արդյունք է սեփականը չիմանալու: Շիվելով աշակերտի և ուսանողի հետ՝ նրանցից շատերը սիրով կծանաչեն հայրենին, ազգայինը, եթե այդ հնարավորությունն ունենան: Իսկ նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով կարծում են, թե սեփական արժեքները իրենց չեն հետաքրքրում կամ պետք չեն, գիտելիք ստանալով, վաղ թե ուշ, հասու կղանան ազգայինի գիտակցմանն ու գնահատմանը:

Հայոց հին ու նոր հավատքի առիթով կուզեի նշել ևս մի հանգամանք. հաճախ հայ հոգևորականներն իրենք են հինը՝ հեթանոսականը, դիտում իրուն թշնամական:



Սուրբ Էջմիածին. կրակարան խորանի տապ:



մերժելի, սխալ: Մի՞թե վերջին գիտնականն էր Մխիթարյան ճիշտաբանության անդամ, վանահայր Ղևոնդ Ալիշանը, որ գրեց «Հին հաւատը կամ հեթանոսական կրօնը հայոց» աշխատությունը, որտեղ, ծիչու է, «չաստվածներ» է համարում իին աստվածներին, սակայն անաշառ ու մանրամասն գիտական քննություն է կատարում իր ժամանակի հայագիտության ճակարդակին համապատասխան: Այս առումով գովելի աշխատություններից է նաև Կրտակ արքեպիսկոպոս Մանուկյանի «Հայ Եկեղեցու տօները» գիրքը (Թեհրան, 1960-ականներ), որտեղ, տուների, Եկեղեցական արարողությունների նկարագրության ու վերլուծությանը զուգընթաց, տրվում է հեթանոսական շրջանի ժողովրդական ծեսերի նկարագրությունը: Հաճ է մեզ, թե ոչ քրիստոնեական պատկերացումները, տոները, ծեսերը, ինչպես և կերպարները՝ Հիսուս Քրիստոսն ու Մարիամ Աստվածածինը, ունեցել են նախաքրիստոնեական ակունքներ ու նախատիպեր: Ինչպես հայտնի է, քրիստոնեական տաճարներն ել կառուցվել են հեթանոսականների տեղում, հաճախ՝ նրանց ճարտարապետությամբ և քարերով:

Վաղուց ժամանակն է, թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր կյանքում ընդունել, գիտակցել հայոց իին ու նոր հավատքների՝ մեզը նյոււսի բնականոն շարունակությունը լինելու հանգամանքը, և մեզ ու մեր սերունդներին չզրկել հեռավոր նախնիների ստեղծած անգերազանցելի արժեքներին հաղորդակից լինելու հնարավորությունից, որի հրավունքն ունի ամեն մի հայ:

Հայացքներս անցյալից հարենք ապագային:

Երրորդ հազարամյակ ենք թեակոխել, և ոչ միայն մենք, այլև աշխարհի բոլոր ժողովուրդները, հավատքի նոր գաղափարների որոնումների մեջ ենք: Համաշխարհային ընթացքներից մեկուսանալ չենք կարող, բայց շատ տուրք տալու հրավունք էլ չունենք:

Ի՞նչ է փոխվել իհման մեր հավատքի ոլորտում:

Լավն այն է, որ վերականգնվում են ազգային ավանդույթները, տոները, ծեսերը: Զատիկը արդեն ոչ միայն հայրենադարձ հայերի օջախներում է նշվում, այլև՝ տեղացիներին, ծիչու է, փոքր-ինչ անվտահ, ոչ լրիվ գրագետ, բայց հավատով ու նվիրվածությամբ՝ ավելին սովորենու և կենցաղում կիրառելու ձգտումով: Այսինքն՝ ժողովուրդը այն, ինչը փայփայանքով, գուրգուրանքով պահել-պահպանել է հազարամյակների, դարերի ընթացքում, այժմ փորձում է վերականգնել, վերակենդանացնել, իր ազգային կենցաղավարությունն ու հիշողությունը գրուն պահել: Եվ որպեսզի պատահներն ու երիտասարդները չհակվեն որևէ աղանդի կողմը, չընկեն աղանդավորների ցանցը, հայ ընտանիքները պետք է ավելի մեծ ուշադրություն դաստիարակելուն:

Ի՞նչ դեր ունի Հայ առաքելական Եկեղեցին ժողովր-

դի այս դժվարությունները հաղթահարելու գործընթացում: Չափազանց մեծ դեր, որը, ցավոք, թերի է կատարվում: Սկսենք մանուկներից, որոնց մի սովոր մասը մոլորով է հայթիայթում իր, գուցե նաև հարազատների (կամ էլ ոչ հարազատների) հանապազրյա հացը:

Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանյանը կոտորածներից մազապուրծ որբերին հավաքել էր Եջմիածնում, խնամում էր հիվանդներին չմտածելով վարակվելու կամ այլ բաների մասին: Ինչո՞ւ այսօր Հայատանյայց Եկեղեցին, որը, դարասկզբի Եջմիածնի համեմատ, շատ ավելի հարուստ է, առավել մեծ հնարավորություններ ունի, չի նախաձեռնում փողոցներում անտերդեգերող երեխաններին տեր կանգնելու գործը: Չէ՞ որ հիմա էլ դրությունն արտակարգ է, և մի ամբողջ սերունդ է հոգեպես հալվում, թե՛ նրանք, ովքեր մուրում են, թե՛ նրանք, ովքեր կուշտ ու անտարբեր անցնում են մուրացիկ երեխանների կողքից:



Նոյն ահազանգը կարելի է հնէցնել ծերերի կապակցությամբ: Ո՞ւր են անհետացել վանքերին կից ծերանոցները, անկելանոցները: Արդյո՞ք մեր Եկեղեցին միջոցներ չունի գոռնե ինչ-որ չափով նեցուկ լինելու մի ամբողջ կյանք ապրած, վաստակած ծերերին, ովքեր դաժան ճակատագրի բերումով հայտնվել են չքավորության կիզակետում: Ել ո՞վ պիտի ողորմա նրանց, եթե ոչ հայոց Եկեղեցին:

Միջին սերունդը նոյնական Եկեղեցու կողմից ուշադրության կարիք ունի, մասնավորապես՝ Երիտասարդությունը: Ինչո՞ւ հայ աղջկը փողոցում վաճառվելու արատավոր գործում չի հանդիպում Եկեղեցական սպասավորի վերաբերմունքի (Եթե սխալվում են, թող ինձ ուղղեն): Մի՞թե այդպես էլ պետք է լիներ, բոլորս անտարբեր պետք է դիտենք ապագա հայ մայրերի այսօրինակ ինքնաբարոյագրկումը: Եվ վերջապես, սովորական հայ մարդը կարո՞ղ է արդյոք Եկեղեցուն հոգեկան և, ինչու ոչ, նաև նյութական ապաստան գտնել ծայրահեղ հուսահատության պահին:

Գուցե սպասելիքները չափազանց մեծ են մեր հոգևոր տաճարից, սակայն իմ խորին համոզմանը, այսօր ևս հայ հասարակությունը Եկեղեցու օգնության կարիքն ունի, քանզի Աստծո տաճարն այն վայրը է, որը հավատավոր մարդը ոտք է դնում՝ բարձրյալի ողորմածությունը նուալով, նրա բարեհաճության արժանանալու հավատով: Ամենևին չակնկալելով՝ թե Եկեղեցին մեր բոլոր հոգսերը հոգալու, ուղում են հավատալ, որ ազգային կարևորագույն խնդիրները լուծելու պարագայում այն, իրո՞ք, միջնորդ է Աստծոն և ժողովրդի միջև:

**ԳՈՐԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
Ազգագրագետ,
պատմական գիտությունների թեկնածու**



ՄԵՍԱՐՈՒԹ

ՄԱՍՈՑՈՅՑ

Յայ ժողովուրդը այս երևելի հոգևորականին է պարտական հայոց այրութենի ստեղծման համար, որը դարձավ հայ ժողովորի ինքնապահապանման առաջին կրկանը: Գրերի գյուտը, կարելի է ասել, հայության համար ունեցած իր պատմական նշանակությամբ, գրեթե, հավասարը չունի: Մաշտոցի ավագ աշակերտներից Կորյունը «Վարք Մաշտոցի» երկում խոսում է իր ուսուցչի կյանքի, նրա ազգանվեր գործունեության, քրիստոնեական կրոնին նրա նվիրվածության և Ավետարանի քարոզչության, հայ ժողովորի լուսավորության վերաբերյալ նրա մտահոգությունների և, վերջապես, գրերի գյուտի մասին: Կորյունը Մաշտոցին համեմատում է աստվածաշնչյան Մովսես մարգարեի հետ, որին Աստված ընտրում է՝ որպես հրեաների առաջնորդ, և նրա միջոցով հրեաներին փրկում է եգիպտական գերությունից, ու նրան է հաճանում «Տանաբանյա պատվիրանները»:

Մաշտոցը ծնվել է մոտ 362-ին, Տարոն գավառի Յացեկաց գյուղում, մահացել է 440-ին Վաղարշապատում, թաղված է Օշականում: Սկզբնական շրջանում զինվորական ծառայության է անցել, սակայն 394-ին, բողմելով այն, դարձել է հոգևորական: Յայկական գրերը ստեղծելու մտայնությամբ եղել է Ամիդ, Եղեսիա, Սամսոստ քաղաքներում, որոնք ժամանակի կրթական մտքի կենտրոններից էին: Մաշտոցը «սուրբ աջովն իւրով» 405թ. ծնունդ տվեց հայկական գրերին և գրեց հայերեն առաջին նախադասությունը. «Ճանաչել զինաստութիւն եւ զիսրատ, իմանալ զրանս հանճարոյ»: Գրերի գյուտից հետո մեծ թափ առավ հայ դպրության զարգացումը, նա հավաքեց աշակերտներին, իհմմեց դպրոցներ: Ծավալվեցին թարգմանական աշխատանքներ. առաջինը թարգմանվեց Աստվածաշունչը:

Մաշտոցը լինելով ուսույալ մարդ՝ տիրապետել է հունարենին, պարսկերենին, ասորեներին, վրացերենին: Նա քողել է մատենագրական մեծ ժառանգություն. ճառեր, թարգմներ՝ ավետարանական ճշմարտություններով ներթափանցված: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ Գրիգոր Լուսավորչի անվանք հայտնի Յաճախապատում ճառերի հեղինակը Մաշտոցն է (ճառերում կան 4-5-րդ դարերի՝ մաշտոցյան ժամանակի), իրադարձությունների արձագանքներ, 5-րդ դարում թարգմանված Եկեղեցու նշանավոր հայրերի մտքեր և այլն), իսկ մյուսները կարծում են, որ ճառերն ուղղակի թարգմանվել են Մաշտոցի կողմից, և որոշ ավելացումներ են կատարվել:

7-րդ դարից մեզ հասած մի վկայության հիման վրա՝ ուսումնասիրողները (Մար, Աղոնց) ենթադրում են, որ Սր. Գրիգոր Լուսավորչի մասին գրույցներն առաջին անգամ հավաքել և շարադրել է Սեպոս Մաշտոցը, այդպիսով՝ լինելով Լուսավորչի առաջին վարքագիրը:

Բացի դրանից, Յայոց Կամոնագործի միջնադարյան խմբագրություններում առկա է Մաշտոցի անունով մի գրվածք: Մասնագետների համոզմանք՝ սա Մաշտոցի




մեզ չհասած շրջաբերական թղթից մի քաղվածք է, որը նա հայոց գավառներ էր ուղարկում: Այս երկն ունի ուսուցողական բնույթ, այն ուղղված է տարբեր հմայությունների դեմ, և ովքեր հավատում ու կատարում են նման հմայություններ, նզովյալ են Եկեղեցու մեջ:

Մաշտոցի անունով հայտնի են Ապաշխարության կարգի շարականները, նա հորինել է նաև հոգևոր երգեր՝ պահիք ժամանակ երգելու համար (Պահիք յոթ շաբաթների օրերի քանակով): Մաշտոցի գրչին են պատկանում ապաշխարության կարգի «Ողորմեա»-ները, «Տեր յերկնիցը»-ը, «Մանկուք»-ը՝ շուրջ 130 բանաստեղծություն: Մաշտոցի ժամանակ սրանք կոչվել են երգեր, հետագայում անվանվեցին շարականները: Մաշտոցյան շարականները ներմուծվել են «Ժամագիրը», «ճաշոց» և «Մաշտոց» ժողովածուների մեջ: Նրա հոգևոր բանաստեղծությունները, երգերը աչքի են ընկնում իրենց իմքնօրինակությամբ, հոգևոր ապրումի մաքրությամբ:

«Ծով կենցաղոյս հանապաց զիս ալեկոտ, Մրրկեալ ալիք քշնամին ինձ յարուցանէ. Նաւապետ բարի, լեր անձին ինոյ ապաւեն: Ի խորս մեղաց ծովու տարութերեալ ծփին.

Նաւապետ բարի, փրկեա զիս: Այս բանաստեղծության մեջ այլաբանական պատկերների մեջ խտացվում են քրիստոնեության կրոնական ըմբռնումները, օրինակ՝ Նավապետը մարմնացեալ Աստված է, ով առաջնորդում է և ով կարող է փրկել: Սա վկայում է հեղինակի խորը հավատի և ժողովրդին քրիստոնեական ճշմարտություններին հաղորդակից դարձնելու մասին:




Սահակ Պարթևը և Մաշտոցը կարգավորել են հայոց բանավոր ժողովրդական ու հոգևոր ձայնեղանակները և օգտագործել Եկեղեցական երաժշտության մեջ՝ երաժշտության ելեզում պայմանավորելով հայոց լեզվի հնչերանգով: Բացի հոգևոր երգերից, Մաշտոցը նաև աղոթքների հեղինակ է (Աղոթք սրբոյն. Մեսրոպյա հայոց թարգմանչի):

Պարզ է, որ Մեսրոպ Մաշտոցն իր հոգևոր, քաղաքական, մշակութային գործունեությամբ մեկ տեսիլք ուներ, որը խտացնում էր իր մեջ հետևյալ գաղափարները՝ հայ ժողովրդի իմքնապահպանություն, ազգի լուսավորություն (հայերեն լեզվի և հայ դպրության միջոցով), հայության քրիստոնեացում: Յայ Եկեղեցին Մաշտոցին դասել է սրբերի շարքը:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Շողակաթ Եկեղեցին գտնվում է Էջմիածին քաղաքում՝ Յօհիփսիմե Եկեղեցու մոտ։ Շողակաթ Եկեղեցու տեղում ժամանակին կառուցված է եղել Սր. Մարինե կույսի վկայարանը։ Վկայարանի տեղում (երբ այն արդեն կիսաքանդ է եղել) 1964թ. Եղեսացի Նահապետ Ակաթողիկոսի օրոք (1691-1705թ.) կառուցվել է Սր. Շողակաթ Եկեղեցին։ Ըստ ավանդության՝ Սուրբ Կույսի վկայարանը Շողակաթ է կոչվում այն պատճառով, որ Սր. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով լույսի շող է իջել Մարինե կույսի շիմի վրա։ Շողակաթը, Յօհիփսիմե և Գայանե Եկեղեցիների համեմատ, ավելի ուշ շրջանի կառուց է։ Այն պատկանում է Հայաստանում դեռևս 6-7-րդ դարերում մշակված (Պտղնի, Արուծ) «Գմբեթավոր սրահ» կոչվող Եկեղեցիների տիպին։ Եկեղեցու սրահը իր միջին մասում պսակված է նրբակերտ մի զանգ-աշտարակով, իսկ ավագ խորանում կառուցվել է սեղան և երկաթակուր ջահ։ Պարսպապատել և բարեկարգել են բակը (նախագիծը՝ ճարտարապետ Տ. Չախալյանի)։ Բակում կառուցվել է երեցուն, տեղադրվել է բազալտից ցայտադրյուր՝ հետևյալ



արձանագրությամբ։ «ՈՆԼԶ (1987) Ի ՅԻՇԱՏԱԿ ԿԵՍԱՐԻՅՈՅ ՊՈԽՆԵԱՆ ԳԻՈՒԴԻ ՆԱՐԱՏԱԿԱՆԵՐԻ. ՆՎԻՐՈՒՄ ԵՆ ԽՈՐԵՆ ԵԿ ԵՐՈՒՍԱՂՈՒՅԻ ԱՍԱՑՈՒՐԵԱՆՆԵՐԸ»։

1988թ. Երկրաշարժից տուժել է Սր. Շողակաթ Եկեղեցու զանգակատունը, որը մինչև իհմա չի վերանորոգվել։ Եկեղեցու դռան աջակողմյան պատին կա մարմարյա մի տապանաքար, որի վրա կա հետևյալ արձանագրությունը։ «ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹ ՏԱՅԱՐԸ ՅԻՄՍՎԵԼ Է VII Դ., ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵԼ Է 1694Թ. ՆԱՐԱՊԵՏ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ, ԱՅՍՏԵՂ ԱՄՓՈՓԱԾ Է Ս. ՄԱՐԻՆԵ ԿՈՂԵՄԻ ԱՃՅՈՒՆԸ»։ Այստեղ ամփոփված է նաև Նահապետ Ա և Կրետացի Արքահամ Գ Ամենայն Յայոց կաթողիկոսների աճյունները։

Եկեղեցու ավանդատանն է գտնվում Սր. Մարինե կույսի գերեզմանը, նրա շիրմաքարին գրված է՝ Սուրբ Շողակաթ։ 1998թ. բարերար Արամ Վարդանյանի ծախսերով շիրմաքարը փոխարինվել է մարմարե քարով, որի վրա գրված է՝ «Սուրբ Մարինե»։

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«ՎԱՏԻԿԱՆԻ ՌԱԴԻՈՆ»՝ ԹՈՒՐՖԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՒՆԱՐՁԱՆՆԵՐԻ ՌԴՆՇԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես հայորդում է Մեղիմաքս գործակալությունը, Յօնմի Կարուիկ Եկեղեցու պաշտոնական մարմինը՝ «Վատիկանի ռադիոն» հայորդում է հեռարձակել Թուրքիայում հայկական ճարտարապետական հուշարձանների ոչնչացման մասին։

Ուսուրացածում «Վատիկանի ռադիոն» մեջքերել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժնի վարիչ Ռուբեն Սաֆրաստյանի խոսքերն այն մասին, որ «Թուրքիան գրադարձ է հայկական մշակույթի կանիքալիզմով՝ յուրահատուկ մարդակերությամբ»։

Վկայակոչելով Սաֆրաստյանին՝ «Վատիկանի ռադիոն» նշել է, որ 1915 թվականի Յայոց ցեղասպանությունից հետո Արևմտյան Հայաստանի տարածքում մնացել է 913 հայկական Եկեղեցիներ ու վանքեր։ 1974 թվականի տվյալներով, դրանցից մնացել է 913 464-ը, որոնցից 212-ը գտնվում է նա կիսաքանդ վիճակում, իսկ 197-ը անհապաղ վերանորոգման կարիք ունեին։ Մերօրյա փաստերն էլ ավելի տիտուր են։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Այս տարի աշնանը Երևանում անցելացվելու են Գերմանիայի Սաքսոնիա-Անհալտ երկրամասի մշակութային օրեր։ Թե ինչպիսի՞ ծրագրեր կան, ի՞նչ է արվելու։ Անհայացնում է Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Կարինե Ղազինյանը։

- Սեպտեմբերի 2-7-ը Երևանում կկայանա «Սաքսոնիա-Անհալտի այցեքարտը» անվանյալ միջոցառումների շարքը։ Յայաստան կժամանի Սաքսոնիա-Անհալտի պաշտոնական պատվիրակությունը՝ մշակույթի նախարար Յան-Շենորիկ Օլբերտցի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում կլինի նաև Բունդեսքաղաքական պատգամավոր, Գերմանիա-Հարավային Կովկաս խորհրդարանական խմբի նախագահ Քրիստոֆ Բերգները, ով մեծ նպաստ բերեց Բունդեսքաղում Յայոց ցեղասպանության բանաձիկ անցկացմանը։ Տարեցտարի ընդլայնվող մշակութային համագործակցության հետ մեկտեղ անհրաժեշտություն է դարձել ակտիվացնել նաև գիտակրթական կապերը։ Մշակութային օրերի շրջանակներում նախատեսվում է նոր պայմանագիր ստորագրել մշակույթի և գիտության բնագավառում։ Պաշտոնական բացման համերգին կիետևեն ֆուտոցուցահանդեսներ, տիկնիկային ներկայացումներ։ Ծրագրված է հայ և գերմանացի պատմաբանների հանդիպումը Մատենադարանում։



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱՇՈՒՆԵՐԸ. ԷՇՄԻԱՇՆԻ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ՀԱՎԱՔԱՇՈՒ

Մատենադարանը աշխարհի հնագույն և ամենահարուստ ձեռագրատներից մեկն է: Նրա միայն հայերեն ձեռագրերի հավաքածուն այսօր բովանդակում է 10.171 ամբողջական ձեռագիր և 1.683 ձեռագիր պատահիկներ:

Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի հիմքում ընկած է Էջմիածնի նախկին գրատան հավաքածուն, որի պատմությունը սկսվում է դարաշրջան կազմող այն օրերից, երբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական գիրը և իհնք դրեց ազգային նատենագրությանը:

Լինելով հայոց պետականության և հոգևոր կյանքի կենտրոն՝ քաղաքանայր Վաղարշապատը 5-րդ դարի վաղ արշալուսին հանդիսացավ այն մտավոր կենտրոնը, որի դպրոցներից դուրս եկած սաները մեսրոպյան լույսով ողողեցին ողջ Հայաստանը՝ ավանդելով այնախսի նի մատենագրություն, որը հայ ժողովրդի ելեւթերով հարուստ պատմության ամբողջ ժամանակաշրջանում միշտ հույսի ու ոգևորության անսպառ աղբյուր հանդիսացավ:

Որպես նորաստեղծ հայ դպրության կենտրոն, ուր առաջին թարգմանիչները՝ անսպառ եռանդով ու փութաջանությամբ թարգմանություններ էին կատարում հունական և ասորական մատենագրությունից, իսկ առաջին հայ հեղինակները շարադրում էին իրենց երախայրիքները, Վաղարշապատը, բնականաբար, պետք է ունենար իր մատենադարանը:

Պատմությունը, դժբախտաբար, չափազանց ժատ է, գորեք ոչ մի տեղեկություն չի տալիս Վաղարշապատի այն ժամանակվա մատենադարանի և նրա ունեցած մատյանների մասին: Դժվար չէ ենթադրել, որ դրանք պետք է լինեին հունարեն ու ասորերեն և բովանդակելին Սուրբ գրքերն ու քրիստոնյա հայրերի աստվածաբանական-դավանաբանական աշխատությունները, որոնք անհրաժեշտ էին նոր կրոնի տարածման և ամրապնդման համար: Դրանց վրա հետագայում պիտի ավելանային Մեսրոպի և նրա աշակերտների (Ամին, Եղիսիա) և Սամոսատ, ինչպես նաև Արենք և Ալեքսանդրիա) ուսանելու մեկնածների, իրենց հետ հայենիք թերած մատյանները: Ավելի ուշ Վաղարշապատի մատենադարանը պիտի հարստանար այդ մատյանների հայերեն թարգմանություններով և առաջին հայ հեղինակների ինքնուրույն գործերով:

Հայաստանի քաղաքական անկայուն վիճակը, թշնամական հորդաների անընդմեջ արշավանքներն ու կողոպուտները պատճառ են դարձել, որ հայրապետական գահը ստեղծ-ստեղծ տեղափոխվի մերը Դվին, մերը Ազի և մերը էլ հեռավոր Կիլիկիա: Իսկ այս հանգամանքը, բնականաբար, չէր կարող բացասաբար չանդրա-

դանալ Վաղարշապատում մտավոր կյանքի զարգացման վրա:

Ժամանակի գործիչներից շատերը, ինչպես Խաչատուր Կեչառեցին, Ստեփանոս Օրբելյանը, Թովմա Մեծովեցին և ուրիշներ, ցանկանում էին, որ Էջմիածնն նորից շենանա, վերագտնի իր նախկին փառքը, և հայրապետական գահը նորից վերահաստատվի այնտեղ: Այս ցանկությունը, վերջապես, իրականանում է 1441-ին, երբ հազարամյա ընդմիջումից հետո (441-1441թ.) հայրապետական գահը Սիսից տեղափոխվում է Էջմիածնի: Սկսվում են շինարարական աշխատանքները, վաճքի շուրջն են համախմբվում նոր միաբաններ, և Էջմիածնին

ու շրջակա վաճքերը նորից դառնում են մտավոր կյանքի ու գրչության արվեստի ծաղկման կենտրոններ: Մտավոր կյանքի աշխատացման մասին են վկայում XV-XVI դարերում Էջմիածնում և շրջակա վաճքերում ընդորինակված բազմաթիվ ձեռագրերը:

Հինարարական աշխատանքները մեծ թափ ու ծավալ են ստանում կաթողիկոս Ջակոբ Չուղայեցու ժամանակաշրջանում (1655-80թ.): Նրա օրոր Էջմիածնի վաճքում, աշխատում էին բազմաթիվ գիտնական-վարդապետներ, որոնցից մեկն էր նաև Ստեփանոս Լեհացին, ով խոչը ներդրում ուներ ինչպես հայ մատենագրությունը ինքնուրույն ու թարգմանական նոր աշխատություններով հարստացնելու, այնպես էլ աշակերտներ պատրաստելու գործում:

Այդ ժամանակ Էջմիածնի Մատենադարանը կամ (ինչպես ժամանակակիցներն են անվանել) գրատունը արդեն եղել է կանոնակարգված մի հաստատություն: 13-րդ դարը, ինչպես ողջ Հայոց պատմության, այնպես էլ Էջմիածնի մայրավանքի և նրա Մատենադարանի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններց մեկն է: Թուրք-պարսկական պատրիք պատերազմները, պարսիկ իշխողների խժդություններն ու հաճախակի դրածած ավարառությունները, ինչպես նաև Էջմիածնի մի շարք բարձրաստիճան հոգևորականների անուսումնասեր լինելը այնպես են ամայացնում վաճքն ու գրատունը գրչագրերից և ուսումնասեր միաբաններից, որ դարավերջին նրա բազմահազար ձեռագրական գանձերից շատ թիւ բան է մնում, իսկ գիտությամբ գրադպուղ՝ և ոչ մի անձ:

Ինչպես ողջ Արևելյան Հայաստանի, այնպես և Էջմիածնի մատենադարանի պատմության համար մի նոր շրջան է սկսվում 1828-ից, երբ ռուսական բանակը և հայ կամավորները գրավում են Երևանը:

ԱՐԴԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



«ՄՇԱԿ»



Գրիգոր Արծրունի

Հայ մանուկի պատմության մեջ իր հաստատում տեղն ունի «Մշակ» պարբերականը, որը լույս է տեսել 1887-ին, Թիֆլիսում: Հիմնադիրը Գրիգոր Արծրունին էր, ով իր «Մշակ»-ով հիմք դրեց լիբերալ-ազատական հոսանքին, այսուել՝ խմբագրական աշխատանքներում, մեծ ավանդ ուներ նաև Քաղաքացիության:

Պարբերականի հիմնադիր-խմբագիր 1892-ի դեկտեմբերին վախճանվեց. լրագրի հրատարակումը դադարեցվեց 10 ամսով: Այդ ընթացքում որոշվում էին նոր խմբագրի հաստատման ու պարբերականի գաղափարական ուղղվածության հարցերը, միևնույն ժամանակ նոր գլխավոր աշխատակիցների հետագա գործունեությունը:

Գ. Արծրունու այրին՝ Մարիամ Մելիք-Ադամյանը դիմում է գրաքննական կոմիտե՝ Համբարձում Առաքելյանին «Մշակ»-ի խմբագրի պաշտոնում հաստատելու խնդրանքով: Սակայն մանուկի գործերի գլխավոր վարչությունը մերժում է այդ թեկնածությունը՝ նկատի ունենալով որոշ հանգամանքներ: Նշվում է, որ Արծրունու կենդանության օրոր Յ. Առաքելյանին չի հաջողվել իր գաղափարները գետեղել մանուլում, որովհետև Արծրունին հետևողականորեն դիմադրում էր 1880-ակամմերի հայ նարողմիկ գործիչների տպագրությանը «Մշակ»-ի էջերում: Չնայած՝ Յ. Առաքելյանը չհաստատվեց խմբագրի պաշտոնում, բայց մնաց թերի գլխավոր աշխատակիցներից ու հրատարակիչներից մեկը մինչև 1913թ., երբ վախճանվեց Քաղաքացիության նախարար և աշխատեց մինչև իր ողբերգական մահը: Ունենալով լիբերալ հայացքներ՝ Յ. Առաքելյանը 1905-ից սկսեց հարել Սահմանադիր Ռամկավար կուսակցությանը և դարձավ կարետների գաղափարների ջերմ պաշտպան արևելահայ իրականության մեջ: 1906թ. «Մշակ»-ի առաջին համարներում թերթը հայտարարվեց կարետների պարբերական և իրատարակեց հինգես կուսակցության ծրագիրը, այնպես էլ նրանց հայացքներին հարազատ մեկնություններով շաղախված հոդվածներ: Սակայն կարետական ջատագով լինելով հանդերձ՝ «Մշակ»-ի գործիչները իրենց գործունեությունը ծավալում էին գլխավորապես հայ ազգային իդեալների և խնդիրների շրջանակներում:

1905-07թ. պարբերականի աշխատակիցները հաճախ օգտագործում էին եզրվառյան լեզուն՝ երկրում տիրող իրավիճակը մերկացնելու համար: Ապա հոդվածագիրն անդրադառնում է թուրքիայում տիրող կացությանը և նկատում, որ այնտեղ՝ Արևմտյան Հայաստանում, հայության վիճակը ծանր է: 1907-ին թուրքական կառավարությանը Մուշի և Բիթլիսի նահանգներից արտաքսում է տեղաբնակ հայերին: Չղիմանալով ճնշումներին ու հալածանքներին՝ հայերը հեռանում էին նաև երգորսից ու Դիարբեքիրից:

«Հայաստանը մոռացված» առաջնորդողում Առաքելյանը գրում է, թե տասնյակ տարիներ ի վեր հայկական հարցը շշակվելու է ամենատարբեր ասյաններում, սակայն, երբ Անգլիան ու Ռուսաստանը նոր դաշնագրեր են կնքում, հարցի լուծման գործընթացը առաջ չի շարժ-

վում՝ մնալով քաղաքական խաղերի առարկա: Իսկ հեռագրերը նորանոր սարսափազդու լուրեր էին բերում Աղանայից, Կիլիկիայից և հայաշատ մյուս վայրերից: Այս թե ինչո՞ւ մշակականները կարծում էին, որ հայերը պիտի պատրաստ լինեն ինքնապաշտոպանության, այդ ուղղությամբ ձեռք առնեն բոլոր հնարավոր միջոցները: Նրանք ապստամբելու կամ նախահարձակ լինելու կոչ չին անում, բայց ցանկանում էին ժողովրդի գիտակցության մեջ արմատավորել օրինական պահերին ինքնապաշտպանության դիմելու գաղափարները: Առաջին համաշխարհային պատերազմի լուրը տագնապով ընդունեցին մշակականները, ովքեր իրենց թերթի էջերում քաջալերում էին հայ ժողովրդին՝ առաջ մղում, հույս ու հավատ ներշնչում:

Թերթը բազմիցս անդրադարձել է հայ գյուղին, գյուղական առօրյային ու խնդիրներին: Քաղանթարը գիտեր, որ գյուղացին նորությունները շատ դժվար է ընդունում, բայց նաև համոզված էր, որ դրանց առավելությունների դրսևորման դեպքում աստվածավախ մարդիկ կընդունեն այն: Եւղինակները հասարակական կյանքի բոլոր օղակներն օգտագործում էին ազգի լուսավորության համար: Միայն այս ուղիով էին նրանք ձգուում առաջարինության հասնել: Եվ բնական է, որ Գ. Արծրունու պես, նրանք էլ պահանջում էին մարդու, ընտանիքի, կնոջ,



համայնքի և ողջ հասարակության զարգացում: Այդ դերը մեծ մասմբ հատկացնելով եկեղեցուն՝ այնուամենայիվ, նրանք պահանջում էին հիմնավոր բարենորոգումներ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության համակարգում: Այս իմաստով թերթը ուշադրություն էր դարձնում ուսուցման արդիականությանը, սեռերի փոխհարաբերությանը, հայրեր-որդիների հիմնահարցին: Դնում էր նաև անհատի ազատության պահանջը հիմնված ընտանիքի անդամների հավասարության վրա՝ պահանջելով պատշաճ տեղ հատկացնել նոր սերնդին, որը հակված էր դեպի նորը, առաջավորը:

1905-21թ. «Մշակ»-ը, Գ. Արծրունու նման տարածայնություններ ունենալով հայ հոգևոր գործիչների հետ, ոչ թե ժամանակում էր լուսավորչական եկեղեցին ընդհանրապես, այլ ցանկանում էր այն կատարելագործված տեսնել:

Յ. Առաքելյանը թերթը խմբագրեց մինչև 1918-ի հուլիսի 9-ը՝ իր եղերական մահը, երբ անհայտ չարագործների ձեռքով սպանվեց իր բնակարանում: Կյանքից անժամանակ հեռացած խմբագրին թերթը բնութագրում է իրեւ սկզբունքային և ուղղամիտ մի մտավորականի, ով մինչև վերջ պայքարել է իր համոզմունքների և գաղափարների համար, նպաստել՝ հայ հասարակական - քաղաքական մտքի զարգացմանը: Յիրավի, այդպիսին էր «Մշակ»-ի անաշար խմբագրը, ով Քաղանթարի և մյուս մշակականների օգնությամբ կարողացավ ոչ միայն «պահպանել» «Մշակ»-ի արծրունյան դիմագիծը, այլև՝ որպես արժանի ժառանգորդ ու իրավահաջորդ, զարգացնել ու ավելի հեղափոխականացնել այն, դրանով հաստատելով պարբերականի բացառիկ դերը հայ մանուկի պատմության մեջ:

ԼԻԼԻԹ ՂԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՆՈՒՐ. ՄՈԳԱԿԱՆ ՃԻՋ



«Պետք չէ պարօնալ ազգությամբ, պետք է ապրել այնպես, որ ազգը հպարտանա քեզանով». այս կարգախոսով է առաջնորդվում արվեստագետ Նուրը և փորձում իր լուսան ներդնել Հայ ազգի անունը բարձրացնելու գործում: Մատաղ սերնդին նա խորհուրդ է տալիս, որ ուղղորդվեն այս կարգախոսով:

Նուրն ավարտել է Երևանի Կիրառական արվեստի, ապա՝ Մոսկվայի Թարագիտության ինստիտուտները, որից հետո՝ Միացյալ Նահանգներում ուսանել է Մայամիի Արվեստի համալսարանում: 15 տարի է, ինչ արվեստի աշխարհում է և արդեն յոթ տարի է մուտք է գործել միջազգային ասպարեզ՝ ցուցահանդեսներից ստանալով գլխավոր մրցանակներ և դիալոգներ:

- Ի՞նչո՞ւ հենց Նուր...

- Մանկապարտեզում կազմակերպված մի հանդեսներկայացման մեջ են Նուրն էի (այդ ժամանակ չորս տարեկան էի): Տարիների ընթացքում բոլորի անունները մոռացվեցին, ինչ՝ մնաց: Սկզբում պայքարում էի դրա դեմ. ինձ ծիծառելի էր թվում: Նետո հասկացա, որ եթե մարդիկ այդպես են ինձ կոչում, պետք է դա ընդունել:

- Ի՞նչ խորհուրդ ունի Նուրը համար:

- Նուրը խորհրդանշում է կյանք, որովհետև նա մի մոգական ծիգ է: Զկա մի միրգ, որի ներսի հատիկներն են ուտելու, այլ ոչ թե արտաքինը, և որի մեջ հատիկները 365 են, և դրանք էլ բաժանվում են 12 մասերի, իսկ ամեն մասում՝ 30-31 հատիկ:

Նուրը մեծ խորհուրդ ունի և շատ պատմություններ կան նրա մասին: Ինքս ինձ «Նուր» գգում եմ: Տարիների ընթացքում սովորել են այդ մտքին: Եթե ինձ Նուր են ասում, ուրեմն ինչ-որ մի բան տեսնում են իմ մեջ: Եվ հետո ես այլ կերպ ինձ չեմ էլ պատկերացնում: Երբ նուր են ասում, ինձ թվում է ինձ են կանչում:

- Յիշո՞ւմ եք Ձեր առաջին աշխատանքը:

- Այդ աշխատանքի պատրաստելու պահը կա լուսանկարի տեսքով (ես անգամ չեմ էլ իմացել, միայն վերջերս նվիրեցին ինձ այդ նկարը, որը մեծ անակնկալ էր ինձ համար): Այդ աշխատանքը ես կերտել եմ չորս տարեկանում: Քանդակել եմ կավից բու, որը մինչև այսօր ցուցադրվում է Մանկական վերականգնողական հիվանդացի սրահում:

Ասում են Աստված ստեղծեց մարդուն և աշխարհը, հետևաբար՝ Աստված ստեղծագործող է, և եղբ դու ես մի փոքր մոտենում այդ արարման ընթացքին՝ քեզ մի քիչ «Աստված ես գգում»: Այդ ժամանակ հոգեկան բավարարվածություն ես գգում, որ կարողացար քո ձեռքով ինչ-որ մի բան ստեղծել:

- Ի՞նչը կարող է Ձեզ ոգեշնչել, որպեսզի ծնվի մի



Նոր, յուրահատուկ քանդակ:

- Մարդը, ում հետ ես շփվում եմ, իմ ստեղծագործական բանաձևն է. մարդու հետ շփվելուց հետո, այդ զգացողությունը փոխանցել մարմնավորել իրի մեջ: Դրա համար, ինչպես մարդիկ, այնպես էլ իմ ստեղծագործությունները տարբեր են:

Իմ աշխատանքները իմ երեխաներն են: Ես նրանց «բեղմնավորում եմ» իմ մեջ, «կյանք տալիս»՝ իմ ծեռքերի շնորհիվ: Իմ հիմնական արտահայտման ոճը անհմացին քանդակագործությունն է, որը կատարում եմ ոչ թե պատվիրատուի ցանկությամբ, այլ՝ իմ: Աշխատանքներիս մի մասը կազմում են ուսկյա իրերը:

- Ձեր արվեստանոցը նաև փոքրիկ դպրոց-ստուդիա է... ի՞նչ է հարկավոր Ձեզ մոտ ընդունվելու համար:

- Այստեղ պատրաստում եմ ապագա մասնագետներ, ովքեր արվեստի աշխարհ են մտնում որպես դիզայներներ և մոդելյորներ: Ընդունվելու համար՝ ոչինչ, եթե կա ցանկություն՝ մնացածը ես եմ սովորեցնում... Ուղղակի պետք է այդ ցանկությունը լինի անվերջ և անսահման:

- Ձեր սաներից այսօր դիզայնի ասպարեզում կա՞ն:

- Այո՛, աշխատում են դիզայնի ասպարեզում իրեւ մոդելյորներ: Ես միայն ուրախանում եմ իրենց լավ հաջողություններով և տիւրում վատից: Վատն է այն աշակերտը, ով չի գերազանցում իր ուսուցչին, և վատն է այն ուսուցիչը, ով գոհ է իր աշակերտից:

Չորս տարի եղել եմ Կիրառական արվեստի ինստիտուտի պրոռեկտոր, մինչ օրս համատեղ դասավանդում եմ և այստեղ, և Մոսկվայում, և Միլանում: Նշեմ նաև, որ այս տարի մեկնեցի Միլան և այնտեղ անցկացրի դիզայնի դասընթացներ: Յամարում եմ, որ դա իմ կողմից նվաճում է:

- Խոսենք Ձեր քանդակներից:

- Իմ քանդակների հավաքածուն մեծ է և արտահայտված տարբեր ձևերով, որը հոգեբանական թեալիզմի արտահայտում է:

Ես քանդակագործության մեջ հայտնի եմ ինք քանդակակից կազմված «Յանձնար» կոչվող աշխատանքով, որի շնորհիվ համաշխարհային արվեստում դարձա անիմացիոն քանդակագործության մեջ հայտնի եմ ինքնանդիրը: Այդ քանդակները առայժմ եղակի են, և դարձել են իմ այցելարտերը, ամենուր ինձ ճանաչում ու ընդունում են այդ աշխա-



«Լիլիթ»



տանքներով: Ես երբեք չեմ բաժան-
վում դրանցից:

«Հրից ծնված կինը» քանդակը
պատկերում է Լիլիթի ծնունդը: Երբ
Աստված հողից ստեղծեց Աղամին,
կրակից էլ կիմ՝ Լիլիթին: Բայց Լիլի-
թը չափազանց կրօտ էր և իր կրա-


կով գերում էր հողեղեն Աղամին:

Յանուն Աղամի՝ Լիլիթը զոհաբերում է իրեն և
գնում երկրի ընդերքը: Աստված որոշում է
ստեղծել Եվային այս հողից, ուր գնացել էր Լի-
լիթը, ում մեջ էլ ապրում է Լիլիթը:

Իմ պատկերացմամբ կնոց խորհրդանշից
գունդն է, քանի որ գունդը մի ամբողջություն, ան-
վերջություն և կատարելություն է: Եվ վերջապես մի
տեղ է, որտեղ կարող է կյանք ծնվել, և որտեղ տղամար-
դը ընդամենը մի գենք է մասնիկ: Ես իմ բոլոր սիրելի կա-
նանց նվիրում եմ ուսկյա զարդեր՝ յուրաքանչյուրին ան-
վանում՝ կրողի անունով:

- Դուք նաև հագուստի՞ դիզայներ եք:

- Ես զբաղվել եմ նաև հագուստի դիզայնով: Դրանք
եղել են արտահայտման ձև և առևտրական բնույթ չեն
կրել և չեն էլ կարող կրել, քանի որ դրանք միայն նախա-
տեսված են եղել ցուցադրության նպատակով:



- Ի՞նչ նորություններ կան Ձեր ստեղծագործական
կյանքում:

- Պատրաստվում եմ նոր ցուցահանդեսի, որը բաղ-
կացած կլինի երեք մասից: Մի ցուցաբահում կլինի մի
աշխարհ՝ կազմված վարսուն աշխատանքներից: Մյու-
սում Լիլիթը՝ կրակից ծնված կինը, իսկ երրորդում Եվան:

Վախենում եմ կնամոլ թվակ, բայց իմ ամբողջ կյանքը
նվիրել եմ կին էակին և փորձում եմ նրա համար
ստեղծել գեղեցկություն: Իսկ ցուցահանդեսի
Աղամը կլինեն ես:

Կարելի է ասել մեծ շոու է լինելու, որը աշ-
նանը անպայման կցուցադրվի Յայաստանում,
որից հետո՝ Փարիզում և Սյուլ Յորդում:

Տարեկան երեք-չորս միջազգային ցուցահան-
դեսների եմ մասնակցում: Անյալ
տարի մասնակցելով Սոսկվայում
համաշխարհային դիզայներական
մրցույթին՝ համարվեցի տարվա
«Յամաշխարհային դիզայներ»: Այս
աշնանը՝ սեպտեմբերին, կմեկնեն
Սոսկվա՝ կրկին մասնակցելու այդ մր-
ցույթին՝ նոր հաղթանակի ակնկալիքով:

ԼԻԼԻԹ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆՈՆԵՆԻ

Մեզանից չորսուկես հազար տարի առաջ, Յայոց աշ-
խարհում, Վրույր անունով մի ինաստում բժիշկ էր ապ-
ուում: Սա իր պարտեզում աճեցնում էր ամեն տեսակ ծառ
ու ծաղիկ, նրանից դեղեր ու կենարար հյութեր էր պատ-
րաստում և բուժում՝ մարդկանց: Նա հաշվել է, որ միայն
նորան հյութը դարմանում է քառասուն ցավ: Բայց այն
ժամանակվա նոնենին ուրիշ էր: Յատիկները տուփերի
մեջ չեն հավաքում, ինչպես այժմ: Ծաղի բոլոր ճյուղերը
պատած էին նոնահատիկներով: Դե՛, արի ու իմացի, թե
քանի՞սն են դրանք:

Այս բոլորն ասում ենք ոչ թե նրա համար, որ Վրույրը
Ժլատ մարդ էր, չէ, բժիշկն իր դեղերը մարդկանց բաշ-
խում էր անվճար: Բայց Վրույրի պարտիզապանը բկլիկ
մարդ էր: Նրա քիմքին ամենից շատ դուր էր գալիս նորան
հատիկը: Մեկ-մեկ կուլ էր տալիս՝ չսպասելով, որ հա-
տիկները հասունանան:

- Գուցե մեր այգին գող է մտնում, - մի անգամ պար-
տիզապանին խայթող ակնարկ արեց Վրույրը:

- Չէ, տե՛ր իմ, ոչ մի մարդ չի կարող ոտք դնել մեր այ-
գին: Նորան հատիկի եղածն ի՞նչ է, մի թեթև քամուց օդ է
բարձրանում և գնում-կորչում:

Այդ պատասխանը զայրացրեց բժիշկին: Նա ասաց.

- Սա քանու բան չէ: Այսուհետև ես պետք է հաշվեմ
բոլոր նոնահատիկները:

- Խնդրեմ, տե՛ր իմ, ինչպես կամենաս:

Եյուղերի վրայի հատիկները հաշվելը համարյա ան-
կարելի էր:

Մի քանի տարի Վրույրը մտնտաց, մտնտաց և, կար-
ծես թե հնարջ գտավ: Նա պատվաստեց նոնենին: Շու-

տով նոնենու վրա երևացին հատիկներն ամփոփող
տուփ - պատյանները: Ոնց որ հյութը լցնես տիկի մեջ ու
բերանը պինդ փակես:

- Դիմա դժվար չէ նռան տուփերը հաշվելը, - ասաց
Վրույրը պարտիզապանին:

- Այո՛, տեղ իմ, դու ճարտարորեն բռնեցիր իմ սուտը,-
պատասխանեց պարտիզապանը, - ինչ էլ անեմ, այսու-
հետև ինձ չես հավատա: Ավելի լավ է ես նոր տեր որո-
նեմ, դու էլ՝ նոր պարտիզապան:





ԻՄ ԵՐԶԱԿԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿՅԱՆՔԸ Ե

Նայել՝ դեռ չի նշանակում տեսնել։ Մենք ապրում ենք՝ շրջապատված գեղեցիկով։ Բայց մենք հաճախ ենք արդյոք նկատում այդ գեղեցիկը։

Ս. Սարյան (1880-1972)

Ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպէս էլ հայ ժողովուրդն ունի հապատության իր խորհրդանիշերը՝ Մեսրոպ Մաշտոց, Նարեկացի, Կոմիտաս, Թումանյան...։ Յայ կերպարվեստի խորհրդանիշն է Մարտիրոս Սարյանն է, որի ամունը վաղուց դուրս է եկել ազգային շրջանակներից և ծեռք բերել միջազգային ճանաչում։ Ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետ, այնպէս էլ Սարյանը հարք ու հանգիստ չանցավ իր կյանքի ճանապարհը, ստեղծագործությունները անտարբեր հանդիսատես չունեցան, քանի որ դրանց հեղինակն ինքը անտարբեր չեղավ կյանքի և մարդկանց հանդեպ։

Սարյանն ամբողջ Յայաստանն է։ Ոչ մի նկարիչ, Մ. Սարյանից բացի, գոյւներով այնպէս ուժգին չի հաղորդել նրա բափանցիկ օդն ու հազարամյա մառախուղը, վիրխարի, առասպելական Արարատի ու Արագածի ծյունափայլը, նրա արգավանդ հողի գոյւները, արևի խաղը խաղողի վագերի հետ, ժողովորի գեղեցկությունն ու աշխատավիրությունը։ Մարտիրոս Սարյանը պարզապես աշխատում էր։ Նրա կարծիքով, նկարիչը ծնվում է հենց մարդու մեջ, իսկ մարդը պետք է հավատա այն ամենին, ինչ ասում կամ անում է։ Ամենագլխավորը սա է։ Գործի հանդեպ ձգտումը պետք է ապրի մարդու ներաշխարհում, ոչ թե՝ նրանից դուրս։ Իր եռթյանք է մարդն ընկալում ամբողջ աշխարհը, և ամբողջ աշխարհն էլ արտացոլվում է նրա մեջ։ Ուստի, ամեն ինչ և օգտակար կարող է լինել, և վճառակար (նայած թե ի՞նչ ես «կորզում» կյանքից)։ Յուրաքանչյուր մարդ աշխարհ նվաճող է. ատելությամբ աշխարհ չես նվաճի։ Պատմության մեջ քիչ չեն դրա ապացույցները։ Այն սիրով պետք է նվաճել։ Նա սկսել է որպես աշխարհ սիրող նկարիչ և զգուել է միշտ հավատարիմ մնալ այդ սկզբունքին։ Վարպետը ստեղծել է տեսիլքներ, որոնք նշանաբանում են բնությունը, հավիտենական շարժման մեջ պահող համատիեզերական կենսաուժի գոյության նկարչի բնութեապաշտական (պանթեիստական) հավատամքը, անմահության, երջանկության և ազատության գաղափարները։ Նրա գործերը՝ հագեցած ու հնչել, հակադիր ու համադիր գոյւների, լուսատվերների և հարթությունների այդ զմայլելի աշխարհները, արտահայտում են կյանքի հավերժության խորհրդավոր ներգայումը։ Ամենաերջանիկ օրը նրա համար եղել է իր ծննդյան օրը։ Ծնվելն ինքնին երջանկություն է։ Նա իրեն համարել է երջանիկ մարդ։ Ոչ փող է նրա երջանկությունը, ոչ ծառայությունը, այլ իենց ինքը՝ կյանքը։

Ս. Սարյանն ասել է։ «Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է։ Մարդն ինքը բնությունն է։ Միայն մարդու միջոցով է բնությունը ճանաչում իրեն։ Դա մարդու մեծագույն երջանկությունն է, հսկայական, անվերջ բնություն և փոքրիկ մի արարած, որ իր մեջ կրում է այդ անսահման մեծությունը։»

Բնությունը ծնել է մարդուն, առանց խնայելու

տվել ամեն, ամեն ինչ... Մայր է տվել, տվել՝ բանականություն, որ երբեմն թեզ տանում է այն մտքին, որ հավանական է նաև՝ չլինեիր... Գոյություն չունեիր և ահա, բնության հրաշքով, «ոչնչից» վերածվում են մարդուն։ Գիտակցում ես քո «ես»-ը, բնությունը, հայրենիքը, տեսնում ես արևը։ Զգություն ես կյանքը, իսկ կյանքի գգացումը երջանկության գգացումն է։


Կյանքն ունի իր պատմությունը՝ ինչքան սովորական ու հասկանալի, նույնքան և ավելի զարմանալի ու առեղջածային։ Յատիկը ծլում է հողում փարթամորեն, աճում, իր ճմանակին ծաղկում, նորից՝ հատիկ տալիս և ... չի մեռնում։ Մարդն էլ այդպես է, չի մեռնում, մարդը բնությունն է։ Այս բանի իմացումը հարատևության իմացումն է, որ թև է տալիս մարդուն։

Վարպետը նորագույն շրջանի հայկական գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրն է։ Արդիականությամբ տողորված նրա արվեստը հայ բազմադարյա մշակույթի հատկանշական գծերը կամրջել են որորյա խնդիրներին՝ ստեղծելով ձկի ու բովանդակության նոր, հումանիստական, «սայանական» արվեստ, ուր գոյւնի, գծի, կոմպոզիցիայի, գեղանկարչական ժանրերի սահմանները ընդլայնելով են աճրող լայնով ու խորով։ Ստեղծել է «հեքիաթներ ու երազներ» ֆանտաստիկ պատկերների մեջ շարքը՝ «Լուսնկա գիշեր», «Փերիների լիճը», «Փյունիկյան արմավենի» և այլն։ Ստեղծել է հայրենասիրական ոգով տոգորված պաննոներ, դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ՝ «Յայաստան», «Եղիշ Չարենցի դիմանկարը» և այլն։



1967թ. Երևանում բացվել է Մ. Սարյանի տուն-թանգարանը, ուր գտնվում է նրա ստեղծագործական ժառանգության մի զգալի մասը։ Մ. Սարյանի գործերը կենտրոնացված են Յայաստանի պետական պատկերասրահում և նրա մասնաճյուղերում, ինչպես և Տրետյակովյան պատկերասրահում, տարբեր թանգարաններում, ԱՍԽ-ի, Ֆրանսիայի և այլ երկրների մասնավոր հավաքածուներում։ 1901-ից Մ. Սարյանը անհատական ցուցահանդեսներ է ունեցել Փարիզում, Մոսկվայում, Լենինգրադում, Թրիլիսիում, Երևանում և այլուր։ Պարգևատրվել է «Լենին» երեք և երկու այլ շքանշաններով։

Յայ պեղկայի Վարպետը՝ Վետիք Խսահակյանը, գրում է. «...Մ. Սարյանի գործերը մեր նկարչական արվեստի հաղթանակն է, մեր կուլտուրայի անբարամ զարդը։ Բայց որ գլխավորն է, Սարյանը ազգային կոլորիտի նկարիչ է։ Նրա արվեստի արմատները սուլվում են մեր հին արվեստի մեջ։ Սակայն, երբ օտարը հիմնում է մի ուղիղ ժողովրդի արվեստով, հասկանում է, գնահատում և սիրում, ապա այդ արվեստը անվիճելիորեն դարձնում է համամարդկային, բոլորիս սեփականությունը։ Եվ ճշմարիտ ուղին սա է՝ ազգային արվեստի միջով դեպի համարդկայինը։ Մ. Սարյանի արվեստը բովանդակ աշխարհն է, սիրելի է բոլորին»։



ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՇՆԵՐՈՒՄ Է ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ



Նրան,
Ով սրտով անկեղծ է,
Ով կյանքում բանաստեղծ է,
Բարձրին ու ցածրին, ուն
կյանքը երգ է:-

Եվ ծերին մանուկ, և ման-
կան անվիշտ,

Ով սրտով լեռներում է միշտ:

Դամաշխարհային գրակա-
նության մեծերից է Վիլյամ Սա-
րոյանը: Նա գրականություն մտավ՝ իր հետ բերելով հայ
ազգային ոգի ու անսահման բարություն: «Լեզուն, որով
գրում եմ, անգլերենն է, սակայն իմ ստեղծագործություն-
ների մեջ թևածում է ազգային ոգին»:

Սարոյանը բազմաժանր գրող է, գրել է պատմվածք-
ներ, դրամաներ, վեպեր ու վիպակներ, ինչպես նաև՝ բա-
նաստեղծություններ, որոնք տեղ են գտել նրա դրամանե-
րում: Սարոյանը տուլը է տվել գրական տարբեր հոսանք-
ների, բայց հատկապես էրգիստենցիալիզմի կենսափիլի-
ստիվայությանը, քանի որ այն քննում էր անհատի գոյու-
թյան և կեցության խնդիրները, մահվան դատապարտվա-
ծության, օտարացվածության, ազատարաջության
հարցերը, ինչպես նաև անհատի բարոյական պատա-
հանատվության խնդիրը: Վերջինիս վրա էլ հեճանվում է Սա-
րոյանը: Սարոյանի անգամ ամենամշյալ էջերում էլ կարե-
լի է տեսնել թարճված բարություն: «Եթե անգամ հային-
յում ես որևէ ազգի, - ասում է գրողը, - պետք է անես ժպ-
տալով՝ հոգու խորքում չունենալով ատելություն»:

Նրան ժամանակակիցներն անվանել են մեծ, բարի հս-
կա:

Սարոյանը ծնվել է 1900թ. օգոստոսի 31-ին, Կալիֆոռ-
նիայի Ֆրեզն գյուղաքաղաքում, ծագումով թթվածի Արմենակի և Թագուհու ընտանիքում: Ընտանիքը գտն-
վում էր նյութական ծանր վիճակում: Երեք տարեկան հա-
սակում կորցնում է հորը, մայրը ստիպված զավակներին
հանձնում է բողոքականների որբանոց: 3-4 տարի անց
երեխաները վերադառնում են և արդեն 9 տարեկան հա-
սակում Սարոյանը լծվում է աշխատանքի: Նա վորոց-
սկել է հաճախել 10 տարեկան հասակում, այն էլ՝ աղ-
քատների ու տնանկների անգիտական դպրոց:


«Դպրոցը, ուր հաճախած են, ինձի բացի գրամանա-
չութենած ոչ մեկ բան տված է: Ինչի, որ հասել են կյան-
քում, հասել են ինքնակրությանք: Դամախ աշխատան-
քեն տուն դարձին կմտնեի գրախանությունը և անոր վա-

ճառողներեն կխնդրեի չվաճառված գրքեր: Կարդալեն
ետքը ետ կուտայի: Կարդացել են Ֆոլքներ, Յեմինգուլեյ,
Զեյն Զոյս, Անդերսոն, իսկ ուս գրողներեն՝ Դոստուկի,
Տուրքենն և Տոլսթոյ»:

Վ. Սարոյանը գրական փորձեր կատարել է 1920-ա-
կան թվականների կեսերին: Նրա առաջին պատմվածքը,
որի վերնագիրը երթեք չի նշում, տպագրվել է «Սորբ
Գրայմս» ամսագրում: Այն արժանացել է գրախոսների
պարսավաճրներին: Դիաստավիված Սարոյանը որոշում է
այլև չգրել: Սակայն 1928թ. Ֆրեզնոյի «Դայթենիք» անգ-
լերեն ամսագրում տպագրվում է «Խիզախ պատմին
ճոճվող ճոճածողների վրա» պատմվածքը՝ Արմեն Գորյան
կերծանունով, որն արժանանում է բարձր գնահատակա-
նի: Սարոյանը մեզը մյուսի ետքից հրապարակում է իր
պատմվածքները, որոնք ազգային կնիք էին կրում իրենց
վրա: Սարոյանը մտացածին ոչ մի բան չի գրել, գրել է իր
մասին, իր շրջապատի մարդկանց մասին, արտացոլել է
իր ժամանակաշրջանի կյանքը. «Իմ ստեղծագործու-
թյուններու նյութը առել եմ մեջ կյանքեն: Իմ կերտած հե-
րուները ես են, դուն ես, մենք ենք»:

Իրոք, Սարոյանը պատկերեց իրենց՝ ամերիկահայերի
և ամերիկացիների դժվարին կյանքը: Սարոյանին մեծ
փառք բերեցին 1939թ. իրապարակած «Իմ սիրոց լեռնե-
րում է», «Չեր կյանքի ժամանակները» դրամաները,
«Սարդկային կատակերգություն» վիպակը: Ամերիկյան
մամուլը հեղեղված էր Սարոյանի մասին գրախոսություն-
ներով: Առաջին ծերմ արձագանքողը եղավ մեծ կատա-
կերգու Չ. Չապլինը: Նա գրեց. «Ամերիկյան դրամատուր-
գիան՝ հանձին Սարոյանի, ունեցավ իր նախահայրը»:

Վ. Սարոյանը բողել է 100-ից ավելի ստեղծագործու-
թյուններ, ցավոք, դրանց ստվար մասը դեռ թարգմանված
չէ հայերեն: Սարոյանը այն հայ գրողն է, ով երթեք չամա-
չեց իր ազգային պատկանելությունից, ավելին՝ փորձեց
աշխարհին ներկայացնել իր ազգը: Այն հարցին, թե «Ի՞նչ
է հայ ազգը, ուրկե՞ կուգա, կա՞ հայ ազգը»: Սարոյանը
հպարտորեն պատասխանել է. «Ես
հայ մըն եմ, հայ ազգը դարավոր
պատմություն ունի, իմ ազգը Նոյ նա-
հապետին առաջին սերունդեն սե-
րած է, ես հայ մըն եմ և եթե հարկ ըլ-
լա, աշխարհով մեկ կրնամ պոռալ,
խենք ազգեր, չե՞ք ճանչար իմ ազ-
գը, իմ խեղճ ու ամբախտ, իմ հա-
րուստ ազգը»:



ԿԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ԳՏԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՏԵՐԵՐԻՆ

Մարկ Արաքսի և Ռիկ Վարցմանի համահեղինակած «Կալիֆոռնիայի թագավորը», Զորշ Յեյգնի «Կակիծներ» հա-
տորներն արժանացել են 2005թ. Վիլյամ Սարոյանի անվան գրականության միջազգային մրցանակի. առաջինը ոչ
գեղարվեստական անվանակարգում, հաղորդում է «Արմինյ միրոր սիերբեյր» շաբաթաթերթը: Մրցանակները՝ յու-
րաքանչյուրը 12.500 դոլար, շնորհում է Պալո Ալբոյի Ստանֆորդի համալսարանը, որը համագործակցում է «Սար-
ոյան» հիմնադրամի հետ: Յիմնադրամը ստեղծվել է 1966-ին՝ քաջալերելու սկսնակ գրողներին: 1990-ին հոգաբար-
ձուները Ստանֆորդի համալսարան են հանձնել Սարոյանի գրական ժառանգությունը: Այս տարվա մրցույթի երկու
անվանակարգերում էլ եղել են 125-ական թեկնածուներ: Մրցանակակիրներից Ս. Արաքսը հայտնի լրագրող է, ապ-
րում է Ֆրեզնոյում և թղթակցում է «Լու Անջելես թայմսին»: Ռ. Վարցմանն ապրում է Լու Անջելեսում և այդ թերթի գոր-
ծարարական-տնտեսագիտական բաժնի խմբագիրն է: Նրանց գիրքը Զեր Բոստելի և Սան Խուարին հովտում նրա
բամբակի արդյունաբերության մասին է: Զեյգնը ապրում է Բրուքլինում (Սյու Ցողը), և նրա գիրքը, որը նրա առա-
ջին վեպն է, մի ընտանիքի առևանգման և դրա հետևանքների մասին է:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ



«ՀԵՌԱՑՈՂ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ»-Ը ՈՐՊԵՍ ԲԱԿԱՏԱԳԻՐ

մով, որոնցից շատերն այսօր իրենց անընդգրկելի վաստակով են մնացել մեր հիշողության մեջ: Մանավանդ, նրանցից շատերը, լինելով սփյուռքահայ, հայաստանյան գրական-մշակութային իրականության մեջ այսօրվա խորապատկերի վրա առավել են հիշատակելի: Այս հնարավորությունը փորձինաց լրագրողին տվել է «Յայրենիքի Զայն» շաբաթաթերթը՝ հատկապես այն տարիներին, երբ Յայաստան-Սփյուռք հարաբերությունները վերընթաց էին ապրում. դրանք այնքան չարչըկող, պատեհ-անպատեհ հիշատակվող գաղափարական դիկտատի տարիներ էին:

Գրքում ընդգրկված են գրականության, երաժշտության, կերպարվեստի ու ազգային-հասարակական լայն հնչեղություն ունեցող այնպիսի հոդվածներ, հարցագործություններ, ճշգրիտագործ մտորուններ և գրական դիմապատկերներ, խորիրդաժություններ, որոնց առանցքի հիմնագաղափարի, շուրջ ծևավորվում, շունչ ու կենդանություն է առնում, հիրավի, խորիրդաժությունների մղող մրնուղոր՝ ազգային ճակատագիր, հայի պայքարի ու լինելության, հայրենադարձության և մի շարք այլ (այսօր նույնպես չափազանց կարևորելի) խնդիրների շուրջ:

Ս. Գեղամյանի լրագրողական հետևողունակ հայացքն ու իրադարձությունները տեղին և ժամանակին «օրսալու» ունակություննը գրեթե անվիրած է՝ երևույթների դիտարկումների և մեկնաբանությունների առումով։ Արգասիքն այն իրողությունն է, որ տասնամյակների վաղեմություն ունեցող բազմաթիվ հոդվածներ, հարցազրույցներ, գրական-մշակութային վերլուծումներ, դիտարկումներ, այսօր էլ հետաքրքրահարույց են, ընթերցելի, և ինչու չէ ինչ-ինչ առումներով ժամանակի բազկերակի տրոփիմներն «արատացողող»։ Ասվածի վկայություններից են «Որպես հոգու սպեղանի» բաժնում ամփոփված հրապարակումները՝ Ժան Տեր-Մերկերյանի, Յայրիկ Մուրադյանի, Հակոբ Կարապետինի, Նվարդ Զարյանի, Ալիսա Կիրակոսյանի, Աննուշավաճ Տեր-Ղոնոնյանի և այլոց նկարագիրն արժեքավորող, ընդհանրացնող։ Նույն բաժնում գետեղված հարցազրույցները, նույնպես (Կահագն Դավթյան, Ավետիսի Սանճյան, Գառնիկ Աղդարյան, Ռիշարդ Յովհաննիայան) իրենց բովանդակային նպատակամիտվածությամբ, առնչվում են հայության անցյալին և ներկային, Յայսատանի և Սփ-

յուշքի, հատկապես՝ սկյուռքահայության ոգորումներին և ինքնահաստատման խնդիրներին։ Ուշարժան դիտարկումներ է անում Ռ. Յովհաննիսյանը ամերիկահայ գաղթօջախի «Ժողովրդագրական և ազգագրական կացության» վերաբերյալ։ «Այսօր հիմնովին փոխված է ամերիկահայ գաղութը. փոխված է այս վերջին երեսուն տարիներու ընթացքին, Միջին Արևելքի երկրներու գաղութներու նորացած են քաղաքական, տնտեսական և ընկերային պատճառներով։ Այս գաղութներու տկարանալը ուրիշ երես մըն ալ ունի, անշուշտ, գաղթողները հարստացուցած են ամերիկահայ գաղութը եւ նոր կյանք տված անոր»։ Այնուհետև խորհրդածելով ամերիկահայ երկրորդ և երրորդ սերունդների հայկականությամբ սովորվելու նրանից չիեւանալու մասին, պատճառն տակավին տասնամյակներ առաջ վստահորեն լավատես էր. «Ամերիկահայ նորագույն սերունդը այսօր կնտրտուքի մեջ է, կինոտիք իր արմատները, իր պատկանելությունը, բայց, ցավիք, մենք՝ իբրեւ դեկավար, իբրեւ գործիչ չենք բավարարեր անոնց փնտրությունը»։ Սկյուռքահայ մտավորականներից մեկի խոսքը չենք կարող չղիտել իր համաժամանակային մտահոգությամբ տագնաապեցնող։

«Հեռացող հիշատակներ» գիրքն իրևս ամբողջական կառույց, մտահոգություններ է ծնունդ, որոնք, եթե երեկով հեռավորությունից աննշնարելի ու հպանցիկ «պրկումների» տեղիք էին տալիս, ապա, գրնե, հետադարձ հայացքով դիտված առավել են կարևորվում իրենց «անլուծելի» թվացող, արևմտահայերեն ասած՝ բնութեմականությամբ, կամ որ նույն է բնույթով ու էությամբ: Այդ իսկ պատճառով, Սփյուռքը, դիտելով իրը շարժուն, փոփոխությունների ենթակա (Երբեմն անսպասելի, ինչու չէ, նույնիսկ անկասելի) և «խարիսխեն հեռու» օրգանիզմ, Ս. Գեղամյանը, Գ. Աղդարյանի հետ հարցազրույցում՝ լիբանանահայ գրող, հասարակական գործիչ ու հայապահպանումն ի խնդիր ուղեցույց ունեցող մտավորականին, հարցադրում է: «Ձեր խոսքը, գործը, մտահոգությունները վերաբերում են Սփյուռք կոչվող ամբողջ հավաքականությանը, նրա ապագայի հետ կապված հազար ու մի հարցականներին»: Պատասխանը որքան այն, նույնքան էլ ներկա ժամանակների համար է համահունչ, և որ ամենաէականն է հայակեցվածք: «Երբ կա այս հողը (նկատի ունի Յայաստանը- Ա.Ա.) ու կա այս հողի վրա ապահով կյանք ապրող երեք միլիոնը, ես չեմ կրնար չհավատալ մեր ժողովորի այլատեմանը»:

Վերստին ժամանակային շրջադարձի անհրաժեշտության ձգտումնով ուզում ենք արձանագրել արտագաղթ կոչված երևույթի, այսօր արդեն մեզանում անկասելի թվացող ընթացքը: Անշուշտ, այս մտահոգությունները ոչ միայն Գ. Աղբարյանի, այլև տարիներ շարունակ սփյուռքահայ մյուս մտավորականների ու հասարակական գործիչների ուշադրության կիզակետում են եղել: Եվ նրանք բոլորն էլ ունեցել են նույն համոզմունքը. Սփյուռքը կայուն ու դիմադրողունակ է միայն և միայն ու-



ժեղ, կենսունակ, բարգավաճ Հայաստան - Հայրենիքով:

«Զարմանալի հայեր» բաժնի հրապարակումներում նույնպես Ս. Գեղամյանը կարողանում է դրսկորել լրագրողի յուրօրինակ դիտողունակություն՝ անցյալի (Խ. Արովյան, Թ. Թորոմայան) և ժամանակակից, իրենց վաստակով հայության մեջ հետագիծ թողած հայերի (Կարիկ Պասմաճյան, Կարո Ռերձակյան, Վարդգես Նազարյան) և այլք: Կյանքն ու արգասարեր գործունեությունը արժեքավորելիս՝ ազգային բարերարությի ՈՒԽՏա Պայանին նվիրված դիմանկարում տեսածը, զգացածի արտահայտումը անխարթ ներկայացնելու իր փորձառության շնորհիվ Ս. Գեղամյանը եզրահանգում է. «Նա այն մարդկանցից է, որ կարողանում է հնագամնելու անգամ ճակատագիրը»: Եսկ ողջ սփյուռքահայության շրջանում մեծ համբավ և սեր վայելող փաստաբան Վարդգես Եղիայանին բնորոշելիս՝ հստակորեն առանձնացնում է էականը՝ ԱՄՍ կառավարական-փաստաբանական շրջանակից՝ հայտնի իրավաբանի ազգային նկարագիրը անկորուստ պահելու ողջ հմայքը. «Գտնելով այդ չափազանց կարևոր փաստաթրեթը (Թուրքիայում հայերի ապահովագրական դրամական փաստաթրեթը - Ա.Ա.) Վ. Եղիայանը հասկանում է, որ Եկեղեց մասնագիտությունը իր ժողովրդի դատին ծառայեցնելու ժամանակը»:

«Հայաստանի սիրով», «Ցավ և հույս», «Չհնացող պրոբլեմներ» բաժիններում նույնպես խնդրահարույցը հայը ու հայկականությունն են անցյալի, ներկայի չափակշռումներով. անցյալի չսերտած դասերը ներկա պայմանների ընձեռած հնարավորությունների լուծումով: Եվ հաճախ՝ միջազգային համբավ վայելող անհատների հայանապատ գործունեության հաստատումներով է լրագրողը կարողանում իր ասելիքի հրատապությունը ներկայացնել ավելի լայն մասսաներին: Հայագիտության երախտավոր ժամանակը այսպիսի տեսակետ է

հայտնում. «...Հայագիտությունը փորձում ենք դիտել մեր՝ արևմտաեվրոպացու տեսանկյունից և ուզում ենք, որ Եվրոպացին ընդիմական մոտենա Հայաստանին, նույնիսկ, եթե նա հայերենի մասնագետ չէ»:

Ընդհանրապես, ողջ գոքի կառուցվածքը այնպիսին է, որ բազմազան և տարբեր հետաքրքրություններ ներկայացնող հրապարակումներն ու հարցազրույցները՝

իրենց պարունակած փաստացի չափազանց հարուստ տեղեկություններով և մեկնաբանություններով կարողանա սերունդներին ի պահ տալ վերջին երեսուն տարիների հորձանուտում ինքնահաստատման փորձեր անող հայության իրական նկարագրը և այդ նկարագրից բխող շարունակական ընթացքի անխախտությունն՝ իբրև ճակատագիր և ապագայի բաց դաս՝ նրանց համար, ովքեր ապրել են և շարունակելու են ապրել այդ ճակատագրով՝ հայ ծնված լինելու առաքելությունը խորապես ու արժանապատվորեն գիտակցած:

Երջանկահիշատակ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կարողիկոսի հետ հարցազրույցում «Ո՞րն է ապրելու բանաձևը» լրագրողի չափազանց տարողունակ և խորքային հարցին, իմաստուն կյանք ապրած կարողիկոսը պատասխանում է. «Մարդը, եթե ուզենա ինքն իրեն ճանաչել և հստակ կերպով զատել իրեն գոյություն ունեցող մյուս էակներից, այն ատեն պետք է գիտնա, որ իր մեջ կա այնպիսի մի ուժ, այնպիսի մի հասկացություն, որ վեր է ուրիշ տեսակ էակներից և դա, ըստ քրիստոնեական աստվածաբանության, Աստծո ոգին է մարդու մեջ. այսինքն՝ մարդու մեջ կա այնպիսի ոգեղեն ներկայություն, որ ժամանակի և նյութի միջոցով չի խեղդվիր, չի սպառիր...»: Այսօրինակ ոգեղենն ներկայությամբ է շնչում Սեյրանուիի Գեղամյանի «Հեռացող հիշատակներ» գիրքը, որն ի խորոց սրտի խոնարհում է հայ ինքնությանը հավատընծա երախտավորներին:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

«ԱՐՄՍՈՆ» ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ ԿՆՎԻՐՎԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻՆ



Մոնոներկայացումների «ԱրմՍոն» երրորդ միջազգային թատերական փառատոնն այս տարի Երևանում կանցկացվի սեպտեմբերի 12-17-ը և կնվիրվի շեքսպիրյան թեմաներին:

Փառատոնին այս տարի կմասնակցեն մի շարք հանրահայտ դերասաններ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Մեծ Բրիտանիայից, Շվեյցարիայից, Լեհաստանից, Իրանից, Ռուսաստանից, Թուրքմենիայից: Հայաստանը կներկայացնեն անվանի դերասաններ Կարեն Զանիբեկյանը, Գուժ Մանուկյանը, Հովհաննես Բաբախանյանը, Արթուր Կարապետյանը, Մարիամ Ղազանչյանը և այլք:

Ինչպես տեղեկացանք փառատոնի կազմկոմիտեից, փառատոնի շրջանակներում Հայաստան կժամանեն Գերմանիայի, Լեհաստանի նմանատիպ միջազգային փառատոնների տնօրիններ: Դա իր հերթին լուրջ նախադրյալներ կստեղծի հայ դերասանների միջազգային ասպարեզ դուրս գալու գործում:

Պ Ա Բ Ը

**Ձեզ հետ եմ ես, ովքեր ցավից պարում են:
ԱՐԹՈՒՐ ՄԵՍՉՅԱՆ**

Պարը ծնվեց, երբ մարդն առաջին անգամ չկարողացավ իր ոգևորությունը խոսքի և նույնիսկ երգի միջոցով արտահայտել:

Պարը աճեց, զորեղացավ և դարձավ արվեստների թագը, որովհետև միակն էր, որ միաձուլեց մարդկային հոգին ու մամինը:

Պարը մարմնի երգն է և նկարչություն է մարմնի միջոցով: Պարը մտքի սլացըն է, ոգու կորիվն ու հերոսացունը: Պարը կնոջ հեզ նազանքն է և տղամարդու զորեղ զարկը:

Եթե «չար մարդիկ երգ չունեն», ապա տկարներն եւ պար չունեն:

Բայց պարն ապրում է, երբ ապրում ես պարով և մահանում է, երբ պարում ես ոչ թե քո, այլ այլոց համար:

...Եվ պարը սկսեց մահանալ, մեր պարը՝ այսպան իշխանական ու վեհ, այսքան հպարտ ու մարտական:

Եվ փոխանակ պարն ապրեցնեն, ապրելով նրանով՝ փորձեցին դիմային վիրահատություններով այն «թարմացնել, երիտասարդացնել»:

Փոք ձեզ ին աչքերը պարի ավելի ժպտուն դարձնել, քան հայի թախծոտ աչքերն են: Փորձեցին նրբացնել նրա թափ հոնքերը և նույնիսկ անբռնագրոս ծիծաղ դարձնել հայ հարսիկի ամորիսած ժախտը:

Ծանածովեց մեր պարի դեմքը:

Պարն այնքան օտարածին տարրեր կրեց իր մեջ, որ ննանվեց ժարգոնով գրիված նախադասության, որի համարյա բոլոր բառերն օտար են, բայց հարմարեցված ազգային երանգներին, ինչ ազգային տարագ հագած:

Ես վախենում եմ, շատ եմ վախենում, որ վաղը պարը «գրաբար» դառնա:

Դանապագօրյա խնդիր է հայ պարի Կոմիտասի հայտնությունը:

«Դե՛, Ե՛կ, վարդապետ ու մի՛ խենթանա»:

ԿԱՂՆՈՒ ՊԱՐԸ

Քամին կոկին մեղեդի է սուլում:

Եվ ծառերը՝ գունեղ տարագներ հագած, ընկալում են քանու մեղեդին, մեկ մեղմ պար բռնում, մեկ էլ ընդ-զում, կարծու՝ ուզում են պարել «թռնոցին»:

Այգիները գարնանամուտին մեղմ հովիկից «հարսնապարն» են սկսում և, նորաբուխ բողբոջներն օրորե-

լով, փթթում, ծաղկում, մեղմ բուրում են հոգու խորքում սպասելով ամեն մեկն իր նուբարին:

«Շորոր»-ում են, սաղարթներով իրար բռնում... և նազանքով սկսում են մեղմ շուրջպարը: Այդ շուրջպարից քամին հանկարծ ոգևորվում, խենք մեղեդին է սուլում-սուրում, անցնում է նա երկշարք ձգված լայն ծառուղով: Դեմ-հանդիման շարբով կանգնած ծառերն է, նվազածու քամու կողմից առաջարկված այդ ռազմատեսք եղանակից ոգեշնչված թիզ հետ թեքվում, ապա կտրուկ առաջ գալիս, «ծափպար» պարում՝ ծափ են տալիս:

Մեկ էլ, կարծես թե քամին էլ խենթանում, մեղեդին փորորկածին է դարձնում: Սարերում անտառներն են իրար խառնվում և սկսում են հենց այն պարը, որ դարեր առաջ իրենց նախնիք են պարել: Հենց այն պարը, որ



լոկ պար չէ, այլև պայքար, ոգու սլացը է ու հաղթապար, խորհուրդ է խորին և ճակատագրից հզոր լինելու դաս է ու պատգամ:

Իսկ անտառից վեր այն խոլ կատարին նա-

հապետն է հպարտ պարում՝ այն ինն կաղնին, որ անտառի շանթարգելն է եղել դարեր: Մերթ լուռ ծալվում, վեր խոյանում, սաղարթներն է իրար տալիս, մենապարով հերոսական քամիածին մեղեդին է, ասես, սանձում:

Եվ քամին կարծես թևաբափ է լինում անզորությունից, հայացըն է հառում նահապետ կաղնու պարոց սևացած՝ երկինքը ծածկող, ամպերի կույտին, մի ամենազոր, թե ամենակուլ շամթ աղերսելով:

Նահապետ կաղնին վեհ մի շարժումով իր վերջին պարին սկիզբ է տալիս, փորձում է կրկին իր անտառը շանթից ազատել, մի վերջին անգամ շանթարգել լինել:

Քամին զայրություն խելազարվում, վերածվում է խենք փորորկի և փորձում է կաղնուն ծռել, և անխնարի կաղնուց հասկանում է, որ առանց շանթի ինքն անզոր է:

Կաղնին չժռված շանթահար ընկնում է՝ մի վերջին անգամ մոնչացնելով:

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՅԱՆ
«Կարին» ազգագրական համույթի դեկավար

Հ.Գ. Կաղնին իր վերջին պարն է պարում մեն-մի համոզմամբ, որ իր ընկնելուց արմատները չեն ամլանալու, նոր ծիլ են տալու, և որ, վաղ թե ուշ, այն խոլ կատարին ինն արմատներով մի նոր շանթարգել կաղնի է պարելու:

Գծանկարների հեղինակ Էդվարդ Ամիրբեկյան

ԱՆԱՍՏՈՒԹԻՒ



Ծովային Կիլիկիայի արևմտյան մասի նշանավոր բերդաքաղաքներից մեկն էր Անամուռը, որը գտնվում էր Միջերկրական ծովի Անամուռ հրվանդանում: Զգվելով դեպի ծով՝ Կիպրոս կղզու ամենամոտ հողաշերտն էր, ներկայիս Ալբանյան նահանգից 10 կմ հեռու: Որպես նավահանգիստ՝ այն իհննադրվել է մ.թ.ա. 4-3-րդ դարերում փոյնիկեցի ծովագնացների կողմից: Չունենալով հարմար դիրք՝ բերդաքաղաք Անամուռը էական դեր է կատարել որպես բերդ-ամրոց, հատկապես՝ հունա-հռոմեական տիրապետությունների օրոք, երբ շրջապատված էր հզոր պարիսպներով: Նրա հսկայական աշտարակները ճնան են Տիգրանակերտի աշտարակներին, կառուցված՝ տաշած քարերով: Պարիսպները, ունենալով ստորերկյա անցքեր, դրսից ունեն խոր խրամներ, որոնք պատերազմի ժամանակ ծովի ջրով էին լցվում: Միայն քարաշեն կամուրջով կարելի էր մոտենալ բերդաքաղաքին, իսկ շարժական կամուրջը պատերազմի ժամանակ վեր էին բարձրացնում:

Անամուռի արևելյան կողմում տարիներ անց վեր է խոյացել նշանավոր մի դոյակ՝ «Սէհմուրիկի գալէսի»-ն:

Ո՞վ և ե՞րբ է կառուցել նշանավոր այս բերդաքաղաքը՝ իր պարիսպներով, բուրգերով, պատմությունը լուսն է: Ունանք կարծում են՝ Ալեքսանդրն է կառուցել: Դայտնի չեն, երբ է առաջին անգամ այն հայերի ձեռքն անցել:

Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ-ի օրոք, Անամուռի առաջին հայ իշխանը Դալկամն էր: Նա Օերկա է եղել նաև Լևոն Սեժի թագադրությանը: Բերդի մեջ դուռը բացվում է դեպի արևելյան կողմ՝ մեծ աշտարակ, որի վրայի արաբերեն արձանագրությունն էլ վկայում է, որ 13-րդ դարի կեսին բերդը հայերից խլել է կիոնիայի սելջուկյան սուլթան Սալահեդինը, իսկ բերդաքաղաքը՝ Թումճի-Շերիֆը, բայց հայերը այն հետ են վերցրել Լևոն Գ-ի ժամանակ՝ 1284-ին:

Դետագայում՝ եգիպտացիները տիրեցին Կիլիկիայի ծովային շատ քաղաքների, այդ թվում՝ նաև Անամուռին, որը տարիներ անց ընկավ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Պոլսի սուլթանները այնտեղ կառուցել են մեծ մզկիթ՝ բարձր աշտարակներով, ուր հաստատել են բուրքական պահակագործը:

Քաղաքի տեղում այժմ պահպանվել են պարիսպների և ջրամբարների մնացորդներ, ընդարձակ գերեզմանատուն, թատերական շինությունների հետքեր: Կանգուն է քաղաքի միջնաբերդը՝ տարբեր շինությունների ու կամարակապ դամբարանների հետ միասին: Անամուռի միջնաբերդի գլխավոր մուտքի դիմաց՝ 20 մետր հեռավորությամբ, պահպանվում են բաղնիքի մնացորդները, իսկ շրջակայքում կան ցինկի պաշարներ:

13-րդ դարից հետո հայկական սկզբնաղբյուրներում Կիլիկիայի հրաշք այս բերդի՝ Անամուռի մասին հիշատակություններ չկան: Միիթրարիչ է մի իրականությունը Անամուռը կա, շարունակում է համբերել, ցավոք, ավեր վիճակում:

ԶԵՄՄԱ ԲԱՐԴԱՐՅԱՆ

ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Ստամբուլի Բողազիջի (Բոսֆորի) համալսարանի ռեկտոր Այշե Սոյսալը թուրքական «Հուրիեթին» հայտնել է, որ մայիսի 25-27-ին նշանակված և Թուրքիայի կառավարության հակագրեցության պատճառով հետաձգված «Օսմանյան հայերը կայսրության փլուզման շրջանում» գիտական պատասխանատվություն և դեմոկրատիայի հարցերը» գիտաժողովը նույն բովանդակությամբ, նույն տեղում և նույն մասնակիցներով տեղի կուռենա սեպտեմբերի 23-25-ին:

Թերոք հայտնել է, որ հետաձգված գիտաժողովի ծրագիրը պատրաստել են Թուրքիայի Բողազիջի և Սարանչի համալսարանների պատմության և Բիլգի համալսարանի համեմատական գրականության բաժինները: Գիտաժողովի խորհրդակցական խորհրդում տեղ են գտնել Յալեհ, Յարվարդի, Բրաունի, Սինեստայի, Սիշիգանի, Ecole des Hautes Etudes en Sciences Sociales (Սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոց) համալսարաններում աշխատող բուրք գիտնականները: Գիտաժողովի նախապատրաստման հանձնաժողովի կազմում են թուրք առաջադեմ գիտնականներ Մուրադ Բելգեն, Յալիլ Բերքայը, Սելիմ Դերինգելը, Էթեմ Էլիմը, Զաղլար Քեյրերը, Յաքան Էդեմը, Աքշին Սոմելը և Զեմիլ Քոչարը:

Թերոք գրել է, որ երկու օր տևելիք գիտաժողովի 12 նիստերում 38 գիտնական, թուրքական մամուլի և քաղաքական աշխարհի ճանաչված անուններ գեկույցներ կներկայացնեն Հայկական հարցի պատմական գործնթացում ուսումնասիրության շուրջ: Նիստերը տեղի կուռենան «Տեղահանությունը և կոտորածները», «Պատմվածքները ողբերգության և ազատագրության մասին», «Հուշեր և ականատեսմերը», «Աշխարհի իմացածն ու Թուրքիայի չիմացածը» և նման այլ թեմաներով:

Թերոք հիշեցրել է, որ մայիսի 25-27-ին ծրագրված գիտաժողովը քննադատության թիրախ էր դարձել, սկզբում Թուրքիայի արդարադատության նախարար Զեմիլ Չիչերի, որ «գիտաժողովը դաշույնով հարված էր թուրք ժողովողի մեջքին», նրանից հետո էլ՝ ականատեսման շրջանակների որոշ պետականամետ անձանց կողմից:



ՍԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1920-ի օգոստոսի 10-ին՝ Սկրում (Փարիզի մոտ), Թուրքիայի սուլթանական կառավարության և 1914-18թ. Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների միջև պայմանագիր է կնքվում: Քայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ավետիս Ահարոնյանը: Ա. Ահարոնյանը և արևմտահայության ներկայացուցիչ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը գլխավոր դաշնակից պետությունների հետ կնքել են լրացուցիչ պայմանագիր՝ փոքրամասնությունների իրավունքների, դիվանագիտական և առևտորական հարաբերությունների վերաբերյալ: Միջազգային իրավունքի տեսակետից Քայաստանի Հանրապետությունը՝ որպես պայմանագիր մասնակից, դե յուրէ ճանչվում էր պայմանագիրը ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագրի հիմքում դրվել էին 1916-ի Սայրս-Պիկոյի համաձայնագրի դրույթներն ու 1920-ի Սան Ռեմոյի կոնֆերանսի դրոշումները: Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից ու 433 հոդվածներից, որի համաձայն Թուրքիային մնում էին 4. Պոլիսը և շրջակայքը, ապահովագրականացվում էին նեղուցները և դրվում՝ միջազգային կառավարման ներքո: Թուրքիան հրաժարվում էր գերիշխանությունից Թրակիայի նկատմամբ, եգեյան ծովի կողմներից, Կիպրոսից, եգիպտոսից և արաբական տիրույթներից: Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը:

Սկրի հաշտության պայմանագրի «Քայաստան» բաժինն ընդգրկում էր 88-93-րդ հոդվածները: Թուրքիան Քայաստանը ճանաչում էր՝ որպես «ազատ ու անկախ պետություն»: Թուրքիան ու Քայաստանը համաձայնում էին երգումի, Տրավիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում (Վիլայեթներ) երկու պետությունների միջև սահմանագատումը բողնության վերաբերյալ հաշտության պահպանը և բոլոր առաջարկները Քայաստանին դեպի ծով ելք տալու վերաբերյալ: Աղբեջանի և Վրաստանի հետ Քայաստանի սահմանները որոշվելու էին այդ պետությունների հետ ուղղակի բանակցությունների միջոցով: Ըստ պայմանագրի՝ հոդվածները թույլատրում էին բնակչության կամավոր փոխանակում. տասնութից բարձր տարիք ունեցող անձինք կարող էին քաղաքացիություն ընտրել տարածաշրջանի մի այլ երկրում, որտեղ նրանք մեծանանություն էին կազմում: Թուրքիայում մնացող փոքրամասնությունների պաշտպանությունը, կյանքը, ազատությունն ու հավասարությունը օրենքի առաջ պետք է ապահովեր կառավարության կողմից: «Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վայրագությունների պատճառած չարիքն առավելագույն չափով քավելու համար օսմանյան կառավարությունը պարտավորվում է իր և օսմանյան իշխանությունների կողմից ցույց տալ ամեն տեսակ աջակցություն՝ 1914թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, ներկալված և ազատազրկված ամեն ռասայի և

ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար»: «Պատիժներ» մասում թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ ռազմական ատյանին հանձնելու պատերազմի օրենքներն ու կանոնները խախտած մեղավոր անձանց, համաձայնում էր նաև հանձնել այդ մարդկանց, ինչպես և նրանց կատարած ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը. «...Այդ անձինք պատասխանատու են կատարված ջարդերի համար այն ժամանակ, երբ երկիրը գտնվում էր պատերազմական վիճակում այն տարածքում, որը կազմում էր թուրքական կայսրության մասը 1914թ. օգոստոսի 1-ին»:

Պայմանագործածություն ծնոր բերվեց, որ Վրաստանը, Քայաստանը, Աղբեջանը և Պարսկաստանը Բարումի նավահանգստով ազատ մուտք ունենան դեպի Սև ծովը: Դաշնակիցները բարյացակամորեն էին վերաբերվում Կարսից նորոյին հովտով դեպի Բարում՝ «Քայկական միջանցքի» գաղափարին, սակայն պայմանագիրը ստորագրելու պահին Վրաստանը դրա փոխարեն հայերին առաջարկեց երկարությի կառուցել Վրաստանի տարածքով: Եվ քանի որ դեռևս հայտնի չէր Տրավիզոնի նավահանգստը՝ Քայաստանի մեջ կմտցվի՝ թե՝ ոչ, ապա հատուկ հոդվածով՝ Քայաստանին երաշխավորվում էին տրանզիտային արտոնություններ ու այդ նավահանգստի մի մասի առհավետ վարձակալություն:

Մինչև Սկրի հաշտության պայմանագրի ստորագրումը, պրեզիդենտ Վ. Վիլսոնի նշանակած հանձնաժողովը ուսումնասիրել էր տեղագրությունը, տնտեսությունը, տրանսպորտը, ջրային ռեսուրսները, առևտորական ճանապարհները, ժողովրդագրական ու մյուս խնդիրները, որոնք պետք է հաշվի առնվելին սահմանները որոշելիս: Զանձնաժողովն իր հանձնարարականները քննարկման ներկայացրեց 1920-ի սեպտեմբերին, իսկ պրեզիդենտն իր որոշումը եւլողական տերություններին հանձնեց նոյեմբերին: Նրա որոշման համաձայն՝ Քայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, երգուումի գրեթե ամբողջ նահանգը, Տրավիզոնի նահանգի մեջ մասը՝ ներայալ նավահանգստություն առնարկու առնարկ այդ տարածքը կազմում էր մոտ 100 հազ. քառ. կմ: Միավորվելով Աղբեջովկաստան արդեն գոյություն ունեցող Քայաստանի Հանրապետության հետ՝ Քայկական անկախ պետությունը կունենար շուրջ 160 հազ. քառ. կմ տարածություն՝ դեպի Սև ծովը:

Պայմանագիրը կարող էր նպաստել Քայկական հարցի լուծմանը և հայ ժողովրդին տրամադրել նրա ազգային համախմբման համար բավարար տարածք, եթե իրագործվեր: Այսուհետերձ, Սկրի հաշտության պայմանագիրը այսօր էլ իրավական կարևոր մի փաստաթուղթ է Քայկական հարցի արդարացի լուծման, հայ ժողովրդի իրավունքի մասին:






ՄՈՒՍԱ ԼԵՂԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 95-ԱՄՅԱԿԸ

1915 թվականը հայ ժողովրդի պատմության մեջ ոչ միայն ողբերգության տարեթիվ է, այլ նաև՝ հերոսական դիմադրության ու հայի անկոտրում կամքի դրսարձան տարի: Այդ հերոսամարտի մեջ առավել աչքի ընկնողներից մեկը Մուսա լեռան հերոսամարտն է:

1915 թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 11-ը Կիլիկիայի Սվետիա գավառի յոթ գյուղերի շուրջ ինք հազար բնակիչներ՝ եսայի Յաղությանի և Պետրոս Տրնկաբյանի ղեկավարությամբ, Մուսա լեռան վրա 40 օր դիմադրեցին թուրք ջարդարաբներին: Տալով ընդամենը 18 զոհ՝ մոտ 5.000 հայեր փրկվեցին անխուսափելի մահից:

Նրանց սիրանքը հիացրեց շատերին, նոյնիսկ՝ օտարներին: Ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը մուսալեռցիների սիրանքը անմահացրեց «Մուսա լեռան 40 օրը» համբահայտ վեպում: Զայրացած թուրք ամբոխը՝ ուսանողների նախաձեռնությամբ, 1934-ին Ստամբուլի Թանգիր հրապարակում այրեց գրքի մեջ թվով օրինակներ: Թուրքական ֆաշիզմը, որը ցեղասպանության գործում նախորդել էր գերմանական ֆաշիզմին, գործերի հրադատության հացում նույնպես գերմանական ֆաշիզմի հոգևոր ուսուցիչն էր: Թուրքական պետությունը կարողացավ խափանել նաև հերոսամարտի մասին 1936թ. ԱՄՆ-ում նկարահանվող ֆիլմը՝ Սակյան այն նկարահանվեց 1978-ին, և Թուրքիան այս անգամ արդեն անզոր գտնվեց՝ խոչընդոտ հանդիսանալու:

Մուսա լեռան հերոսամարտը ոգևորել է բոլոր մարտնչող ժողովուրդներին: Ինքը՝ Ֆրանց Վերֆելը, երբ 1932-ին ճամփորդում էր Սիրիայում, խոստվանեց, որ մի բուռ հայերի պայքարը գովերգելով՝ նա կցանկանար



Յաղության հուշարձանը Մուսա լեռան բարձունքին, որը պայթեցվել է 1942-ին թուրքերի կողմից:

արթնացնել հայրենիքից զրկված իր միլիոնավոր հայրենակիցներին (Վերֆելը ծագումով հրեա էր):

Մուսա լեռը հասկապես ոգևորել է հայ ժողովրդին բախտակից սերբերին: 1942թ. դիմելով ֆաշիզմի դեմ պայքարի ելած սեր հայրենասերներին՝ պարտիզանական ջոկատի հրամանատար Մարկո Պաշիչը հորդորում էր. «Կուպեցեք այնպես, ինչպես հայերը՝ Մուսա լեռան վրա»: Այսօր էլ, երբ տալիս ենք սրբազն դարձած լեռան անունը, պատկերացնում ենք անկոտրում կամք, ազատ ու անկախ ապրելու տեսչ ունեցող մարդկանց:

Մուսալեռցիները այսօր էլ խոր արմատներ են զցել մայր հողում, մասնակցում են նրա տնտեսական, քաղաքական ու նաև ռազմական հզրացմանը: 1993-ի օգոստոսի 18-ին, Արցախում գրիվեց դասակի հրամանատար Մարգիս Անոնյանը՝ Մուսա լեռան հերոսամարտի մասնակից Պետրոս Անտոնյանի թուրը: Օգոստոսյան այդ օրը խաղաղ էր, Սարգիսը, վերցնելով իր սիրած «Խսպանիայի ժամանակակից պոետները» ժողովածում, բացել էր 19-րդ էջը՝ խոսե Բատաւյոյի «Ազատություն, որ ինձ է մնում» բանաստեղծությունը և սկսել էր կարդալ.

Կարելի է ասել, որ ես ճանաչում եմ

նրանց այն հողերը,

Եվ այս արևը՝ ծովափների

բարեկամը,

Եվ այս հասկը՝ հակառակ բոլորի՝

հատիկավորված,

Եվ այս մարդկանց, որոնց այնպես

քննչորեն սիրում եմ,

Նրանց տիսուր ձեռքերը, աչքերը

հոգնած...

Եվ այդ պահին նրան վրա հասավ նշանառուի դավադիր պնդակը: Մուգ կարմիր արյունը թափվեց գրքի էջերի վրա...

Սիրու և ազատության տողերը ծածկվեցին արյունով:

ՀԱԿՈԲ ՄԱՍԶՅԱՆ

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԻՒ ԱՌԱՊԱՏՅԱՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ ԵՆ ԱՐԱՐԱՏ ԼԵՂԸ



Օգոստոսի 18-ին Արարատ լեռն են բարձրացել լեռազնացների խմբի 7 անդամները, այդ թվում՝ հունահայ երիտասարդ Կարո Աղապատյանը: Յայր և որդի Աղապատյանները հույն լեռնազնացների այս արշավի գլխավոր կազմակերպիչներն էին:

Արշավին մասնակցում էին 21 լեռնազնաց, սակայն Արարատի գագաթը բարձրանալու առաջին օրն իսկ վարուակիչ հիվանդությունը պատճառ է դարձել, որ նրանցից շատերը, այդ թվում և Սարգիս Աղապատյանը, 4200 մետրից ավելի չկարողանան բարձրանալ: Խմբից միայն 7 հոգու է հաջողվել հաղթահարել 5137 մետր բարձրությունը: Կարո Աղապատյանն առաջին հունահայ երիտասարդն էր, որին հաջողվում է բարձրանալ Արարատ լեռը:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԻ

Հայաստանի մայրաքաղաք Ամին ներկայիս անբնակ է աւերուած է: Անիի աւերակները կը գտնուին Կարսի վիլայեթին նէջ՝ Կիւմրի քաղաքէն 30 քմ հեռաւորութեան վրայ՝ հարաւ-արեւմուտք: Անիկա կը գտնուի 1.500 մետր բարձրութիւն ունեցող հրուանդանի վրայ: Ամին իր անունը ստացած է Բարձր Հայքի Դարանադի գաւառի Անի բերդաքաղաքէն: Ծաղկուն շրջանին ունեցած է մինչեւ 100.000 բնակչութիւն: 961թ. Բագրատունիները իրենց արքունիքը Կարսէն փոխադրեցին Անի եւ զայն հոչակեցին մայրաքաղաք: Գագիկ Ա-ի թագաւորութեան տարիներուն (989-1020) կառուցուեցան Անիի Մայր Տաճարը, Չուարթնոց Եկեղեցւոյ նմանութեամբ Գագկաշէն, Արուղամրենց Եկեղեցիները: 1045թ. Բագրատունեաց թագաւորութիւնը եւ Ամի մայրաքաղաքը գրաւուեցաւ թիւզանդացիներու կողմէ: 1199թ. Անին ազատագրուեցաւ սելճուքներու տիրապետութեան եւ անցաւ Զաքարեան իշխաններուն: 1236թ. մոնկուները պաշարեցին եւ ապա գրաւեցին քաղաքը: 16-րդ դարուն Անին արդէն փոքրիկ գիւղ էր: 1878-ին անիկա անցաւ Ռուսիոյ եւ 1920-ի պայմանագրով՝ յանձնուեցաւ Թուրքիոյ:

1997-ի ուխտագնացութեան

Անցեալ տարի տեսած էի Անին: Գարեգին Վեհափառին հետ Հայաստանի կողմէն մօտեցած էինք: Չեզք Երկարէի՝ արդէն կը զգայի: Այս անգամ միւս ափէն... բայց անկարելի է, որ գետն անցնիս: Ամբողջ օրը Անի անցուցինք: Եկեղեցի է, կամուրջ է, մզկիր է, քարտանսարայ է, կարծեն կենդանի քաղաք: Տաճար գացինք, արարողութիւն ըրինք: Չեմ գիտեր, թէ վերջին անգամ ո՞վ է այն-



Ուխտագնացները Անիի Մայր Տաճարի մոտ:



Անիի պարիսպները

տեղ Եկեղեցական արարողութիւն կատարած: Պատարագէն հասուածներ յիշեցինք, «Գոհութիւն» եղուցինք, Ամենայն Հայոց կաթողիկոսը, Արամ կաթողիկոսը, Երուսաղէմի պատրիարքը, Պոլսոյ պատրիարքը յիշեցինք: Այդքան լաւ երգախումբ ալ չունինք, բայց հ՞նչ ընէինք... Եղածով գոհացանք եւ մանաւանդ մեծ վարձատրութիւն ունեցանք, երբ քանի մը վայրկեան յետոյ 8-10 ֆրանսացի գրօսաշրջիկներ Եկան-ըսին՝ հրեշտակներու ձայն լսեցինք, մօտեցանք:


2000-ի ուխտագնացութեան

Անի հասանք անաղմուկ: Մեզ զնկերակցող երկու թուրք զինուորներու օգնութեամբ կրցանք այցելել Մայր Տաճարն մինչեւ Տիգրան Հոնեցի Եկեղեցին, Կուսանաց մատուռը: Մեր


նպատակն էր. ժամ-պատարագ ընել Մայր Տաճարի մէջ: Խորանի ուր կամարներու ներքեւ մոմեր վառեցինք, խունկ ծխեցինք, «Տէր Ողորմեա» լացինք եւ ապա, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգով զիրար ողջունեցինք եւ լոյս եղայր, լոյս քոյր եղանք Անիի հրաշագեղ Եկեղեցւոյ բաց գմբեթին ներբեւ:

Անին գիտենք, կը ճանչնանք: 1989թ. Նիւ Եռոք մէջ՝ Անիի Մայր Տաճարի կառուցման 1000-ամեակի արիթրով, միջազգային գիտաժողով էի կազմակերպած, Սմբատ թագաւորի, Կարուանիոյ թագուհիի գովելը հիւսած ու Տրդատ ճարտարապետի հոչակը Այս Սոֆիային բարձր բռնած:

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ



Ուխտագնացության քարտեզ. 2000 թ.



Անի. Արուղամբենց եկեղեցի



Վանա կատուն Վանա լճի ափին